# ՀՖՖ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

## Մրցաշրջան 2023-2024

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 4

ԳԼՈՒԽ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ..... 11

Հոդված 1. Կանոնակարգի առարկան, կիրառման շրջանակը և խնդիրները ..... 11

Հոդված 2. Մրցումների նպատակը և խնդիրները ..... 11

Հոդված 3. Մրցումների բարեվարքային համակարգը ..... 12

Հոդված 4. ՀՖՖ գործառույթները ..... 13

Հոդված 5. Մրցաշրջանի ընթացքում ակումբների պարտականությունները ..... 15

Հոդված 6. Մրցումներին մասնակցության չափանիշները ..... 18

Հոդված 7. Մրցումներին մասնակցության համար դիմելու կարգը ..... 19

Հոդված 8. Մրցումների մասնակցության մուտքավճարը ..... 20

Հոդված 9. «Արդար խաղը» և գնահատման կարգը ..... 21

Հոդված 10. Պարգևատրումը ..... 21

ԳԼՈՒԽ 2: ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ..... 24

Հոդված 11. Մրցումների վայրը ..... 24

Հոդված 12. Մրցումների անցկացման կարգը ..... 25

Հոդված 13. Մրցաշարային աղյուսակում թիմերի դասակարգումը ..... 26

Հոդված 14. Խաղացանկը և անցկացման ժամկետները ..... 27

Հոդված 15. Վիճարկում ..... 29

ԳԼՈՒԽ 3: ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ ..... 30

Հոդված 16. Սպասարկող անձնակազմի նշանակումը ..... 30

Հոդված 17. Սպասարկման իրականացումը ..... 30

Հոդված 18. Սպասարկող անձնակազմի անդամների գործառույթները ..... 31

Հոդված 19. Հանդիպման պատվիրակը ..... 32

ԳԼՈՒԽ 4. ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ԵՎ ԹԻՄԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԵՐԻ ՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ ..... 36

Հոդված 20. Ֆուտբոլիստների և թիմերի անձնակազմերի հայտավորումը և վերահայտավորումը ..... 36

Հոդված 21. Ֆուտբոլիստների բժշկական և դոպինգ ստուգումը ..... 42

**ԳԼՈՒԽ 5: ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ..... 45**

Հոդված 22. Խաղի անցկացման կարգը ..... 45

Հոդված 23. Դաշտի տեր ակումբի պարտականությունները ..... 45

Հոդված 24. Լռության րոպե, սոցիալական և հասարակական նշանակության, ռասիզմի դեմ պայքարի և արդար խաղի միջոցառումները ..... 51

Հոդված 25. Չկայացած և անավարտ խաղերը ..... 52

Հոդված 26. Թիմերի չներկայանալը խաղին, առաջնություններին մասնակցությունից հրաժարվելը կամ առաջնություններից հեռացվելը ..... 56

Հոդված 27. Նախախաղային խորհրդակցությունը ..... 59

Հոդված 28. Առանձնահատկություններ՝ կախված եղանակային պայմաններից ..... 60

Հոդված 29. Մարզադաշտի հաշվի լուսատախտակը ..... 61

Հոդված 30. Մարզադաշտի անվտանգությունն ու ապահովումը ..... 61

**ԳԼՈՒԽ 6: ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ԵՎ ԹԻՄԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ ..... 65**

Հոդված 31. Ֆուտբոլիստների և թիմի անձնակազմի մասնակցությունը ..... 65

Հոդված 32. Խաղի արձանագրություն ..... 68

Հոդված 33. Ֆուտբոլիստների փոխարինումները ..... 69

**ԳԼՈՒԽ 7: ՄԱՐԶԱՀԱԳՈՒՍՏԸ ..... 72**

Հոդված 34. Մարզահագուստի գույները ..... 72

Հոդված 35. Խաղահամարները ..... 72

Հոդված 36. Մարզահագուստի ազգանունները ..... 73

Հոդված 37. Մարզահագուստի վրա տեղադրված գովազդը ..... 73

Հոդված 38. Խաղի մարզահագուստների հաստատումը ..... 74

**ԳԼՈՒԽ 8: ՄԵԴԻԱ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳ ..... 76**

Հոդված 39. Բրենդավորում և հովանավորներ ..... 76

Հոդված 40. Խաղերի հեռարձակումը ..... 78

Հոդված 41. Ֆլեշ հարցազրույցների և մամուլի ասուլիսների կազմակերպումը ..... 79

Հոդված 42. ԶԼՄ-ների հավատարմագրումը և տեղակայումը մարզադաշտում ..... 80

ԳԼՈՒԽ 9: ԱԿՈՒՄԲԻ ԱՆՎԱՆՄԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ..... 81

Հոդված 43. Ակումբի ինքնության և իրավական խմբի կառուցվածքի փոփոխությունը ..... 81

Հոդված 44. Ակումբի ինքնության (ակումբի անվանում, թիմի անվանում, տարբերանշան, գույներ, իրավաբանական հասցե) փոփոխությունը և դրա գրանցումը ՀՖՖ-ում ..... 81

Հոդված 45. Ակումբի վերակազմակերպումը կամ իրավական խմբի կառուցվածքի փոփոխությունները ..... 84

Հոդված 46. Իրավահաջորդությունը ..... 86

ԳԼՈՒԽ 10: ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ ..... 87

Հոդված 47. Պայմանագրի գրանցումը ..... 87

Հոդված 48. Վեճերի լուծումը ..... 87

Հոդված 49. Թիմերի մասնակցությունը ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին ..... 87

Հոդված 50. Այլ դրույթներ ..... 88

ՀԱՎԵԼՎԱԾ 1: ԽԱՂԱԴԱՇՏԻ ԳԾԱԳԻՐԸ ..... 89

ՀԱՎԵԼՎԱԾ 2: 2023-2024 ՄՐՑԱՇՐՋԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՎԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ..... 90

ՀԱՎԵԼՎԱԾ 3: ԽԱՂԱԴԱՇՏԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՆԱԽԱՎԱՐԺԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ ..... 92

ՀԱՎԵԼՎԱԾ 4: ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ VAR ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ..... 93

# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| **ՀՖՖ** | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն |
| **ՖԻՖԱ** | Ֆուտբոլի միջազգային ասոցիացիաների ֆեդերացիա |
| **ՈՒԵՖԱ** | Ֆուտբոլի եվրոպական ասոցիացիաների միություն |
| **ԻՖԱԲ** | Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային խորհուրդ |
| **ՀՊԼ/ՀՊԼ** | Հայաստանի Պրեմիեր լիգա |
| **ԱԽ** | ՀՀ առաջին խումբ |
| **ՀԳԽ/ՀԳԽ** | Հայաստանի Գավաթի խաղարկություն |
| **ՍԳԽ** | Սուպերգավաթի խաղարկություն |
| **Ազգային արտոնագիր** | Ակումբին՝ «ՀՖՖ ակումբների արտոնագրման կանոնակարգի» համաձայն շնորհվող վկայական |
| **Ակումբ** | Մարզական առումով ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի կանոնակարգերին և սահմանված կիրառելի և վերաբերելի նորմերին ենթարկվող ֆուտբոլային մարզական ակումբ (թիմ), որը մասնակցում է կամ ցանկանում է մասնակցել ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող ֆուտբոլային մրցումներին |
| **Ակումբի պաշտոնյա** | Ակումբի աշխատակից՝ բացառությամբ ֆուտբոլիստների և թիմի անձնակազմի անդամների, ով ֆուտբոլային ակումբի հետ գտնվում է աշխատանքային հարաբերությունների մեջ և/կամ ներառված է ակումբի իրավական խմբի կառուցվածքում և/կամ գրանցված է ՀՖՖ |

| | |
|---|---|
| | Ֆուտբոլի կառավարման համակարգում՝ որպես ակումբի պաշտոնյա |
| **Առաջնություն** | Տվյալ մրցաշրջանի պրոֆեսիոնալ ֆուտբոլի ՀՊԼ և ԱԽ ակումբների միջև անցկացվող ՀՀ ֆուտբոլի առաջնություն |
| **Արտակարգ իրավիճակ/ Ֆորս-մաժոր** | Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք առաջացել են հանդիպման մասնակցի և կազմակերպչի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), համաճարակները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները, գործադուլները, որոնք խոչընդոտում են ֆուտբոլային հանդիպման՝ պատշաճ և ըստ նախատեսվածի կազմակերպմանը և/կամ անցկացմանը |
| **Դոպինգ ստուգում** | վիճակահանության արդյունքում ընտրված առաջնության մասնակից խաղացողներին և ակումբներին իրազեկում՝ վիճակահանությամբ ընտրված խաղացողների մասին, տվյալ խաղացողներից կենսաբանական նմուշների ստացում և դրանց հետագա հետազոտություն՝ ֆուտբոլիստների օրգանիզմում խթանիչ և/կամ այլ արգելված միջոցների առկայության ստուգման համար, ինչն ուղեկցվում է |

| | |
|---|---|
| | համապատասխան փաստաթղթերի ստորագրմամբ |
| **Թիմի անձնակազմ** | Ակումբի աշխատակիցներ, այդ թվում՝ մարզչական, տեխնիկական և ղեկավար անձնակազմի անդամներ, ովքեր հայտավորված են՝ ՀՖՖ-ի պրոֆեսիոնալ մրցումներին մասնակցելու նպատակով |
| **Խաղացանկ** | Խաղային օրերի ժամանակացույց |
| **Խաղային գոտի** | Ֆուտբոլային խաղադաշտը շրջապատող տարածք՝ փոխարինող խաղացողների, մրցավարի օգնականների, 4-րդ պաշտոնյայի, գնդակներ վերադարձնող պատանի ֆուտբոլիստների, հիմնական հեռարձակողի ներկայացուցիչների, հավաստագրված ֆոտոլրագրողների, բժշկական անձնակազմի, անվտանգության աշխատակիցների և պաշտոնատար անձանց տեղակայման համար |
| **Խաղաշրջան** | Ֆուտբոլային տարվա կտրվածքով առաջին պաշտոնական խաղով մեկնարկող և վերջին պաշտոնական խաղով ավարտվող ժամանակաշրջան |
| **Խաղի ժամանակահատված** | Խաղասկզբից 2 ժամ առաջ, խաղի ժամանակ, ընդմիջմանը և խաղից 1 ժամ հետո ընկած ժամանակահատված |
| **Խաղի կանոններ** | «Ֆուտբոլ խաղի» գործող կանոններ՝ ըստ ԻՖԱԲ-ի |
| **Խառը գոտի** | Ֆուտբոլային հանդիպումից հետո հանդիպման մասնակից ակումբների մարզիչների և/կամ ֆուտբոլիստների հետ հարցազրույց անցկացնելու նպատակով հավատարմագրված ԶԼՄ-ների համար նախատեսված տարածք |

| | |
|---|---|
| **Կանոնակարգ** | ՀՖՖ պրոֆեսիոնալ մրցումների անցկացման կանոնակարգ (2023-2024 մրցաշրջան) |
| **Համապատասխանելիության հավաստագիր** | «ՀՖՖ ենթակառուցվածքային կանոնակարգի» չափանիշների համաձայն՝ ՀՖՖ-ի կողմից տրվող համապատասխան փաստաթուղթ |
| **Հանդիպման (խաղի) կազմակերպիչ** | Դաշտի տեր ակումբ, որն ապահովում է ֆուտբոլային հանդիպման կազմակերպման և անցկացման աշխատանքները |
| **Հանդիպման (խաղի) մասնակից** | Ֆուտբոլիստ, թիմի անձնակազմ, ֆուտբոլային հանդիպումը սպասարկող անձնակազմ և հանձնակատար |
| **Հայաստանի ազգային/տարբեր տարիքային հավաքականների անդամ** | Ֆուտբոլիստներ, որոնք տվյալ մրցաշրջանին նախորդող 3 տարիների ընթացքում մասնակցել են ազգային/տարբեր տարիքային հավաքականների հավաքներին և/կամ խաղերին |
| **Հայաստանի Հանրապետությունում մարզված ֆուտբոլիստներ** | Ֆուտբոլիստներ, որոնք 15-ից 21 տարեկանը գրանցված են եղել ՀՀ տարածքում գրանցված որևէ ակումբում կամ ակումբներում՝ նվազագույնը 3 խաղաշրջան կամ 36 ամիս |
| **Հեռարձակում** | Ֆուտբոլային հանդիպման՝ մարզադաշտից տեսանկարահանման և հեռուստաթերթերի տրամադրման, ինչպես նաև համացանցի միջոցով հեռարձակող կազմակերպության առցանց հարթակով հանդիպումների ուղիղ հեռարձակման ապահովում |
| **Հիմնական հեռարձակող** | Արտոնագրված ընկերություն, որը ՀՖՖ-ի հետ կնքված համապատասխան պայմանագրի հիման վրա իրավունք ունի |

| | |
|---|---|
| | կազմակերպել խաղերի հեռարձակումը, ինչի համար իրավունք ունի ներգրավել երրորդ կողմի, որը տվյալ պարագայում կօգտվի հիմնական հեռարձակողի լիազորություններից: |
| **Հյուր թիմ** | Հակառակորդի՝ հանդիպման կազմակերպչի դաշտում խաղին մասնակցող թիմ |
| **ՀՊԼ հովանավոր (գործընկեր)** | ՀՖՖ-ի հետ ՀՊԼ-ին վերաբերող հովանավորչական (գործընկերական) պայմանագիր ստորագրած իրավաբանական անձ |
| **ՀՖՖ Գործադիր կոմիտե** | ՀՖՖ-ի կանոնադրությամբ նախատեսված կոլեգիալ կառավարման մարմին |
| **ՀՖՖ ՄԿԱ բաժին** | Մրցումները կազմակերպող և անցկացնող մարմին |
| **ՀՖՖ Մրցավարական և տեսչական բաժին** | Հանդիպման մրցավարներին և տեսուչին նշանակող մարմին |
| **ՀՖՖ նույնականացման քարտի համար (ID)** | Ֆուտբոլային օբյեկտների և սուբյեկտների անհատական համար, որը տրվում է Ֆուտբոլի կառավարման համակարգում գրանցվելիս |
| **ՀՖՖ պաշտոնյա** | ՀՖՖ-ի լիազորված հաստիքային աշխատակից, պատվիրակ, տեսուչ, հանձնակատար, կոմիտեի անդամ, հանձնաժողովների և ՀՖՖ-ի այլ իրավասու մարմինների անդամ |
| **Մարզադաշտ** | ՀՖՖ-ի կողմից համապատաս-խանելիության հավաստագիր ստացած մարզական շինություն, որտեղ անցկացվում է ֆուտբոլային հանդիպումը |
| **Մարզադաշտի սեփականատեր/** | Իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը հանդիսանում է այն մարզադաշտի |

| | |
|---|---|
| **օրինական տիրապետող** | սեփականատերը կամ օրինական տիրապետողը, որտեղ անցկացվում է տվյալ հանդիպումը (խաղը) |
| **Մրցաշրջան** | Ժամանակաշրջան, որը մեկնարկում է օրացուցային տվյալ տարվա հուլիսի 1-ին և ավարտվում հաջորդ տարվա հունիսի 30-ին |
| **Սպասարկող անձնակազմ** | Մրցավար, մրցավարի օգնական, չորրորդ պաշտոնյա, պատվիրակ, տեսուչ, մրցավարի վիդեո օգնական (VAR) և VAR օգնական |
| **Մրցավար** | Խաղի ՀՖՖ-ի կողմից նշանակված մրցավար |
| **Մրցավարի օգնական** | Խաղի մրցավարի՝ ՀՖՖ-ի կողմից նշանակված օգնական |
| **Մրցավարի վիդեո օգնական համակարգ (VAR համակարգ)** | Տեխնոլոգիական պարագաներ և միջոցներ, որոնք թույլ են տալիս տեսագրել ուղիղ եթերի հեռարձակողի բոլոր տեսախցիկները՝ հետագայում հավաստագրված օպերատորի կողմից կրկնապատկերը ստանալու և մրցավարների որոշմանը օգնելու նպատակով: VAR-ը համակարգ է, որը օգնում է մրցավարին միայն «պարզ և ակնհայտ սխալի» կամ «լուրջ բաց թողնված միջադեպի» դեպքում: |
| **Մրցումներ** | ՀՖՖ հովանու ներքո անցկացվող մրցաշարեր՝ Հայաստանի Պրեմիեր լիգա, Առաջին խմբի առաջնություն, Հայաստանի Գավաթի խաղարկություն, Սուպերգավաթի խաղարկություն |
| **Չորրորդ պաշտոնյա** | Խաղի՝ ՀՖՖ-ի կողմից նշանակված չորրորդ պաշտոնյա |

| | |
|---|---|
| **Պաշտոնական խաղեր** | Կազմակերպված ֆուտբոլի շրջանակներում անցկացվող խաղեր՝ ազգային առաջնությունների, գավաթի խաղարկության, միջազգային ակումբային մրցաշարերի հանդիպումներ |
| **Պատվիրակ** | Խաղի կազմակերպման և անցկացման հարցերով պատասխանատու |
| **Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ (խաղացող)** | Պրոֆեսիոնալ կարգավիճակ ունեցող ֆուտբոլիստ, ով հայտավորված է տվյալ առաջնությանը մասնակցության նպատակով |
| **Տեսուչ** | ՀՖՖ-ի՝ մրցավարի, մրցավարի օգնականների, և չորրորդ պաշտոնյայի գործողությունները գնահատող ներկայացուցիչ |
| **Ֆլեշ հարցազրույց** | Հարցազրույց խաղասկզբից առաջ, խաղակեսում կամ խաղավարտից հետո խաղի մասնակից թիմերի մեկական մարզչի ու խաղացողի հետ՝ դրա համար խաղային գոտում հատուկ նշված վայրում |
| **Ֆուտբոլի կառավարման համակարգ (FMS)** | Էլեկտրոնային տեղեկատվական համակարգ, որը հնարավորություն է տալիս կատարել բոլոր գործառույթները, որոնք ընդգրկում են ֆուտբոլային ենթակառուցվածքների, ֆուտբոլային ակումբների, ֆուտբոլիստների, մրցումների կազմակերպման և անցկացման, նախախաղային և ետխաղային տվյալների կառավարումը |
| **Ֆուտբոլային սուբյեկտներ** | Պրոֆեսիոնալ ֆուտբոլում ներգրավված իրավաբանական և ֆիզիկական անձինք |

# ԳԼՈՒԽ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## Հոդված 1. Կանոնակարգի առարկան, կիրառման շրջանակը և խնդիրները

**1.01.** Սույն կանոնակարգը սահմանում է ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող մրցումների կազմակերպման և անցկացման սկզբունքները, Ֆուտբոլային սուբյեկտների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և այլ ընթացակարգային հարցերը տվյալ մրցումների ընթացքում, կարգավորում է պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումներին մասնակցող ակումբների իրավունքներն ու պարտականությունները:

**1.02.** Սույն կանոնակարգը վերաբերում է ՀՖՖ հովանու ներքո անցկացվող հետևյալ մրցաշարերին

- Հայաստանի Պրեմիեր Լիգային (այսուհետև՝ ՀՊԼ),
- Առաջին խմբի առաջնությանը (այսուհետև՝ ԱԽ),
- Հայաստանի Գավաթի խաղարկությանը (այսուհետև՝ ԳԽ) և
- Հակոբ Տոնոյանի անվան Սուպերգավաթի խաղարկությանը (այսուհետ՝ Սուպերգավաթ):

**1.03.** Կանոնակարգի խնդիրներն են՝

ա) Մրցումների կազմակերպման, անցկացման, ղեկավարման և հսկողության ընթացակարգերի սահմանումը,

բ) Մրցումների մասնակիցների համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և ապահովումը,

գ) Մրցումների համակարգի համապատասխանեցումը ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի հիմնարար փաստաթղթերի պահանջներին:

## Հոդված 2. Մրցումների նպատակը և խնդիրները

**2.01.** Մրցումների նպատակն է՝

ա) ՀՀ տարածքում պրոֆեսիոնալ ֆուտբոլի հետագա զարգացմանը նպաստելը,

բ) Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների վարպետության մակարդակի բարձրացմանը նպաստելը,

գ) Միջազգային մրցաշարերում ազգային հավաքականների և ակումբային թիմերի ելույթների բարելավմանը նպաստելը,

դ) «Արդար խաղի» սկզբունքների արմատավորմանը և կենսագործմանը նպաստելը:

**2.02.** Մրցումների խնդիրներն են՝

ա) Հայաստանի Պրեմիեր լիգայի թիմերի դասակարգումը՝ ըստ առաջնության արդյունքների,

բ) Առաջին խմբի առաջնության թիմերի դասակարգումը՝ ըստ առաջնության արդյունքների,

գ) Ֆուտբոլի մասսայականացումը,

դ) Մրցումների արդյունքներով գավաթակրի և նախորդ մրցաշրջանի սուպերգավաթակրի որոշումը,

ե) Մրցաշրջանի մրցանակակիրների որոշումը հետևյալ դասակարգմամբ՝

- Հայաստանի Պրեմիեր լիգայի լավագույն ռմբարկու,
- Հայաստանի Պրեմիեր լիգայի լավագույն ֆուտբոլիստ,
- Հայաստանի Պրեմիեր լիգայի լավագույն մարզիչ,
- Առաջին խմբի առաջնության լավագույն ռմբարկու,
- Հայաստանի Պրեմիեր լիգայի լավագույն մրցավար
- այլ մրցանակակիրներ:

## Հոդված 3. Մրցումների բարեվարքային համակարգը

**3.01.** Մրցումների բարեվարքային համակարգը ապահովելու նպատակով՝

ա) արգելվում է միևնույն իրավաբանական կամ ֆիզիկական անձի կամ նրա հետ փոխկապակցված անձանց կողմից ֆինանսավորվող մեկից ավելի ակումբների մասնակցությունը ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների տվյալ առաջնությանը,

բ) արգելվում է որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի ուղղակի կամ անուղղակի միաժամանակյա ցանկացած ներգրավվածությունը ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների տվյալ առաջնությանը մասնակից մեկից ավելի ակումբների վարչական և/կամ մարզական ղեկավարմանը,

գ) արգելվում է որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի ցանկացած վերահսկողությունը կամ այլ կերպ դրսևորվող ազդեցությունը ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների տվյալ առաջնությանը մասնակից մեկից ավելի ակումբների նկատմամբ:

**3.02.** Արգելվում է ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումներին մասնակից ակումբների և/կամ ֆուտբոլային բոլոր սուբյեկտների կողմից պայմանավորված խաղեր կազմակերպելը, կազմակերպման փորձ կատարելը, հանդիպումների արդյունքի վրա նպատակաուղղված ցանկացած գործողություն կատարելը կամ այդ արարքների մասին իմանալը և ՀՖՖ-ին չհայտնելը:

**3.03.** Սույն հոդվածի 3.01 մասի «ա» կետի իմաստով անձի փոխկապակցված լինելու հանգամանքը որոշում է ՀՖՖ-ն՝ հիմք ընդունելով ՀՀ օրենսդրության, ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի կանոնակարգերի դրույթները և իր տրամադրության տակ առկա փաստական տվյալները:

## Հոդված 4. ՀՖՖ գործառույթները

**4.01.** Առաջնությունների կազմակերպումն ու վերահսկումը իրականացվում է ՀՖՖ-ի կողմից՝ հիմնվելով ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի կողմից ճանաչված, առաջնությունների հետ կապված բացառիկ իրավասությունների վրա:

**4.02.** ՀՖՖ-ն իրականացնում է մրցումների ընդհանուր ղեկավարումը, մասնավորապես՝

- հաստատում է մրցումների անցկացման կանոնակարգը և խաղացանկերը,
- սահմանում և հաստատում է մրցումների մասնակցության մուտքավճարների չափերը,
- հաստատում է ակումբների և թիմերի գրանցման հայտերը,
- հաստատում է մրցումների մասնակից թիմերի տնային հանդիպումների անցկացման մարզադաշտերի հայտերը,

– հաստատում է մրցումների մասնակից ֆուտբոլային սուբյեկտների միջև իրավահարաբերությունները կարգավորող փաստաթղթերը

- հաստատում է մրցումների մասնակից թիմերի հավաստագրման հայտերը,

- հաստատում է թիմերի անձնակազմի անդամների և ֆուտբոլիստների աշխատանքային պայմանագրերի հայտերը,

- հաստատում է թիմերի անձնակազմի անդամների և ֆուտբոլիստների գրանցման հայտերը,

- հաստատում է թիմերի անձնակազմի անդամների և ֆուտբոլիստների հայտավորումը,

- տպագրում և տրամադրում է ՀՖՖ նույնականացման քարտեր թիմերի անձնակազմի անդամների և ֆուտբոլիստների համար,

- հաստատում է մրցումները սպասարկող մրցավարների, VAR օպերատորների, տեսուչների և պատվիրակների կազմը,

- կազմակերպում է խաղերը և իրականացնում դրանց նկատմամբ հսկողությունը,

- կազմակերպում և տնօրինում է խաղերի հեռարձակումը,

- ամփոփում է հանդիպումների արդյունքները,

- հաստատում է առաջնությունների արդյունքները և իրականացնում մրցանակակիրների պարգևատրումը,

- հաստատում է Հայաստանի Պրեմիեր լիգայի պաշտոնական գնդակը և բոլոր մասնակից ակումբներին խաղաշրջանի մեկնարկից նվազագույնը 10 օր առաջ տրամադրում է գնդակներ: Տվյալ առաջնության բոլոր հանդիպումները անցկացվում են ՀՖՖ-ի կողմից տրամադրված պաշտոնական գնդակներով,

- յուրաքանչյուր մրցաշրջանից առաջ հաստատում և ակումբներին է ուղարկում ակումբների՝ առաջնություններին մասնակցության հավաստագիր ներկայացնելու կարգը,

- հաստատում է խաղի պաշտոնյաների վարձատրության գումարը,

- իրականացնում է սույն կանոնակարգով նախատեսված դեպքերում և կարգով հանդիպումների հետաձգումը (դրանց անցկացման ամսաթվի, մեկնարկի ժամանակի և վայրի փոփոխություն),

- իրականացնում է վերահսկողություն կիրառելի և վերաբերելի կանոնակարգերի շրջանակներում,

- ապահովում է Ֆուտբոլի կառավարման համակարգ խաղերի բոլոր տվյալների, այդ թվում դրանց վերաբերյալ կայացված որոշումների և պարտադիր կատարման ենթակա այլ տեղեկացումների մուտքագրումը,

- ապահովում է դոպինգ հսկողություն իրականացնելու հնարավորության կարգը, իրականացնում է մրցումների կազմակերպումից բխող այլ գործառույթներ:

## Հոդված 5. Մրցաշրջանի ընթացքում ակումբների պարտականությունները

**5.01.** Մրցաշրջանի ընթացքում ակումբները, ակումբի ֆուտբոլիստները, թիմի անձնակազմը, պաշտոնյաները և այլ անձինք, ովքեր փոխկապակցված են տվյալ ակումբի հետ, պարտավոր են՝

ա) անշեղորեն հետևել գործող ԻՖԱԲ խաղի կանոններին, ՀՖՖ Կանոնադրությանը, կանոնակարգերի դրույթներին և ընդունել, կատարել ՀՖՖ Գործադիր կոմիտեի, ՀՖՖ վարչական անձնակազմի, ՀՖՖ այլ մարմինների կողմից ընդունված և պատշաճ կերպով ծանուցված որոշումները, շրջաբերականները: Պատշաճ է համարվում ներքոնշյալ՝ առձեռն՝ ակումբի ղեկավար անձնակազմի համապատասխան պաշտոնատար անձի ստորագրությամբ, փոստով, ակումբի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով, ՀՖՖ Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով կամ ՀՖՖ պաշտոնական վեբ կայքում (www.ffa.am) հրապարակման միջոցով ծանուցումը, ընդ որում, պատշաճ է համարվում նշված միջոցներից ինչպես մեկով, այնպես էլ մի քանիսով կամ բոլորով կատարված ծանուցումը: Առանձին դեպքերում սույն և ՀՖՖ այլ կանոնակարգերով կարող են սահմանվել այդ կանոնակարգ(եր)ի շրջանակներում ծանուցման հիմնական եղանակ(ներ),

բ) Ֆուտբոլի կառավարման համակարգի՝ որպես էլեկտրոնային տեղեկատվական գործիքի տեխնիկական կամ այլ եղանակով խափանման դեպքում առաջնորդվել բացառապես ՀՖՖ, ՖԻՖԱ և ՈՒԵՖԱ կանոնակարգերի դրույթներով և իրացնել

իրավունքներն և պարտականությունները դրանցող սահմանված կարգով և ժամկետներում,

գ) տեղեկացնել ՀՖՖ-ին ֆուտբոլային միջազգային կարգապահական կամ ազգային պետական դատարաններում ցանկացած վարույթի և դրա արդյունքների մասին, որի շրջանակներում ակումբները, ֆուտբոլիստները, թիմի անձնակազմը կամ նրանց պաշտոնյաները ազգային կամ միջազգային մակարդակով ներգրավված են հանդիպման/հանդիպումների արդյունքի վրա նպատակաուղղված ցանկացած գործողության կազմակերպման և ազդեցության մեջ անկախ նրանից՝ ակումբը կամ նրա պաշտոնյան իրեն պատասխանատու կամ մեղավոր համարում է թե՝ ոչ,

դ) Եթե ակումբի կողմից ներկայացված փաստաթղթերի քննության արդյունքում ՀՖՖ-ն եզրակացնում է, որ ակումբի և/կամ նրա պաշտոնյայի կողմից ուղղակի կամ անուղղակի իրականացվել է ազգային և/կամ միջազգային հանդիպման/հանդիպումների արդյունքի/արդյունքների վրա նպատակաուղղված կազմակերպման և ազդեցության ցանկացած գործողություն, ապա ՀՖՖ-ն կարող է արգելել այդ ակումբին հանդես գալ իր հովանու ներքո անցկացվող մրցումներում: Նման որոշում կայացնելիս՝ ՀՖՖ-ն կարող է, բայց պարտավորված չէ, հիմնվել ազգային կամ միջազգային սպորտային իրավասու մարմինների, արբիտրաժային դատարանի կամ պետական դատարանների որոշումների վրա: ՀՖՖ-ն կարող է ձեռնպահ մնալ ակումբին մրցումներին մասնակցելու իրավունքից զրկելուց, եթե ՀՖՖ-ն համոզված է, որ ազգային կամ միջազգային մարզական մարմնի, արբիտրաժային դատարանի կամ պետական դատարանի կողմից նույն փաստական հանգամանքների հիման վրա ընդունված որոշումով ակումբն արդեն իսկ չի կարողանա մասնակցել ՀՖՖ մրցումներին:

ե) տարեկան առնվազն երկու անգամ՝ 1-ինը մինչև տվյալ խաղաշրջանում տվյալ թիմի առաջին պաշտոնական խաղը, 2-րդը՝ մինչև տվյալ խաղաշրջանի 2-րդ մասում տվյալ թիմի առաջին պաշտոնական խաղը, ապահովել ֆուտբոլիստների բժշկական հետազոտությունը, ինչը պետք է մուտքագրվի ՀՖՖ Ֆուտբոլի կառավարման համակարգում և ՀՖՖ կողմից գործարկվող՝ ֆուտբոլիստների բժշկական պատմության հավաքագրման և վերահսկման այլ՝ պաշտանական համակարգում,

զ) վարել ֆուտբոլիստների ստացած դեղին և կարմիր քարտերի հաշվառումը և ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի համապատասխան հոդվածի կետերով նախատեսված խախտումներ հայտնաբերելու դեպքերում՝ կիրառել այդ Կանոնակարգով նախատեսված պատժամիջոցները՝ առանց ՀՖՖ-ի Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշման,

է) Մրցումներին մասնակցող ֆուտբոլիստ(ներ)ի/թիմի անձնակազմի անդամ(ներ)ի՝ խաղի ժամանակահատվածում կարմիր քարտ ստանալու դեպքում վերջիններս ավտոմատ կերպով բաց են թողնում նվազագույնը մեկ խաղ՝ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգով սահմանված կարգով, մինչև ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն կկայացնի որոշում բաց թողնվելիք խաղերի վերջնական քանակի և ժամկետի վերաբերյալ:

ը) առաջնությունների առաջին մրցափուլի խաղային օրվանից նվազագույնը 1 օր առաջ մարզադաշտերում պետք է բարձրացված լինեն ՀՀ, ՀՖՖ և ՀՊԼ/ԱԽ դրոշները, որոնք պետք է բարձրացված մնան մարզադաշտերում ամբողջ խաղաշրջանի ընթացքում:

**5.02.** Ակումբները պատասխանատու են՝

ա) խաղի արձանագրությունում նշված ֆուտբոլիստների և թիմի անձնակազմի՝ խաղին մասնակցելու իրավասության համար (տվյալ խաղի արձանագրությունում նշված լինելը համարվում է տվյալ խաղին մասնակցություն),

բ) խաղի ժամանակահատվածում իրենց ֆուտբոլիստների, վարչական անձնակազմի, ինչպես նաև իրենց երկրպագուների՝ ՀՖՖ կանոնակարգերով արգելված, անօրինական, անթույլատրելի, ոչ սպորտային և անվայել գործողությունների համար,

գ) մարզադաշտում գտնվող շինությունների, հանդերձարանների և այլ գույքի պատշաճ օգտագործման և դրանց՝ մինչև օգտագործումն առկա վիճակի պահպանման համար,

դ) ՀՖՖ-ին ոչ հավաստի տեղեկություն ներկայացնելու համար:

**5.03.** Ակումբներին արգելվում է՝

ա) միջամտել խաղը սպասարկող անձնակազմի գործողություններին, այն է՝ կատարել այնպիսի գործողություն կամ դրսևորել անգործություն, որը խոչընդոտում է կամ կարող է խոչընդոտել խաղը սպասարկող անձնակազմի բնականոն գործունեությանը կամ կարող է ազդել խաղի մեկնարկի, ընթացքի կամ ելքի վրա,

բ) ներկայացնել ՀՖՖ-ն կամ օգտագործել ՀՖՖ-ի դրոշը և խորհրդանշանը (տարբերանշանը)՝ բացառությամբ ՀՖՖ-ի կողմից տրված գրավոր թույլտվության առկայության դեպքերի,

գ) մրցումների շրջանակներում և հրապարակային գործողություններ կատարելիս օգտագործել ակումբի այնպիսի անվանում կամ խորհրդանշան (տարբերանշան) (այդ

թվում՝ կոմերցիոն գործընկերոջ անվանում), որը ՀՖՖ-ում գրանցված չէ տվյալ ակումբի անվամբ:

## Հոդված 6. Մրցումներին մասնակցության չափանիշները

**6.01.** Մրցումներին կարող են մասնակցել այն ակումբները, որոնք ունեն իրավաբանական անձի կարգավիճակ, ընդունում են ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի հիմնարար սկզբունքները, կանոնադրություններն ու կանոնակարգերը, ՀՖՖ-ի նկատմամբ չունեն չկատարված պարտավորություն(ներ), այդ թվում՝ չվճարված տուգանք կամ չմարված կարգապահական տույժ, և պարտավորվում են կատարել վերոնշյալ կազմակերպությունների, ինչպես նաև սույն կանոնակարգի պահանջները:
Սույն կետի իմաստով ՀՖՖ-ն իրավասու է իր նկատմամբ չկատարված պարտավորությունների առկայության դեպքում թույլատրել ակումբ(ներ)ին մասնակցել Մրցումներին՝ սահմանելով պարտավորությունների կատարման ողջամիտ ժամկետ, որը չպետք է լինի ավելի, քան տվյալ մրցման տևողության 50%-ը:

**6.02.** Հայաստանի Պրեմիեր լիգային կարող են մասնակցել ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի պահանջների համաձայն Ազգային արտոնագիր ստացած և մարզական առումով համապատասխան որակավորում ունեցող ակումբների առաջին թիմերը:

**6.03.** Առաջին խմբի առաջնությանը կարող են մասնակցել ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի պահանջների համաձայն Առաջին խմբի արտոնագիր ստացած և մարզական առումով համապատասխան որակավորում ունեցող ակումբների առաջին թիմերը, ինչպես նաև Ազգային արտոնագիր ստացած ակումբների դուստր թիմերը:

**6.04.** Եթե ակումբը որակավորվել և ստացել է համապատասխան արտոնագիր, բայց հրաժարվում է մասնակցել ՀՖՖ պրոֆեսիոնալ մրցումներին, ապա այլ ակումբ չի կարող նրա արտոնագրով մասնակցել ՀՖՖ մրցումներին (արտոնագիրը փոխանցելի չէ):

**6.05.** Հայաստանի Պրեմիեր լիգային կարող է մասնակցել առավելագույնը 10 թիմ: Հայաստանի Պրեմիեր լիգայի մասնակից թիմերի քանակը կարող է փոփոխվել մրցաշրջանից առաջ՝ ՀՖՖ-ի գործադիր կոմիտեի համապատասխան որոշմամբ:

**6.06.** Հայաստանի Պրեմիեր լիգայում մրցաշրջանի արդյունքներով մրցաշարային աղյուսակում վերջին տեղը զբաղեցրած թիմը կորցնում է Պրեմիեր լիգայի հաջորդ մրցաշրջանում հանդես գալու իր իրավունքը և հաջորդ մրցաշրջանում կարող է մասնակցել միայն Առաջին խմբի առաջնությանը: Առաջին խմբի առաջնության մրցաշրջանի արդյունքներով մրցաշարային աղյուսակում առաջին տեղը զբաղեցրած թիմը հաջորդ մրցաշրջանում իրավունք է ստանում մասնակցելու Հայաստանի Պրեմիեր լիգային:

Եթե Առաջին խմբի առաջնության մրցաշրջանի արդյունքներով մրցաշարային աղյուսակում առաջին տեղը զբաղեցրած թիմի ակումբը ներկայացված է Հայաստանի Պրեմիեր լիգայում, ապա Հայաստանի Պրեմիեր լիգային հաջորդ մրցաշրջանում մասնակցելու իրավունք ստանում է Առաջին խմբի առաջնության մրցաշրջանի արդյունքներով մրցաշարային աղյուսակում երկրորդ տեղ զբաղեցրած թիմի ակումբը:

Եթե երկրորդ տեղը զբաղեցրած թիմի ակումբը ևս ներկայացված է Հայաստանի Պրեմիեր լիգայում, ապա այդ իրավունքը փոխանցվում է երրորդ տեղը զբաղեցրած թիմին:

Եթե երրորդը տեղը զբաղեցրած թիմի ակումբը ևս ներկայացված է Հայաստանի Պրեմիեր լիգայում, ապա Առաջին Խմբի մրցաշարային աղյուսակում ավելի բարձր տեղ գրված թիմը անցումային խաղ է անցկացնում Հայաստանի Պրեմիրեր լիգայի մրցաշարային աղյուսակում վերջին տեղ զբաղեցրած թիմի հետ, որի կազմակերպման և անցկացման պատասխանատուն ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտն է:

**6.07.** Հայաստանի Գավաթի խաղարկությանը մասնակցելու իրավունք ունեն սույն կանոնակարգի Հավելված 2-ում նշված պահանջներին համապատասխանող թիմերը:

## Հոդված 7. Մրցումներին մասնակցության համար դիմելու կարգը

**7.01.** Մրցումներին մասնակցելու համար մասնակից ակումբները պետք է անցնեն հավաստագրման գործընթաց Ֆուտբոլի կառավարման համակարգում սահմանված ժամկետներում՝ ըստ պահանջվող փաստաթղթերի: Հաջորդ մրցաշրջանի (2024-2025թթ.) հավաստագրման գործընթացը սկսվում է հունիսի 1-ից մինչև հունիսի 20-ը՝ բացառությամբ ֆորս մաժորային իրավիճակների: Հավաստագրման վերաբերյալ մանրամասները՝ պահանջվող փաստաթղթերի ցանկը, վերջնաժամկետներն ու կարգը սահմանվում են ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի կողմից և հավաստագրվելուց առնվազն երեք օր առաջ շրջաբերական նամակով ուղարկվում են Հայաստանի Պրեմիեր լիգայի,

Առաջին խմբի առաջնության և Հայաստանի Գավաթի խաղարկության մասնակից ակումբներին:

**7.02.** Եթե ակումբի կողմից Հայաստանի Պրեմիեր լիգային, Առաջին խմբի առաջնությանը կամ Հայաստանի Գավաթի խաղարկությանը մասնակցելու համար ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՖՖ կողմից Ֆուտբոլի կառավարման համակարգի սահմանված պահանջներին, ապա դրանք չեն ընդունվում ՀՖՖ ՄԿԱ բաժնի կողմից, որի մասին ակումբը ծանուցվում է Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով, որից հետո ակումբը կարող է համալրել փաստաթղթերը և/կամ ուղղել առկա այլ սխալները Ֆուտբոլի կառավարման համակարգում՝ սահմանված ժամկետների և պահանջներին համապատասխան: Ֆուտբոլի կառավարման համակարգում սահմանված ժամկետներից դուրս ներկայացված հավաստագրման հայտերը մերժվում են ՀՖՖ ՄԿԱ բաժնի կողմից, և տվյալ ակումբը կարող է զրկվել տվյալ առաջնությանը մասնակցելու իրավունքից, ինչի վերաբերյալ տեղեկատվությունը շրջաբերականով ուղարկվում է մասնակից ակումբների պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեներին:

## Հոդված 8. Մրցումների մասնակցության մուտքավճարը

**8.01.** Մրցումների մասնակցության մուտքավճարները կազմում են՝

ա) Հայաստանի Պրեմիեր լիգա՝ 4,500,000 (չորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ,

բ) Առաջին խմբի առաջնություն՝ 1,500,000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ,

գ) Հայաստանի Գավաթի և Սուպերգավաթի խաղարկություններին թիմերը մասնակցում են առանց մուտքավճարի:

**8.02.** Մուտքավճարների մուծման վերջնաժամկետն է տվյալ առաջնությանը մասնակցության հավաստագրի ներկայացման օրը:

**8.03.** Սույն հոդվածով սահմանված վճարումները կատարվում են անկանխիկ եղանակով՝ ՀՖՖ բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով, ընդ որում, փոխանցումը համարվում է կատարված ՀՖՖ հաշվեհամարին մուտքագրվելու օրը:

## Հոդված 9. «Արդար խաղը» և գնահատման կարգը

**9.01.** Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների շրջանակներում անցկացվող բոլոր խաղերը կազմակերպվում են ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի կանոնադրություններով նախատեսված «Արդար խաղի» սկզբունքների համաձայն:

**9.02.** Յուրաքանչյուր խաղի ավարտից հետո խաղի պատվիրակի կողմից գնահատվում է տվյալ խաղի մասնակից թիմերի «Արդար խաղի» ցուցանիշները:

**9.03.** «Արդար խաղի» գնահատումը կատարվում է 1-10 միավորային համակարգով՝ հետևյալ չափանիշների հիման վրա.

ա) տվյալ խաղի կարմիր և դեղին քարտերի քանակ,

բ) տվյալ խաղի մրցավարի նկատմամբ հարգալից վերաբերմունք,

գ) տվյալ խաղի մրցակցի նկատմամբ հարգալից վերաբերմունք,

դ) տվյալ խաղի թիմերի անձնակազմերի պահվածք,

ե) տվյալ խաղի հանդիսականների պահվածք:

**9.04.** Առաջնությանը մասնակից թիմերի «Արդար խաղի» դասակարգումը կատարվում է տարեկան մեկ անգամ՝ խաղաշրջանի ընթացքում վաստակած գնահատականների հանրագումարի արդյունքի հիման վրա:

## Հոդված 10. Պարգևատրումը

**10.01.** Հայաստանի Պրեմիեր լիգայի և Առաջին խմբի առաջնության ավարտից հետո ՀՖՖ-ն պարգևատրում է բոլոր մրցանակակիրներին:

**10.02.** Հայաստանի Գավաթի եզրափակչի ավարտից անմիջապես հետո մարզադաշտում ՀՖՖ-ն կազմակերպում և անցկացնում է պարգևատրման պաշտոնական արարողություն:

**10.03.** Մրցանակակիր ակումբները Հայաստանի Գավաթի խաղարկության եզրափակիչ խաղից մեկ օր առաջ, իսկ Հայաստանի Պրեմիեր լիգայի և Առաջին խմբի առաջնության ավարտից երկու օր հետո ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտին են ներկայացնում պարգևատրման ենթակա թիմի անձնակազմի և այն ֆուտբոլիստների ցուցակը, ովքեր

մրցաշրջանի ընթացքում մասնակցել են իրենց ակումբի անցկացրած 10%-ից ավել պաշտոնական խաղերին:

**10.04.** Հայաստանի Պրեմիեր լիգայում առաջին տեղը զբաղեցրած թիմին շնորհվում է տվյալ մրցաշրջանի «Հայաստանի չեմպիոն» կոչումը, իսկ ակումբը պարգևատրվում է հետևյալ մրցանակներով.

ա) Հայաստանի Պրեմիեր լիգայի գավաթ,

բ) 10,000,000 (տասը միլիոն) ՀՀ դրամ,

գ) 50 հատ ոսկե մեդալ:

**10.05.** Առաջին խմբի առաջնությունում առաջին տեղը զբաղեցրած թիմը պարգևատրվում է հետևյալ մրցանակներով.

ա) Առաջին խմբի առաջնության գավաթ,

բ) 40 հատ ոսկե մեդալ:

**10.06.** Հայաստանի Գավաթի խաղարկության եզրափակչում հաղթող թիմին շնորհվում է «Հայաստանի գավաթակիր» կոչումը, իսկ ակումբը պարգևատրվում է հետևյալ մրցանակներով.

ա) Հայաստանի Գավաթ,

բ) 6,000,000 (վեց միլիոն) ՀՀ դրամ,

գ) 50 հատ ոսկե մեդալ:

**10.07.** Հայաստանի Գավաթի խաղարկության եզրափակչում պարտվող թիմը, թիմի ֆուտբոլիստները, թիմի անձնակազմը և ակումբի պաշտոնյաները պարգևատրվում են արծաթե 50 մեդալներով:

**10.08.** Հայաստանի Գավաթի խաղարկության եզրափակիչ խաղը սպասարկող անձնակազմի անդամները պարգևատրվում են ՀՖՖ-ի դիպլոմներով:

**10.09.** Հայաստանի Պրեմիեր լիգայում «Արդար խաղի» առավել շատ միավորներ հավաքած թիմը պարգևատրվում է ՀՖՖ-ի համապատասխան մրցանակով, որը հանձնվում է տվյալ թիմի հաջորդ մրցաշրջանի առաջին պաշտոնական խաղից առաջ:

**10.10.** Հայաստանի Պրեմիեր լիգայի լավագույն ֆուտբոլիստի մրցույթն անցկացվում է առանձին սահմանված կարգով՝ ՀՖՖ-ի Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից իրականացվող հարցման արդյունքներով: Հայաստանի Պրեմիեր լիգայի լավագույն ֆուտբոլիստի մրցույթին՝

ա) առաջին տեղը զբաղեցրած ֆուտբոլիստը պարգևատրվում է առաջին տեղի համար մրցանակով,

բ) երկրորդ տեղը զբաղեցրած ֆուտբոլիստը պարգևատրվում է երկրորդ տեղի համար մրցանակով,

գ) երրորդ տեղը զբաղեցրած ֆուտբոլիստը պարգևատրվում է երրորդ տեղի համար մրցանակով:

**10.11.** Հայաստանի Պրեմիեր լիգայի մրցաշրջանի լավագույն մարզչի մրցույթն անցկացվում է առանձին սահմանված կարգով՝ ՀՖՖ-ի Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից իրականացվող հարցման արդյունքներով: Լավագույն մարզչի թեկնածու կարող են հանդիսանալ միայն ՀՊԼ-ի ակումբների առաջին թիմերի գլխավոր մարզիչները: Լավագույն մարզիչը պարգևատրվում է համապատասխան մրցանակով:

**10.12.** Հայաստանի Պրեմիեր լիգայի առավել թվով գոլեր խփած ֆուտբոլիստը, որպես լավագույն ռմբարկու, պարգևատրվում է «Լավագույն ռմբարկու» մրցանակով: Այն պարագայում, եթե մեկից ավելի ֆուտբոլիստներ խփել են նույն քանակի գոլեր, ապա «Լավագույն ռմբարկու» մրցանակով պարգևատրվում են վերոնշյալ բոլոր ֆուտբոլիստները:

**10.13.** Առաջին խմբի առաջնության առավել թվով գոլեր խփած ֆուտբոլիստը, որպես լավագույն ռմբարկու, պարգևատրվում է «Լավագույն ռմբարկու» մրցանակով: Այն պարագայում, եթե մեկից ավելի ֆուտբոլիստներ խփել են նույն քանակի գոլեր, ապա «Լավագույն ռմբարկու» մրցանակով պարգևատրվում են վերոնշյալ բոլոր ֆուտբոլիստները:

**10.14.** Մրցումների մասնակիցների համար ՀՖՖ նախագահի կամ Գործադիր կոմիտեի որոշմամբ կարող են սահմանվել այլ պարգևատրումներ:

# ԳԼՈՒԽ 2: ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

## Հոդված 11. Մրցումների վայրը

**11.01.** Մրցումների մասնակից ակումբը իր տնային հանդիպումները պետք է անցկացնի իրեն սեփականության իրավունքով պատկանող կամ իր օրինական տիրապետման տակ գտնվող մարզադաշտում, որը նախապես նշվում է Ֆուտբոլի կառավարման համակարգում տվյալ առաջնության և տվյալ մրցաշրջանի համար հավաստագրման գործընթացում: Ակումբի կողմից ներկայացված մարզադաշտը պետք է համապատասխանի ՀՖՖ Ենթակառուցվածքային կանոնակարգի տվյալ մրցաշարի համար ենթակա մարզադաշտերի վերաբերյալ սահմանված պահանջներին և ՀՖՖ Արտոնագրման բաժնի կողմից մրցաշրջանից առաջ ստացած լինի համապատասխանելիության հավաստագիր:

**11.02.** Խաղի օրն առաջացած արտակարգ իրավիճակների/ֆորս մաժորի, ինչպես նաև տվյալ հանդիպմանը մարզադաշտի՝ ցանկացած այլ պատճառով պատրաստ չլինելու դեպքում, խաղի մրցավարը՝ հիմք ընդունելով գործող ԻՖԱԲ խաղի կանոնները, ՀՖՖ Ենթակառուցվածքային և ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգերի պահանջները, կայացնում է վերջնական որոշում խաղը տվյալ մարզադաշտում անցկացնելու, չանցկացնելու կամ խաղասկիզբը հետաձգելու վերաբերյալ: Տվյալ իրավիճակի ի հայտ գալու դեպքում՝ խաղի պատվիրակը հրավիրում է արտակարգ ժողով՝ մրցավարի և մասնակից թիմերի մասնակցությամբ, որի ընթացքում, նախապես քննարկելով ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի հետ, մրցող թիմերին տեղեկացվում է կայացված որոշման մասին:

**11.03.** Մրցաշրջանի ընթացքում մարզադաշտի՝ այս կամ այն պատճառով հանդիպումներն ընդունելու համար ոչ պիտանի դառնալու պարագայում պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների շրջանակներում անցկացվող հանդիպումը կարող է տեղափոխվել մեկ այլ մարզադաշտ, որը համապատասխանում է սույն հոդվածի 11.01 կետին, եթե հյուրընկալող ակումբն այդ մասին հանդիպումից առնվազն 15 օր առաջ գրավոր կերպով դիմել է ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտ և ստացել համապատասխան թույլտվություն: Մարզադաշտի տեղափոխման նպատակահարմարության վերաբերյալ վերջնական որոշումը կայացնում է ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը, որի մասին ակումբը ծանուցվում է իր էլեկտրոնային փոստի հասցեով: Սույն կետով սահմանված 15-օրյա ժամկետը չպահպանելու դեպքում ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը կարող է կայացնել հատուկ որոշում:

**11.04.** Մրցաշրջանի ընթացքում մարզադաշտի ցանկացած այլ պաճառով փոփոխության վերաբերյալ դաշտի տեր ակումբը կարող է գրավոր դիմել ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտին հանդիպումից առնվազն 15 օր առաջ՝ հստակ նշելով պատճառները, հիմքերը, ինչպես նաև մարզադաշտի փոփոխման հստակ ժամանակահատվածը: Մարզադաշտի տեղափոխման նպատակահարմարության վերաբերյալ վերջնական որոշումը կայացնում է ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը, որի մասին ակումբը ծանուցվում է իր էլեկտրոնային փոստի հասցեով: Սույն կետով սահմանված 15-օրյա ժամկետը չպահպանելու դեպքում ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը կարող է կայացնել հատուկ որոշում:

**11.05.** ՀՖՖ ներկայացուցիչները կարող են այցեր իրականացնել ցանկացած մարզադաշտ, իրականացնել ստուգումներ մրցաշրջանից առաջ և ընթացքում: Ակումբները պարտավոր են լիովին համագործակցել ՀՖՖ-ի հետ նման ստուգումների ընթացքում:

## Հոդված 12. Մրցումների անցկացման կարգը

**12.01.** Հայաստանի Պրեմիեր լիգան անցկացվում է շրջանային մրցակարգով՝ չորս շրջանով: Թիմերը մրցում են միմյանց հետ երկուական անգամ սեփական և մրցակցի հարկի տակ:

**12.02.** Առաջին խմբի առաջնությունն անցկացվում է շրջանային մրցակարգով՝ երկու շրջանով: Թիմերը մրցում են միմյանց հետ մեկական անգամ սեփական և մրցակցի հարկի տակ:

**12.03.** Հայաստանի Գավաթի խաղարկությունն անցկացվում է սույն կանոնակարգի Հավելված 2-ում սահմանված «Հայաստանի ֆուտբոլի 2023-2024թթ. մրցաշրջանի Հայաստանի Գավաթի խաղարկության կանոնների» համաձայն:

**12.04.** Հայաստանի Գավաթի խաղարկության և Սուպերգավաթի խաղարկության շրջանակներում անցկացվող հանդիպումների կազմակերպման կարգի վրա տարածվում են Հայաստանի Պրեմիեր լիգայի հանդիպումների կազմակերպման կանոնները, եթե սույն կանոնակարգով այլ դրույթներ սահմանված չեն:

**12.05.** Հայաստանի Գավաթի խաղարկության եզրափակչի և Սուպերգավաթի խաղարկության կազմակերպման և անցկացման պատասխանատուն ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտն է:

**12.06.** Հայաստանի Գավաթի խաղարկության եզրափակչից և Սուպերգավաթի խաղարկությունից երկու օր առաջ ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը կազմակերպում է հանդիպում մասնակից ակումբների հետ, որի ընթացքում ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը կարող է պատասխանատվություն սահմանել մասնակից ակումբների համար՝ տվյալ խաղի պատշաճ կազմակերպումն ու անցկացումն ապահովելու համար:

## Հոդված 13. Մրցաշարային աղյուսակում թիմերի դասակարգումը

**13.01** Հայաստանի Պրեմիեր լիգայի մրցաշարային աղյուսակում թիմերը դասակարգվում են՝ ըստ վաստակած միավորների: Յուրաքանչյուր խաղի արդյունքում գրանցած հաղթանակի համար թիմին շնորհվում է 3 միավոր, ոչ-ոքիի համար՝ 1 միավոր, իսկ պարտության դեպքում միավոր չի շնորհվում:

**13.02** Մրցաշարային աղյուսակում երկու և ավելի թիմերի միավորների հավասարության դեպքում թիմերի դասակարգման ժամանակ առավելությունն՝ ըստ ստորև նշված հերթականության, տրվում է այն թիմին, որը՝

ա) հավակնորդ թիմերի միջև խաղերում վաստակել է ավելի շատ միավոր,

բ) հավակնորդ թիմերի միջև խաղերում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,

գ) հավակնորդ թիմերի միջև խաղերում խփել է ավելի շատ գոլ,

դ) տվյալ առաջնության բոլոր հանդիպումներում ունի ավելի շատ հաղթանակ,

ե) տվյալ առաջնության բոլոր հանդիպումներում խփել է ավելի շատ գոլ

զ) տվյալ առաջնության բոլոր հանդիպումներում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,

է) տվյալ առաջնությունում ստացել է ավելի քիչ կարմիր քարտ,

ը) տվյալ առաջնությունում ստացել է ավելի քիչ դեղին քարտ,

թ) ունի «Արդար խաղ»-ի առավել բարձր ցուցանիշ,

ժ) ընտրվել է վիճակահանությամբ:

## Հոդված 14. Խաղացանկը և անցկացման ժամկետները

**14.01** Մրցումների խաղացանկերը կազմվում են Բերգերի համակարգով և հաստատվում են ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի կողմից: Խաղաշրջանի մեկնարկից առնվազն 14 օր առաջ ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը հաստատում է սույն կանոնակարգով սահմանված մրցումների բոլոր մրցափուլերի օրերը և մարզադաշտերը, ինչի վերաբերյալ տեղեկատվությունը շրջաբերականով ուղարկվում է մասնակից ակումբների պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեների և Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով: Մրցափուլերի օրերը և մարզադաշտերը կարող են փոփոխվել միայն ՀՖՖ ֆուտբոլի դեպարտամենտի որոշմամբ:

**14.02** Մրցափուլերի օրերի հիման վրա՝ ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը խաղաշրջանի մեկնարկից առնվազն 10 օր առաջ նշանակում է առաջին և երկրորդ մրցափուլերի խաղերի օրերը, ժամերը և մարզադաշտերը, այնուհետև՝ հաջորդող բոլոր մրցափուլերի մեկնարկից առնվազն 14 օր առաջ (բացառությամբ ֆորս-մաժորային իրավիճակների)՝ այդ մրցափուլերի խաղերի օրերը, ժամերը և մարզադաշտերը, ինչի վերաբերյալ տեղեկատվությունը շրջաբերականով ուղարկվում է մասնակից ակումբների պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեների և Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով

**14.03** Թիմերի մեկնարկային դիրքերը մրցաշարային աղյուսակներում որոշվում է վիճակահանությամբ: Վիճակահանությունը կազմակերպվում է ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի կողմից և անցկացվում է խաղաշրջանը սկսելուց առնվազն 15 օր առաջ՝ բացառությամբ ֆորս-մաժորային իրավիճակների: Վիճակահանության կազմակերպման վերաբերյալ մանրամասները սահմանվում են ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի կողմից և վիճակահանությունից առնվազն երեք օր առաջ շրջաբերականով ուղարկվում են Հայաստանի Պրեմիեր լիգայի, Առաջին խմբի առաջնության և Հայաստանի Գավաթի խաղարկության մասնակից ակումբներին: Վերջիններս իրավունք ունեն մասնակցելու վիճակահանությանը: Շրջաբերականում նշվում է նաև վիճակահանության անցկացման տեղը, օրը և ժամը: ՀՊԼ-ի վիճակահանության արդյունքների հիման վրա ձևավորված խաղացանկը խաղաշրջանի ձմեռային և գարնանային հատվածներում կարող է ենթարկվել փոփոխությունների միայն ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի կողմից՝ հաշվի առնելով եղանակային պայմանները:

**14.04** Առաջնությունների հաստատված խաղացանկում փոփոխություն կատարելու նպատակով տվյալ խաղի մասնակից ակումբը պետք է տվյալ խաղից նվազագույնը 7 օր առաջ ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի քննարկմանը գրավոր ներկայացնի փոփոխության

հստակ պատճառները և հիմքերը: ՀՖՖ ֆուտբոլի դեպարտամենտը, տվյալ նամակը քննարկելով, վերջնական որոշում է կայացնում տվյալ դիմումը բավարարելու կամ մերժելու վրաբերյալ, որի մասին տվյալ ակումբը տեղեկացվում է ակումբի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեների միջոցով: Սույն կետով սահմանված դեպքում խաղեր հետաձգելու կամ տեղափոխելու պարագայում ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը կարող է տվյալ հետաձգված կամ տեղափոխված խաղը նշանակել տվյալ թիմ(եր)ի մասնակցությամբ մեկ այլ պաշտոնական խաղի մեկնարկից 48 ժամվա ընթացքում:

**14.05** Հայաստանի Պրեմիեր լիգայի և Առաջին խմբի առաջնության վերջին մրցափուլի բոլոր հանդիպումներն անցկացվում են նույն օրը և նույն ժամին, եթե ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը չի կայացնում այլ որոշում ՝ հաշվի առնելով մրցակից թիմերի մարզական նպատակները մրցաշարային աղյուսակում:

**14.06** Առաջնությունների անցկացման ժամկետներն են՝

ա) Հայաստանի Պրեմիեր լիգա՝ 29.07.2023թ. - 31.05.2024թ.

բ) Առաջին խումբ՝ 01.08.2023թ. - 31.05.2024թ.

գ) Հայաստանի Գավաթի խաղարկություն՝ 05.10.2023թ. - 31.05.2024թ.

դ) Սուպերգավաթ՝ անցկացման օրը հաստատվում է ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի որոշմամբ:

Առաջնությունների անցկացման ժամկետները կարող են փոփոխվել ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի կողմից:

**14.07** Մրցումների խաղացանկը ՀՖՖ սեփականությունն է: Ակումբները կարող են խաղացանկն օգտագործել գովազդային, կոմերցիոն և այլ նպատակներով՝ առանց երրորդ անձանց վերոնշյալ իրավասությունների փոխանցման:

Առաջնության խաղացանկի օգտագործումը երրորդ անձանց կողմից (բացառությամբ ակումբերի) հնարավոր է միայն ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտին գրավոր կերպով դիմելու և վերջինիս կողմից գրավոր կերպով համաձայնություն ստանալու դեպքում:

## Հոդված 15. Վիճարկում

**15.01** Ակումբները կարող են վիճարկել գործող ԻՖԱԲ խաղի կանոնների կամ սույն կանոնակարգի դրույթների այնպիսի խախտումը, որն ազդել է խաղի ելքի վրա՝ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգով սահմանված կարգով:

# ԳԼՈՒԽ 3: ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

## Հոդված 16. Սպասարկող անձնակազմի նշանակումը

**16.01** Խաղը սպասարկող մրցավարական անձնակազմը և տեսուչը նշանակվում են ՀՖՖ մրցավարական և տեսչական բաժնի կողմից:

**16.02** Խաղի պատվիրակը նշանակվում է ՀՖՖ-ի կողմից:

**16.03** Առանձին դեպքերում ՀՖՖ նախաձեռնությամբ խաղերը սպասարկող մրցավարական անձնակազմը կարող է հրավիրվել արտերկրից:

**16.04** Ակումբների կամ այլ կազմակերպությունների պահանջով կամ խնդրանքով սպասարկող անձնակազմի կամ վերջինիս առանձին անդամների նշանակում կամ փոխարինում չի կատարվում:

**16.05** Եթե խաղի ժամանակահատվածում մրցավարական անձնակազմի որևէ անդամ առողջական խնդիրների պատճառով չի կարողանում սպասարկել խաղը, ապա մրցավարական անձնակազմի տվյալ անդամին փոխարինում է 4-րդ պաշտոնյան:

## Հոդված 17. Սպասարկման իրականացումը

**17.01** Հայաստանի Պրեմիեր լիգայի Հայաստանի Գավաթի խաղարկության և Սուպերգավաթի խաղարկության խաղերը կազմակերպելու և սպասարկելու համար ՀՖՖ-ն յուրաքանչյուր խաղից առաջ նշանակում է սպասարկող անձնակազմ հետևյալ կազմով՝ պատվիրակ, տեսուչ, մրցավար, մրցավարի երկու օգնական, 4-րդ պաշտոնյա, մրցավարի վիդեո օգնական (VAR) և VAR օգնական

**17.02** Առաջին խմբի առաջնության խաղերը կազմակերպելու և սպասարկելու համար ՀՖՖ-ն յուրաքանչյուր խաղից առաջ նշանակում է սպասարկող անձնակազմ հետևյալ կազմով՝ պատվիրակ, տեսուչ, մրցավար, մրցավարի երկու օգնական, 4-րդ պաշտոնյա:

**17.03** Մրցավարների, պատվիրակների և տեսուչների իրավունքները և պարտականությունները սահմանվում են՝ գործող ԻՖԱԲ խաղի կանոնների, սույն Կանոնակարգի դրույթների և պատվիրակի գործառույթները, մրցավարությունն ու տեսչությունը կանոնակարգող ՀՖՖ-ի այլ փաստաթղթերի համաձայն:

**17.04** Մրցումների ընթացքում VAR համակարգի կիրառումը, ինչպես նաև մրցավարի վիդեո օգնականի (VAR) և VAR օգնականի պարտականությունները սահմանված են սույն կանոնակարգի Հավելված 4-ում:

**17.05** VAR համակարգին վերաբերող դրույթները սահմանվում են գործող ԻՖԱԲ խաղի կանոններին համաձայն:

## Հոդված 18. Սպասարկող անձնակազմի անդամների գործառույթները

**18.01** Մրցավարական անձնակազմի ներկայացուցիչը, տեսուչի ու պատվիրակի հետ միասին, պետք է ժամանի հանդիպման վայր (մարզադաշտ) խաղասկզբից առնվազն 150 րոպե առաջ ու պատվիրակի հետ համատեղ անցկացնի մարզադաշտի ու խաղադաշտի պատրաստության ստուգում: Մրցավարական անձնակազմի մնացած ներկայացուցիչները պետք է ժամանեն մարզադաշտ խաղասկզբից առնվազն 90 րոպե առաջ:

**18.02** Նախախաղային խորհրդակցությունից առաջ մրցավարը և պատվիրակը ստուգում են խաղադաշտի որակը և մարզադաշտի համապատասխանելիությունը սահմանված չափանիշներին

**18.03** Սպասարկող անձնակազմի բոլոր անդամներին արգելվում է խաղին մեկնել (վերադառնալ) տվյալ խաղի մասնակից ակումբներից որևէ մեկի հետ, և/կամ իջևանել միասին՝ բացառությամբ ֆորս-մաժորային իրավիճակների՝ նախապես տեղեկացնելով ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտին:

**18.04** Խաղասկզբից 120 րոպե առաջ մրցավարական անձնակազմի ներկայացուցիչը և մրցավարների տեսուչը մասնակցում են պատվիրակի կողմից անցկացվող նախախաղային խորհրդակցությանը:

**18.05** Խաղասկզբից ոչ ուշ, քան 60 րոպե առաջ, մրցավարական անձնակազմը ստուգում է մասնակից թիմերի կողմից Ֆուտբոլի կառավարման համակարգում և թղթային արձանագրությունում, եթե այդպիսին օգտագործվում է, տրամադրված խաղացողների ցուցակները, որոնց համապատասխանելիության համար պատասխանատու են դրանք ներկայացնող ակումբները:

**18.06** Խաղասկզբից 60 րոպե առաջ 4-րդ պաշտոնյան թիմերի հանդերձարաններում ստուգում է խաղացողների հանդերձանքը: Խաղադաշտ դուրս գալուց անմիջապես առաջ

թիմերի հանդերձանքը ստուգում են մրցավարի օգնականները մրցող թիմերի հանդերձարանների դիմաց:

**18.07** Մրցավարը պետք է անմիջապես տեղեկացնի հանդիպման պատվիրակին խաղից առաջ, ընթացքում և/կամ ավարտից հետո իր, իր օգնականների և 4-րդ պաշտոնյայի վրա ուղղակի կամ անուղղակի ազդեցության դեպքերի մասին:

**18.08** Ակումբների ներկայացուցիչների կողմից պատվիրակի գործառույթների նկատմամբ ներգործություն կամ ներգործության փորձ կատարելու, խաղի վերաբերյալ պատվիրակի հասցեին վիրավորական արտահայտություններ կատարելու կամ սպառնալիքներ հնչեցնելու դեպքում պատվիրակը պարտավոր է հետխաղյա հաշվետվության մեջ արձանագրել այդ փաստը, ինչի հետևանքով կարող է հարուցվել վարույթ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեում:

**18.09** Մրցումների ժամանակ, խաղի պատվիրակի բացակայության դեպքում, տեսուչը պարտավոր է կատարել նրա՝ խաղի կազմակերպմանն առնչվող պարտականությունները:

**18.10** Սպասարկող անձնակազմը պարտավոր է ձեռնարկել խաղն անցկացնելուն ուղղված բոլոր հնարավոր և ողջամիտ քայլերը:

**18.11** Տեսուչն իր զեկույցը մուտքագրում է Ֆուտբոլի կառավարման համակարգ մինչև խաղի հաջորդ օրը՝ ժամը 15:00-ն:

## Հոդված 19. Հանդիպման պատվիրակը

**19.01** Խաղի կազմակերպման և անցկացման ընդհանուր վերահսկողությունն իրականացնում է հանդիպման պատվիրակը:

**19.02** Պատվիրակի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են սույն Կանոնակարգով, ՀՖՖ այլ փաստաթղթերով և պատվիրակի հետ կնքված պայմանագրով:

**19.03** Պատվիրակների ցանկը հաստատվում է ՀՖՖ-ի կողմից յուրաքանչյուր մրցաշրջանից առաջ:

**19.04** Ակումբների կամ այլ կազմակերպությունների պահանջով կամ խնդրանքով խաղերին պատվիրակի նշանակում կամ փոխարինում չի կատարվում:

**19.05** Խաղին նշանակված պատվիրակը պարտավոր է՝

- խաղից 24 ժամ առաջ կապ հաստատել մասնակից թիմերի հետ և քննարկել խաղի անցկացմանը վերաբերող խնդիրները (մարզադաշտի և խաղադաշտի պատրաստություն, թիմերի հանդերձանքի գույներ, հանդիսատեսների ակնկալվող քանակ, անվտանգության և բժշկական ծառայության ապահովում և այլն),

- ժամանել հանդիպման վայր (մարզադաշտ) խաղասկզբից առնվազն 150 րոպե առաջ և մրցավարների ու տեսուչի հետ համատեղ անցկացնել մարզադաշտի ու խաղադաշտի պատրաստականության ստուգում,

- խաղասկզբից 120 րոպե առաջ անցկացնել նախախաղային խորհրդակցություն մրցավարի, տեսուչի, մասնակից թիմերի, մարզադաշտի և ոստիկանության ներկայացուցիչների մասնակցությամբ,

- նախախաղային խորհրդակցության ժամանակ հաստատել խաղի կազմակերպման հետհաշվարկի ժամանակացույցը, որի կատարումը պարտադիր է խաղի մասնակիցների համար,

- վերահսկել, որպեսզի մարզադաշտի ստուգման ընթացքում հայտնաբերված թերությունները շտկվեն մինչև խաղասկիզբը,

- վերահսկել կանոնակարգերով և/կամ պայմանագրերով սահմանված ՀՖՖ-ի գովազդային, առևտրային և գործընկերային պարտականությունների պատշաճ իրականացումը

- անհրաժեշտության դեպքում արձանագրել օդի ջերմաստիճանը,

- համագործակցել հիմնական հեռարձակողի հետ՝ խաղի հեռարձակման հարցերի վերաբերյալ,

- խաղի ընթացքում վերահսկել ակումբի պատասխանատուների կողմից համապատասխանությունը սույն կանոնակարգին ու ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգին՝ կապված խաղի կազմակերպման ու անցկացման հետ, վերահսկել հանդիսատեսների վարքը, գրանցել ապօրինի գործողությունները (կազմակերպված անպարկեշտ վանկարկումներ, վիրավորական լեզու, պիրոտեխնիկայի կիրառում և այլ անօրինական գործողություններ),

- արձանագրել երրորդ կողմերի միջամտության պատճառով հանդիպումը կասեցնելու փորձերը, ինչպես նաև խաղից առաջ, ընթացքում կամ դրանից հետո տեղի ունեցած միջադեպերը և/կամ բախումները, որոնք ենթադրում են ոստիկանության և/կամ

անվտանգության աշխատակիցների միջամտություն, անհապաղ տեղեկացնել դրանց մասին ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտին, ինչպես նաև մանրամասն նշել այդ մասին հետխաղային հաշվետվությունում,

- խաղավարտից երկու ժամվա ընթացքում առցանց լրացնել Արդար խաղի հաշվարկի աղյուսակն ու հետխաղային հաշվետվությունը՝ խաղի կազմակերպման, անցկացման, տեղ գտած թերացումների ու միջադեպերի նշումներով՝ նախապես դրանք քննարկելով հանդիպման մրցավարի և տեսուչի հետ,

- եթե առցանց հաշվետվությունն ուղարկելուց հետո հայտնաբերվել են տեղ գտած խախտումներ կամ տեղի է ունեցել միջադեպ, ապա դրանց վերաբերյալ պատվիրակը պետք է տեղեկացնի ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտին առանձին էլեկտրոնային գրությամբ,

- հեռանալ մարզադաշտից միայն երկրպագուների հեռանալուց, թիմերի և մրցավարների մեկնումից հետո:

**19.06** Նախախաղային խորհրդակցության, ինչպես նաև ողջ խաղի ընթացքում, պատվիրակը պետք է կրի ՀՖՖ պատվիրակի իր անհատական անցագիրը:

**19.07** Պատվիրակն իրավունք ունի մուտք գործել մարզադաշտի և հարակից տարածքների բոլոր հատվածները խաղի ժամանակահատվածում:

**19.08** Պատվիրակի կողմից իր պարտականությունների շրջանակներում ներկայացվող խաղի կազմակերպմանն ու անցկացմանը վերաբերող կանոնակարգային բոլոր պահանջներն ու ցուցումները պետք է խստորեն կատարվեն: Այդ պահանջները կատարելուց հրաժարվելու կամ թերի կատարելու դեպքում այդ հանգամանքը նշվելու է պատվիրակի հետխաղային հաշվետվության մեջ և ներկայացվելու է ՀՖՖ ԿԷԿ-ի քննությանը՝ մեղավոր կողմի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու միջնորդությամբ:

**19.09** ՀՖՖ կանոնակարգերի, ՀՖՖ-ի և պատվիրակի միջև կնքված պայմանագրի և ՀՖՖ պատվիրակի ուղեցույցի, այդ թվում՝ վարքագծի կանոնագրքի, դրույթների համաձայն՝ պատվիրակը կրում է անձնական պատասխանատվություն իր ծառայողական պարտականություններ ոչ պատշաճ իրականացման, այդ թվում՝ հաշվետվությունները լիակատար և ժամանակին չներկայացնելու, ինչպես նաև՝ թերի և ոչ հավաստի տեղեկություն տրամադրելու համար:

**19.10** Պատվիրակը՝ խորհրդակցելով մրցավարի և ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի հետ, իրավունք ունի մինչև խաղի նշանակված մեկնարկային ժամը հետաձգել խաղասկիզբը, անցկացնել կամ չանցկացնել խաղը անվտանգության և ապահովության ոչ պատշաճ մակարդակի, ներառյալ՝ ոստիկանության, կարգադրիչների և/կամ մասնավոր անվտանգության ծառայության աշխատակիցների բացակայության և/կամ անբավարար քանակի պատճառով, եթե դա կարող է վտանգ ներկայացնել խաղի մասնակիցների, մրցավարների և/կամ հանդիսատեսների առողջությանն ու կյանքին:

**19.11** Պատվիրակն իր հաշվետվությունը և Արդար խաղի գնահատման արձանագրությունը մուտքագրում է Ֆուտբոլի կառավարման համակարգ խաղավարտից հետո՝ առավելագույնը երկու ժամվա ընթացքում:

# ԳԼՈՒԽ 4. ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ԵՎ ԹԻՄԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԵՐԻ ՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ

## Հոդված 20. Ֆուտբոլիստների և թիմերի անձնակազմերի հայտավորումը և վերահայտավորումը

**20.01** ՀՊԼ մասնակից յուրաքանչյուր թիմի կազմում թույլատրվում է հայտավորվել առավելագույնը 10 թիմի անձնակազմի անդամ և առավելագույնը 30 ֆուտբոլիստ: Անկախ հայտավորված ֆուտբոլիստների քանակից՝ առնվազն 9-ը պետք է լինեն Հայաստանի Հանրապետությունում մարզված և/կամ Հայաստանի ազգային/տարբեր տարիքային հավաքականների անդամներ: Ակումբները պետք է ֆուտբոլիստներին և անձնակազմի անդամներին հայտավորեն Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով:

**20.02** Առաջին խմբի մասնակից յուրաքանչյուր թիմի կազմում թույլատրվում է հայտավորվել առավելագույնը 10 թիմի անձնակազմի անդամ և առավելագույնը 30 ֆուտբոլիստ: Անկախ հայտավորված ֆուտբոլիստների քանակից՝ առնվազն 15-ը պետք է լինեն Հայաստանի Հանրապետությունում մարզված և/կամ Հայաստանի ազգային/տարբեր տարիքային հավաքականների անդամներ: Ակումբները պետք է ֆուտբոլիստներին և անձնակազմի անդամներին հայտավորեն Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով:

**20.03** Սույն հոդվածի 20.01 և 20.02 կետերով սահմանված՝ ՀՀ-ում մարզված և/կամ Հայաստանի ազգային/տարբեր տարիքային հավաքականների անդամ ֆուտբոլիստների նվազագույն քանակը հայտավորման ցուցակում տվյալ թիմի պաշտոնական առաջին խաղից 2 օր առաջ չապահովելու դեպքում ՀՖՖ Մրցումների կազմակերպման և անցկացման բաժինը թիմի ամբողջ հայտը կարող է մերժել, որի մասին ակումբը ծանուցվում է Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով:

**20.04** Խաղաշրջանի առաջին պաշտոնական խաղից սկսած մինչ տվյալ խաղաշրջանի ավարտը ՀՊԼ մասնակից թիմի կազմում պետք է հայտավորված լինի առնվազն 18 ֆուտբոլիստ, որոնցից առնվազն 9-ը՝ Հայաստանի Հանրապետությունում մարզված և/կամ Հայաստանի ազգային/տարբեր տարիքային հավաքականների անդամներ: Հայտավորման ենթակա ֆուտբոլիստների նվազագույն քանակը (18 ֆուտբոլիստ), ինչպես նաև ՀՀ-ում մարզված և/կամ Հայաստանի ազգային/տարբեր տարիքային հավաքականներ հրավիրված ֆուտբոլիստների նվազագույն քանակը (9 ֆուտբոլիստ) չապահովելու դեպքում ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն կայացնում է որոշում՝ սույն հոդվածի խախտման վերաբերյալ:

**20.05** Խաղաշրջանի առաջին պաշտոնական խաղից սկսած մինչ տվյալ խաղաշրջանի ավարտը՝ ԱԽ մասնակից թիմի կազմում պետք է հայտավորված լինի առնվազն 18 ֆուտբոլիստ, որոնցից 15-ը՝ Հայաստանի Հանրապետությունում մարզված և/կամ Հայաստանի ազգային/տարբեր տարիքային հավաքականների անդամներ: Հայտավորման ենթակա ֆուտբոլիստների նվազագույն քանակը (18 ֆուտբոլիստ) չապահովելու դեպքում ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն կայացնում է որոշում՝ սույն հոդվածի խախտման վերաբերյալ:

**20.06** Հակադոպինգային կանոնների խախտման համար որակազրկված ֆուտբոլիստը ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի կողմից հեռացվում է տվյալ թիմի հայտավորման ցուցակից՝ հիմնվելով ՀՀ հակադոպինգային գործակալություն որոշման հիման վրա:

**20.07** 20.06 կետով սահմանված խախտման պարագայում տվյալ ակումբը պարտավոր է համալրել հայտավորված ֆուտբոլիստների քանակը՝ պահպանելով 20.11 և 20.15 կետերով սահմանված ժամկետները և դրույթները:

**20.08** ՀՊԼ-ում հայտավորված թիմի անձնակազմը պետք է ընդգրկի առնվազն հետևյալ անդամներին՝

ա) Առաջին թիմի գլխավոր մարզիչ, ով պետք է ունենա ՈՒԵՖԱ-ի «Պրո» կարգի գործող մարզչական արտոնագիր կամ գործող՝ իրավասության ճանաչում ՈՒԵՖԱ-ի կողմից (UEFA Recognition of Competence), ինչը համարժեք է ՈՒԵՖԱ-ի «Պրո» կարգի մարզչական արտոնագրին,
բ) Առաջին թիմի գլխավոր մարզչի օգնական, ով պետք է ունենա ՈՒԵՖԱ-ի առնվազն «Ա» կարգի գործող մարզչական արտոնագիր կամ գործող՝ իրավասության ճանաչում ՈՒԵՖԱ-ի կողմից (UEFA Recognition of Competence), ինչը համարժեք է ՈՒԵՖԱ-ի առնվազն «Ա» կարգի մարզչական արտոնագրին,
գ) Առաջին թիմի դարպասապահների մարզիչ, ով պետք է ունենա ՈՒԵՖԱ-ի առնվազն «Բ» կարգի գործող մարզչական արտոնագիր կամ գործող՝ իրավասության ճանաչում ՈՒԵՖԱ-ի կողմից (UEFA Recognition of Competence), ինչը համարժեք է ՈՒԵՖԱ-ի առնվազն «Բ» կարգի մարզչական արտոնագրին,
դ) բժիշկ, ով ունի բարձրագույն բժշկական կրթություն, ինչպես նաև սպորտային բժշկի որակավորում և մասնագիտացում՝ կլինիկական օրդինատուրա կամ արտերկրյա մագիստրատուրա, ՈՒԵՖԱ բժշկական ծառայության կողմից ճանաչված BLS կրթական ծրագրի վկայական, ինչպես նաև ավագ բուժաշխատողի համար նախատեսված ՇՄԶ հավաստագիր,

ե) մերսող/կինեզիստ/ֆիզիոթերապիստ, որը պետք է ունենա կինեզիոլոգ կամ ֆիզիոթերապիստ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն կամ մերսողի միջին մասնագիտական կրթություն, ՈՒԵՖԱ բժշկական ծառայության կողմից ճանաչված BLS կրթական ծրագրի վկայական և միջին բուժաշխատողի համար նախատեսված ՇՄՋ հավաստագիր,

զ) արտերկրից հրավիրված բժիշկները և միջին բուժաշխատող համարվող մերսողները կարող են անցնել աշխատանքի ՀՀ առողջապահության նախարարության կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան թույլ տվության և սույն կանոնակարգի 4-րդ գլխի 20.08 հոդվածի դ) կամ ե) ենթակետի պահանջներին համապատասխանելու դեպքում:

**20.09** ԱԽ-ում հայտավորված թիմի անձնակազմը պետք է ընդգրկի առնվազն հետևյալ անդամներին՝

ա) գլխավոր մարզիչ, ով պետք է ունենա ՈՒԵՖԱ-ի առնվազն «Ա» կարգի գործող մարզչական արտոնագիր կամ գործող՝ իրավասության ճանաչում ՈՒԵՖԱ-ի կողմից (UEFA Recognition of Competence), ինչը համարժեք է ՈՒԵՖԱ-ի առնվազն «Ա» կարգի մարզչական արտոնագրին,

բ) գլխավոր մարզչի օգնական, ով պետք է ունենա ՈՒԵՖԱ-ի առնվազն «Բ» կարգի գործող մարզչական արտոնագիր կամ գործող՝ իրավասության ճանաչում ՈՒԵՖԱ-ի կողմից (UEFA Recognition of Competence), ինչը համարժեք է ՈՒԵՖԱ-ի առնվազն «Բ» կարգի մարզչական արտոնագրին,

գ) դարպասապահների մարզիչ, ով պետք է ունենա ՈՒԵՖԱ-ի առնվազն «Բ» կարգի գործող մարզչական արտոնագիր կամ գործող՝ իրավասության ճանաչում ՈՒԵՖԱ-ի կողմից (UEFA Recognition of Competence), ինչը համարժեք է ՈՒԵՖԱ-ի առնվազն «Բ» կարգի մարզչական արտոնագրին,

դ) բժիշկ, ով ունի բարձրագույն բժշկական կրթություն, ինչպես նաև սպորտային բժշկի որակավորում և մասնագիտացում՝ կլինիկական օրդինատուրա կամ արտերկրյա մագիստրատուրա, ՈՒԵՖԱ բժշկական ծառայության կողմից ճանաչված BLS կրթական ծրագրի վկայական, ինչպես նաև ավագ բուժաշխատողի համար նախատեսված ՇՄՋ հավաստագիր,

ե) մերսող/կինեզիստ/ֆիզիոթերապիստ, որը պետք է ունենա կինեզիոլոգ կամ ֆիզիոթերապիստ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն կամ մերսողի միջին մասնագիտական կրթություն, ՈՒԵՖԱ բժշկական ծառայության կողմից ճանաչված BLS

կրթական ծրագրի վկայական և միջին բուժաշխատողի համար նախատեսված ՇՄԶ հավաստագիր,
զ) արտերկրից հրավիրված բժիշկները և միջին բուժաշխատող համարվող մերսողները կարող են անցնել աշխատանքի ՀՀ առողջապահության նախարարության կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան թույլ տվության և սույն կանոնակարգի 4-րդ գլխի 20.09 հոդվածի դ) կամ ե) ենթակետի պահանջներին համապատասխանելու դեպքում:

**20.10** Հայտավորման և վերահայտավորման համար ակումբները ՀՖՖ ՄԿԱ բաժնի կողմից նախապես հաստատված գրաֆիկով սահմանված ժամկետներում Ֆուտբոլի կառավարման համակարգում և ՀՖՖ կողմից գործարկվող՝ ֆուտբոլիստների բժշկական պատմության հավաքագրման և վերահսկման այլ՝ պաշտանական համակարգում վերբեռնում են հայտավորվող/վերահայտավորվող յուրաքանչյուր ֆուտբոլիստի համար բուժհաստատության կողմից հաստատված տեղեկանք՝ ֆուտբոլիստի առողջական վիճակի մասին:

**20.11** Հայտավորման ժամկետը սահմանվում է տվյալ առաջնության պաշտոնական առաջին խաղից 15 օր առաջ և ավարտվում է 1 օր առաջ:

**20.12** Եթե հայտավորումը/վերահայտավորումը չի համապատասխանում սույն հոդվածի 20.04, 20.05, 20.07, 20.08 և 20.09 մասերով նախատեսված պահանջներին, կամ ներկայացվում է 20.11 և 20.15 մասերով սահմանված ժամկետների խախտմամբ, ապա այն մերժվում է ՀՖՖ ՄԿԱ բաժնի կողմից, որի մասին ակումբը ծանուցվում է Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով:

**20.13** Առաջնության ընթացքում ֆուտբոլիստի կամ թիմի անձնակազմի անդամի հայտից հանելու գործընթացը կատարվում է Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով:

**20.14** Թիմը կարող է հայտավորել կամ վերահայտավորել այն ֆուտբոլիստներին, որոնք գրանցված են տվյալ ակումբում: Ֆուտբոլիստների գրանցումը կատարվում է ՀՖՖ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի համաձայն Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով:

**20.15** Հայտավորման ժամկետի լրանալուց հետո թիմերում վերահայտավորումը կատարվում է սահմանված ժամկետներում

ա) Հայաստանի Պրեմիեր լիգա - 30.07.2023-12.09.2023 (Երևանի ժամանակով՝ 24:00) և 01.02.2024-28.02.2024 (Երևանի ժամանակով՝ 24:00):

բ) Առաջին խմբի առաջնություն - 02.08.2023-12.09.2023 (Երևանի ժամանակով՝ 24:00) և 01.02.2024-28.02.2024 (Երևանի ժամանակով՝ 24:00):

**20.16** Վերահայտավորվող յուրաքանչյուր ֆուտբոլիստի համար Հայաստանի Պրեմիեր լիգայի մասնակից ակումբը վճարում է 25,000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ, Առաջին խմբի առաջնության մասնակից ակումբը վճարում է 15,000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ, բացառությամբ՝

ա) զինվորական ծառայության մեջ գտնվող ֆուտբոլիստի,
բ) պրոֆեսիոնալ այն ֆուտբոլիստի, ով խաղաշրջանից առաջ գրանցված է տվյալ ակումբում, բայց չի հայտավորվել ակումբը ներկայացնող որևէ այլ թիմում:

Վերահայտավորված ֆուտբոլիստի համար վճարված գումարի անդորրագրերի սկանավորված տարբերակները պետք է վերբեռնվեն Ֆուտբոլի կառավարման համակարգում:

**20.17** Թիմը կարող է հայտավորել կամ վերահայտավորել այն անձնակազմի անդամներին, որոնց պայմանագրերը հաստատված են ՀՖՖ արտոնագրման բաժնի կողմից:

**20.18** Թիմի անձնակազմի անդամներ են համարվում հետևյալ անձինք՝

ա) գլխավոր մարզիչ,
բ) գլխավոր մարզչի օգնական,
գ) դարպասապահների մարզիչ,
դ) մարզիչ
ե) սպորտային բժիշկ,
զ) մերսող/կինեզիստ/ֆիզիոթերապիստ,
է) ադմինիստրատոր,
ը) թարգմանիչ:

**20.19** Թիմի անձնակազմի անդամների վերահայտավորման գործընթացը կատարվում է Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով: Անձնակազմի անդամներին վերահայտավորելու համար ժամկետ սահմանված չէ:

Սահմանված ժամկետներից դուրս վերահայտավորվել կարող են միայն հետևյալ ֆուտբոլիստները.

ա) արտասահմանից ժամանած այն ֆուտբոլիստները, որոնց միջազգային տրանսֆերային սերտիֆիկատի հարցման պատասխանը ՖԻՖԱ-ի և ՀՖՖ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգով սահմանված կարգով ՀՖՖ-ն ստացել է պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների գրանցման համար սահմանված ժամանակահատվածից (տրանսֆերային պատուհանից) դուրս: Սույն դեպքում ակումբը պարտավոր է իրականացնել ֆուտբոլիստի վերահայտավորումը գրանցման օրվանից հետո 20 օրվա ընթացքում, եթե այլ բան չի բխում սույն կանոնակարգի և ֆուտբոլ մարզաձևը կարգավորող այլ իրավական ակտերի էությունից: Սույն մասով սահմանված ժամկետի պահանջը չպահպանելը զրկում է ակումբին տվյալ ֆուտբոլիստին վերահայտավորելու իրավունքից մինչև հաջորդ հայտավորման/վերահայտավորման համար սահմանված ժամկետը:

բ) զորացրված ֆուտբոլիստները, ում վերահայտավորումը կատարվել է ոչ ուշ, քան նրանց զորացրվելուց հետո 40 օրվա ընթացքում,

գ) Մ16, Մ17 և Մ18 տարիքային խմբերի առաջնություններում հանդես եկող այն ֆուտբոլիստները, որոնք գրանցված են տվյալ ակումբում, սակայն չեն հայտավորվել տվյալ ակումբի որևէ թիմում, որը մասնակցել է տվյալ մրցաշրջանի պրոֆեսիոնալ առաջնություններին

դ) ՀՖՖ Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգով սահմանված բացառությունների կիրառման այլ դեպքերում

**20.20** Խաղաշրջանի ընթացքում ֆուտբոլիստը կարող է տեղափոխվել մի ակումբից մյուսն ընդամենը մեկ անգամ:

**20.21** Ֆուտբոլիստները մեկ ակումբից մյուսը կարող են տեղափոխվել՝ համաձայն ՀՖՖ Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի դրույթների:

**20.22** Խաղաշրջանի ընթացքում ֆուտբոլիստը տվյալ ակումբի կազմում կարող է տեղափոխվել մեկ թիմից մյուսը միայն մեկ անգամ:

**20.23** Վարձակալության ժամկետը լրանալուց հետո ֆուտբոլիստի վերադարձը մայր ակումբ տեղափոխություն չի համարվում: Վարձակալության պայմանագրի ժամկետը լրանալուց հետո ֆուտբոլիստի վերադարձը մայր ակումբ հիմք չի հանդիսանում վերահայտավորման ժամկետները խախտելու համար:

## Հոդված 21. Ֆուտբոլիստների բժշկական և դոպինգ ստուգումը

**21.01** Հայաստանի Պրեմիեր լիգային մասնակցող ֆուտբոլիստները պետք է անցնեն տարեկան երկու բժշկական ստուգում՝ ՀՖՖ-ի կողմից սահմանված ժամանակացույցին համապատասխան:

**21.02** Ֆուտբոլիստների բժշկական ստուգումն ապահովում են ակումբները՝ բուժհաստատության կողմից տրված համապատասխան ստուգման թերթիկի հիման վրա, որը պետք է լրացվի, ստորագրվի և կնքվի բժշկական հաստատության ներկայացուցչի կամ համապատասխան բժիշկների կողմից:

**21.03** Ակումբը պարտավոր է լրացված բժշկական ստուգման թերթիկը վերբեռնել Ֆուտբոլի կառավարման համակարգում և ՀՖՖ կողմից գործարկվող՝ ֆուտբոլիստների բժշկական պատմության հավաքագրման և վերահսկման այլ՝ պաշտանական համակարգում:

**21.04** Հայաստանի Պրեմիեր լիգային մասնակցող ֆուտբոլիստների բժշկական ողջ տեղեկատվությունը պետք է ներառվի ScribePro համակարգ, որն իրականացնում է ակումբի կողմից լիազորված բժիշկը, իսկ այդ գործընթացի վերահսկողությունն իրականացվում է ՀՖՖ բժշկական դեպարտամենտի կողմից:

**21.05** Եթե ֆուտբոլիստը տվյալ մրցաշրջանում Պրոֆեսիոնալ առաջնության որևէ ակումբի կազմում արդեն իսկ անցել է տվյալ ժամանակաշրջանի համար սահմանված բժշկական ստուգումը, ապա վերահայտավորվելու դեպքում կրկնակի բժշկական ստուգում չի պահանջվում, բայց վերահայտավորող ակումբը պետք է վերահայտավորման դիմումին կից Ֆուտբոլի կառավարման համակարգում, ինչպես նաև ScribePro համակարգում վերբեռնի տվյալ ֆուտբոլիստի բժշկական համապատասխան փաստաթուղթը:

**21.06** Խաղի արձանագրությունում նշված ցանկացած ֆուտբոլիստ կարող է ենթարկվել դոպինգ ստուգման:

**21.07** Դոպինգ ստուգումը միշտ գաղտնի է և չհայտարարված:

**21.08** Յուրաքանչյուր մարզադաշտ պետք է ունենա դոպինգ ստուգման սենյակ (ԴՍՍ): Դա պետք է լինի մաքուր տարածք, որը պետք է ծառայի բացառապես դոպինգ ստուգումների անցկացման համար: Այն պետք է պատրաստ լինի խաղի մեկնարկից առնվազն մեկ ժամ առաջ:

**21.09** ԴՍՍ-ն պետք է ունենա ինտերնետային ծածկույթ:

**21.10** Դաշտի տեր թիմը պետք է ապահովի մեկ նստատեղ կենտրոնական տրիբունայում Դոպինգ սպայի (ԴՍ) համար:

**21.11** Յուրաքանչյուր խաղի համար դաշտի տեր թիմը պետք է նշանակի դոպինգ ստուգման կցորդ (ԴՍԿ), ում պարտականությունների մեջ է մտնելու դոպինգ ստուգման սենյակը համապատասխանեցնելը ՀՖՖ Ենթակառուցվածքային կանոնակարգի պահանջներին և որպեսզի բոլոր անհրաժեշտ նյութերն ու սարքավորումները առկա լինեն ու ծառայեն դոպինգ ստուգման անցկացման համար: ԴՍԿ-ն պարտադիր չէ, որ ունենա բժշկական կրթություն և կարող է իրականացնել խաղի կազմակերպման հետ կապված այլ հանձնարարություններ: Նա պետք է հասանելի լինի մինչև դոպինգ ստուգման ավարտն ու ԴՍՊ-ի մեկնումը մարզադաշտից:

**21.12** Խաղերի համար պետք է նաև նշանակվեն մեկ կամ ավելի դոպինգ սպայի օգնականներ (շապերոններ), ովքեր պարտավոր են տեղեկացնել և ուղեկցել ԴՍՍ վիճակահանությամբ ընտրված խաղացողներին ու մնալ նրանց տրամադրության տակ մինչև դոպինգ ստուգման ավարտը:

**21.13** Դոպինգ ստուգման համար յուրաքանչյուր թիմից վիճակահանությամբ ընտրվում են 2 մեկնարկային կազմի խաղացող և 2 պահեստային խաղացող:

**21.14** Ընտրված խաղացողներից կարող են վերցվել՝

- միայն մեզի նմուշներ,
- միայն արյան նմուշներ,
- մեզի և արյան նմուշներ:

**21.15** ԴՍՊ-ն պետք է հանդիպի թիմի ներկայացուցիչներին խաղասկզբից առաջ և տեղեկացնի նրանց ստուգման անցկացման, վիճակահանության գործընթացի և դոպինգի վերահսկման կարգի մասին:

**21.16** Վիճակահանությունը պետք է տեղի ունենա խաղավարտից 15 րոպե առաջ և դրա արդյունքները պետք է անմիջապես հայտնի դառնան:

**21.17** Խաղի արձանագրությունում նշված ցանկացած խաղացող կարող է ընտրվել դոպինգ ստուգման համար:

**21.18** Թիմերի ներկայացուցիչների ներկայությունը վիճակահանությանը ցանկալի է, բայց ոչ պարտադիր: Եթե թիմերից մեկի կամ երկուսի ներկայացուցիչները բացակայում են վիճակահանության ժամանակ, ապա վերջինիս ավարտից անմիջապես հետո ԴՍՊ-ն նրանց պետք է տեղեկացնի վիճակահանության արդյունքների մասին:

**21.19** Թիմերի ներկայացուցիչները պարտավոր են աջակցել ԴՍՊ-ին՝ տեղեկացնելով համապատասխան խաղացողներին վիճակահանությամբ դոպինգ ստուգման համար ընտրված լինելու մասին և ապահովելով, որ նրանք խաղավարտից անմիջապես հետո գնան ԴՍՍ:

**21.20** Դոպինգ ստուգման համար ընտրված խաղացողներն իրավունք ունեն ստանալ իրենց գավաթը և/կամ մեդալները, տոնել խաղադաշտում, տալ ֆլեշ հարցազրույց խաղադաշտում, բայց նրանց արգելվում է վերադառնալ հանդերձարան:

**21.21** Դոպինգ ստուգման ընթացքում թիմերի բժշկական անձնակազմի ներկայությունը ցանկալի է, որպեսզի նրանք օգնեն իրենց խաղացողներին լրացնել դոպինգ ստուգման վերահսկման թերթիկը:

**21.22** Դոպինգ ստուգման համար ընտրված խաղացողները կարող են լքել ԴՍՍ-ը միայն արտակարգ դեպքերում (օրինակ՝ բժշկական սենյակում բուժում ստանալու համար), բայց բացառապես ԴՍՊ-ի թույլտվությամբ և եթե տվյալ խաղացողը մշտապես գտնվի հատուկ նշանակված կարգադրիչի վերահսկողության ներքո:

**21.23** Խաղի արձանագրությունում նշված բոլոր խաղացողները, ներառյալ՝ վնասվածք և կարմիր քարտ ստացածները, պետք է հասանելի լինեն մարզադաշտում խաղավարտից 30 րոպեների ընթացքում՝ նմուշի հնարավոր հավաքագրում անցնելու համար:

**21.24** Եթե խաղացողը վնասվածք է ստացել խաղից առաջ կամ դրա ընթացքում, ապա ԴՍ-ն պետք է գնահատի վնասվածքի լրջությունը: ԴՍ-ն է որոշում, թե արդյոք խաղացողը կարող է լքել մարզադաշտն ու մեկնել հիվանդանոց, թե նա պետք է մնա մարզադաշտում՝ պոտենցիալ դոպինգ ստուգում անցնելու համար:

# ԳԼՈՒԽ 5: ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

## Հոդված 22. Խաղի անցկացման կարգը

**22.01** Սույն կանոնակարգով սահմանված պրոֆեսիոնալ մրցումների շրջանակներում խաղերը կազմակերպվում և անցկացվում են՝ համաձայն գործող ԻՖԱԲ խաղի կանոնների, սույն կանոնակարգի, ինչպես նաև ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի՝ պաշտոնական խաղերի անցկացումը կարգավորող այլ փաստաթղթերի:

**22.02** Խաղը բաղկացած է 45 րոպե տևողությամբ 2 խաղակեսից և խաղակեսերի միջև ընկած մինչև 15 րոպե ընդմիջումից,

**22.03** Խաղի սպասարկումն իրականացնում են ՀՖՖ կողմից նշանակված պատվիրակը, մրցավարը, VAR օպերատորները, մրցավարի օգնականներն ու տեսուչը:

## Հոդված 23. Դաշտի տեր ակումբի պարտականությունները

*Դաշտի տեր ակումբը պարտավոր է՝*

**23.01** Հայաստանի Պրեմիեր լիգայի յուրաքանչյուր խաղի անցկացման համար տրամադրել առաջնության համար հաստատված 10 գնդակ: Եղանակային անբարենպաստ պայմանների պարագայում (մառախուղ, ձյուն) տրամադրել նաև ՀՖՖ-ի կողմից տրամադրված քանակով կարմիր կամ նարնջագույն գնդակներ՝ ՀՊԼ-ի հանդիպումների անցկացումն ապահովելու համար,

**23.02** Հայաստանի Պրեմիեր լիգայի խաղի մեկնարկից 1 ժամ առաջ հյուր թիմին տրամադրել առաջնության համար հաստատված 10 գնդակ:

**23.03** Առաջին խմբի առաջնության յուրաքանչյուր խաղի անցկացման համար տրամադրել 10 գնդակ: Եղանակային անբարենպաստ պայմանների պարագայում (մառախուղ, ձյուն) տրամադրել նաև կարմիր կամ նարնջագույն գնդակներ՝ Առաջին խմբի հանդիպումների անցկացումն ապահովելու համար,

**23.04** Առաջին խմբի առաջնության խաղի մեկնարկից 1 ժամ առաջ հյուր թիմին տրամադրել 10 գնդակ:

**23.05** ՀՊԼ և ՀԳԽ մասնակից ակումբների կողմից կարող են տեսագրվել իրենց տնային խաղերը:

**23.06** Առաջին խմբի առաջնությունների խաղերը պետք է տեսագրվեն դաշտի տեր ակումբի կողմից՝ առնվազն երեք տեսախցիկով, իսկ հյուր ակումբի կողմից՝ առնվազն մեկ տեսախցիկով: Մրցակից ակումբների կողմից օգտագործվող լրացուցիչ տեսախցիկ(ներ)ի դիրք(եր)ի ընտրությունը չի սահմանափակվում:

**23.07** Պրոֆեսիոնալ մրցումների խաղերի ժամանակահատվածում տեսախցիկները պետք է տեղադրված լինեն խաղադաշտի կենտրոնական գծի ուղղությամբ և յուրաքանչյուր կիսադաշտի դարպասային գծին զուգահեռ՝ տուգանային հրապարակի գծի ուղղությամբ: Դաշտի տեր ակումբն առաջինն է ընտրում նկարահանման դիրքը:

**23.08** Առաջնությունների խաղերի ժամանակահատվածներում խաղերը պետք է տեսագրվեն ամբողջությամբ՝ սկսած մրցավարների և թիմերի խաղադաշտ մուտք գործելուց մինչև նրանց խաղադաշտից հեռանալը, այդ թվում՝ խաղի ընթացքում տեղի ունեցող միջադեպերը: Խաղի օրվա և ժամի լուսագիրը տեսագրության ամբողջ ընթացքում էկրանի վրա պարտադիր է:

**23.09** Հայաստանի Պրեմիեր լիգայի և Հայաստանի Գավաթի խաղարկության խաղերի տեսագրությունները կարող են ուղարկվել ՀՖՖ Մրցավարական և տեսչական բաժին՝ referee@ffa.am էլեկտրոնային փոստի հասցեով (հման տեսքով կամ վերբեռնված որևէ վիրտուալ տիրույթում) ոչ ուշ, քան մինչև հաջորդ աշխատանքային օրը՝ ժամը 15:00-ն:

**23.10** Առաջին Խմբի առաջնության տեսագրությունները երկու ակումբների կողմից պետք է ուղարկվեն ՀՖՖ Մրցավարական և տեսչական բաժին՝ referee@ffa.am էլեկտրոնային փոստի հասցեով (հման տեսքով կամ վերբեռնված որևէ վիրտուալ տիրույթում) ոչ ուշ, քան մինչև հաջորդ աշխատանքային օրը՝ ժամը 15:00-ն: Հյուրընկալող ակումբը պետք է ուղարկի բոլոր երեք տեսախցիկների տեսագրությունները:

**23.11** 4-րդ պաշտոնյային տրամադրել փոխարինման սարքին երկու էլեկտրոնային ցուցատախտակ և նվազագույնը 2 հատ եզրային մրցավարի համար նախատեսված, գործող ԻՖԱԲ խաղի կանոններին համապատասխանող դրոշակ:

**23.12** Առաջին խմբի առաջնության խաղի ժամանակահատվածում փոխարինման էլեկտրոնային ցուցատախտակի անսարքության հայտնաբերման դեպքում դաշտի տեր ակումբը պարտավոր է տրամադրել երկրորդ էլեկտրոնային կամ մեխանիկական հաշվի ցուցատախտակ՝ սարքին վիճակում:

**23.13** ՀՊԼ և ՀԳԽ խաղերի անցկացման մարզադաշտում ապահովել խաղի հաշիվը ցույց տվող էլեկտրոնային սարքին լուսատախտակի առկայությունը, որը պետք է ցուցադրի

խաղի ժամանակը՝ պայմանով, որ այն կանգնեցվում է յուրաքանչյուր խաղակեսի հիմնական ժամանակի ավարտին, այսինքն՝ համապատասխանաբար 45 և 90 րոպեներից հետո: Այս պայմանը կիրառվում է նաև խաղի լրացուցիչ ժամանակի դեպքում (այսինքն՝ 105 և 120 րոպեներից հետո): Այս կետը կարող է չկիրառվել միայն ՀԳԽ 1/16 և 1/8 եզրափակչում, երբ ՀԳԽ մասնակից ակումբը ներկայացնում է Առաջին խումբը և/կամ Սիրողական Ա լիգան, որի/որոնց մարզադաշտում բացակայում է համապատասխան լուսատախտակի առկայությունը:

**23.14** Տրամադրել թիմերի և մրցավարների համար նախատեսված հանդերձարաններ:

**23.15** Խաղը սպասարկող մրցավարական անձնակազմի նախավարժանքի համար սահմանել հատուկ առանձնացված տարածք (կոներով գծված՝ դաշտի միջին գծից հաշված 30 մ երկարությամբ և 30 մ լայնությամբ) և արգելել թիմերի ֆուտբոլիստների և թիմերի անձնակազմերի կողմից սահմանված գոտի մուտք գործելը՝ համաձայն հավելված 3-ի:

**23.16** Նախախաղային խորհրդակցության ժամանակ ՀՖՖ պատվիրակի հաստատմանը ներկայացնել խաղի մեկնարկի հետհաշվարկի ձևաթուղթը:

**23.17** Խաղի մեկնարկից 90 րոպե առաջ փակցնել ՀՖՖ պատվիրակի կողմից հաստատված խաղի մեկնարկի հետհաշվարկի ձևաթուղթը մրցող թիմերի, մրցավարների հանդերձարաններում և պատվիրակի սենյակում, ինչպես նաև տրամադրել այն խաղի հեռարձակողին:

**23.18** Տրամադրել պատվիրակի համար նախատեսված սենյակ մրցավարական սենյակի հարևանությամբ՝ անխափան հոսանքի և ինտերնետի առկայությամբ:

**23.19** Արգելել կողմնակի, որակազրկված անձանց մուտքը մրցավարական հանդերձարան և պատվիրակի սենյակ: Սույն կետի շրջանակներում տվյալ խաղի սպասարկող անձնակազմից, մրցավարների հետ կապ պահպանող թիմերի մեկական ներկայացուցիչներից, ՀՖՖ ներկայացուցիչներից բացի մնացած բոլոր անձինք համարվում են կողմնակի:

**23.20** Ապահովել մրցավարական անձնակազմի, պատվիրակի և տեսուչի անվտավանգությունը, ինչպես նաև կարգադրիչների կամ անվտանգության աշխատակիցների միջոցով ապահովել մրցավարական անձնակազմի՝ հանդերձարանից դեպի խաղադաշտ և հետադարձ ուղղությամբ ուղեկցումը:

**23.21** Տրամադրել նախախաղային խորհրդակցության համար պատշաճ սենյակ՝ ապահովված համապատասխան քանակի աթոռներով, ինչպես նաև մարզահագուստների ստուգման և պատվիրակի համար նախատեսված սեղաններով:

**23.22** Տրամադրել հակադոպինգային ստուգման պայմաններին համապատասխանող սենյակ:

**23.23** Խաղի նշանակված մեկնարկից նվազագույնը 60 րոպե առաջ մարզադաշտի տարածքում ապահովել պատգարակի առկայությունը և պատգարակ տեղափոխող անձնակազմի (առնվազն 2 հոգի) ներկայությունը:

**23.24** Խաղի նշանակված մեկնարկից նվազագույնը 60 րոպե առաջ մարզադաշտի տարածքում ապահովել շտապօգնության մեքենայի և բուժանձնակազմի ներկայությունը: Շտապօգնության մեքենան պարտադիր կերպով պետք է համալրված լինի՝

- ավտոմատ դեֆիբրիլյատորով,
- մեջքի ֆիքսատորով պատգարակով,
- առաջին բուժօգնության անձնակազմով,
- առաջին բուժօգնության պայուսակով,
- շարժական թթվածնով:

Այն պարագայում, երբ շտապօգնության մեքենան և բուժանձնակազմը մարզադաշտում չեն գտնվում խաղի մեկնարկից 60 րոպե առաջ, ապա խաղի Պատվիրակը՝ խորհրդակցելով ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի հետ, կարող է հետաձգել խաղի մեկնարկը առավելագույնը 60 րոպեով: Տվյալ դեպքում խաղի Պատվիրակը անմիջապես անցկացնում է խորհրդկացություն՝ երկու թիմերի ներկայացուցիչների և մրցավարի մասնակցությամբ, որի ընթացքում վերջնական որոշում է կայացվում խաղի մեկնարկի վերաբերյալ՝ կախված տվյալ մարզադաշտի լուսավորության համակարգի առկայությունից: Խորհրդակցության ընթացքում խաղի Պատվիրակը վերջնական որոշում և կողմերին հայտնում է շտապօգնության մեքենայի և բուժանձնակազմի ժամանանման նոր վերջնաժամկետը, որի չպահմանման դեպքում խաղը համարվում է չկայացած դաշտի տեր ակումբի մեղքով:

Սույն հոդվածում սահմանված՝ բոլոր սարքավորումներով կահավորված շտապօգնության մեքենայի բացակայության պարագայում թիմերը չեն կարող դուրս գալ նախավարժանքի՝ մինչև շտապօգնության մեքենայի ժամանումը, բացառությամբ այն դեպքերի, երբ մարզադաշտում առկա է սույն հոդվածում սահմանված բոլոր բժշկական սարքավորումները և ներկա է համապատասխան որակավորմամբ բժշկական անձնակազմը:

**23.25** Եթե խաղին ներկա է շտապօգնության մեկ մեքենա իր բուժանձնակազմով, և անհրաժեշտություն է առաջանում խաղին մասնակից անձանց անմիջապես հիվանդանոց տեղափոխել, խաղը դադարում է և վերսկսվում է միայն մարզադաշտում շտապօգնության մեքենայի առկայության դեպքում, որը պետք է համալրված լինի 23.24 կետի համապատասխան սարքավորումներով: Նման դեպքերում խաղը մրցավարի կողմից դադարեցվում է առավելագույնը 30 րոպեով՝ կախված տվյալ մարզադաշտի լուսավորության համակարգի առկայությունից, և կարող է շարունակվել միայն 23.24 կետում սահմանված պահանջների համապատասխանող շտապօգնության մեքենայի մարզադաշտում ներկայության դեպքում: Սույն կետի պահանջների չկատարման դեպքում խաղը համարվում է անավարտ և չկայացած դաշտի տեր ակումբի մեղքով և կարգավորվում է սույն կանոնակարգի հոդված 25-ով:

**23.26** Խաղից մեկ օր առաջ հյուր թիմի պահանջով վերջինիս տրամադրել խաղադաշտ այն մարզադաշտում, որտեղ անցկացվելու է պաշտոնական հանդիպումը՝ առավելագույնը 60 րոպե տևողությամբ նախախաղային մարզում անցկացնելու նպատակով: Եղանակային անբարենպաստ պայմանների պարագայում հյուր թիմին կարող է տրամադրվել որակապես հավասարազոր այլընտրանքային խաղադաշտ:

**23.27** Պատվավոր հյուրերի (VIP) համար առանձնացված գոտում յուրաքանչյուր խաղին տրամադրել 5 նստատեղ ՀՖՖ-ի ներկայացուցիչների համար (ի լրումն պատվիրակի և տեսուչի համար կենտրոնական հատվածում նախատեսված նստատեղերի) և 10 նստատեղ՝ հյուր թիմի ղեկավար անձնակազմի և պաշտոնյաների համար:

**23.28** Ապահովել պատվավոր հյուրերի (VIP) համար առանձնացված գոտում գտնվող անձանց անվտանգությունը, այդ գոտում մուտքը թույլատրել միայն համապատասխան տոմսերի և/կամ անցագրերի առկայության դեպքում:

**23.29** Ապահովել գնդակ վերադարձնող պատանի 8-12 ֆուտբոլիստի ներկայությունը խաղի ընթացքում, որոնց մարզահագուստի գույնը պետք է տարբերվի մրցող թիմերի և մրցավարների մարզահագուստների գույներից:

**23.30** Գնդակ վերադարձնող պատանի ֆուտբոլիստներին արգելվում է խաղի ժամանակահատվածում խաղալ գնդակով մարզադաշտի սպորտային գոտում:

**23.31** Ապահովել, որ խաղադաշտին անմիջապես հարող տարածքը լինի ապահով ֆուտբոլիստների, մրցավարների և գնդակ վերադարձնող պատանի ֆուտբոլիստների

համար, անհրաժեշտության դեպքում ապահովել լրացուցիչ բարձրորակ, կանաչ արհեստական խոտածածկով:

**23.32** VAR համակարգի անխափան և ճիշտ աշխատանքը ապահովելու նպատակով յուրաքանչյուր ակումբ պետք է աջակցի Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիային և նրա կողմից ընտրված Տեխնոլոգիական մատակարարին՝ իրենց մարզադաշտում համապատասխան համակարգի տեղակայման և օգտագործման, պահպանման, հատուկ պայմանների ապահովման, ներառյալ՝ ակումբներին նախօրոք տրամադրված անհրաժեշտ սարքավորումների սպասարկման հարցում:

**23.33** Վերոգրյալի ապահովման նպատակով համապատասխան դաշտի տեր ակումբը պետք է ապահովի հետևյալ գործողությունների անխափան իրականացումը, մասնավորապես՝

- Խաղասկզբից 4,5 ժամ առաջ Մրցավարի Վերանայման Գոտու (RRA) համար նախատեսված սարքավորումները հանձնել VAR համակարգի աշխատակիցներին:

- Վերոգրյալ ժամանակահատվածից սկսած մինչև խաղի ավարտը՝ դաշտի տեր ակումբը պետք է ապահովի էլեկտրոէներգիայի՝ սարքավորումների շահագործման համար անհրաժեշտ անխափան աշխատանք:

- Մարզադաշտի գծանշումները պետք է լինեն ավարտված խաղից առնվազն 4 ժամ առաջ, գծանշված առավելագույնս ուղիղ, պարզ և հստակ:

- VAR համակարգի կարգավորումներն իրականացնելու ողջ ընթացքում Խաղադաշտը պետք է լինի մաքուր և ազատ ցանկացած տեսակի ավելորդ պարագաներից (օրինակ՝ մարզումային դարպասներ, մարզումային պարագաներ և այլն):

- RRA-ն պետք է նշագծվի 2մ x 2մ չափսի կետավոր գծով:

- Դաշտի տեր ակումբը պետք է ապահովի առնվազն մեկ կարգադրիչի ներկայություն RRA անմիջական մոտակայքում՝ ապահովելու համար սարքավորումների անվտանգությունն ու ոչ իրավասու անձանց մուտքի արգելքը նշված գոտի:

- Խաղասկզբից 1,5 ժամ առաջ դաշտի տեր ակումբը պետք է տրամադրի գնդակ՝ սինխրոնիզացիան ապահովելու նպատակով. այս գործառույթը իրականցվում է բացառապես խաղադաշտի վրա:

- Խաղադաշտում ձնածածկույթի առկայության դեպքում այն պետք հեռացվի խաղադաշտի գծերից առնվազն մեկ մետր և (կամ) ՀՖՖ այլ կանոնակարգերով սահմանված համապատասխան հեռավորության վրա:

- Ակումբները պարտավոր են չխոչընդոտել ՀՖՖ համապատասխան բաժնի կողմից նշանակված VAR համակարգի աշխատակիցներին վերջիններիս կողմից իրականացվող աշխատանքներում՝ ապահովելով նրանց անխափան մուտքը բոլոր անհրաժեշտ գոտիներ՝ ներառյալ խաղադաշտ:

**23.34** Վերոգրյալ պահանջներից որևէ մեկի չպահպանման դեպքում ՀՖՖ-ն չի կարող երաշխավորել համակարգի պատշաճ աշխատանքը, որը կարող է հանգեցնել վիճարկելի որոշումների կայացման:

## Հոդված 24. Լռության րոպե, սոցիալական և հասարակական նշանակության, ռասիզմի դեմ պայքարի և արդար խաղի միջոցառումները

**24.01** ՀՖՖ-ի կողմից մրցումների շրջանակներում խաղերի ժամանակահատվածում առաջարկվող կամ կազմակերպվող մեկ րոպե լռության արարողության, ինչպես նաև բոլոր սոցիալական և հասարակական նշանակության, ռասիզմի դեմ պայքարի և արդար խաղի միջոցառումները ենթակա են պարտադիր կատարման ակումբների կողմից:

**24.02** Մասնակից ակումբների կողմից խաղերի ժամանակ որևէ միջոցառման, այդ թվում՝ մեկ րոպե լռության արարողության կազմակերպման դեպքում, նախաձեռնող ակումբը խաղից նվազագույնը 2 օր առաջ պետք է գրավոր կերպով դիմի ՀՖՖ ֆուտբոլի դեպարտամենտին՝ անհրաժեշտ գրավոր համաձայնություն ստանալու նպատակով: Համապատասխան միջոցառումն անցկացնելու համար գրավոր կերպով չդիմելու և գրավոր կերպով համաձայնություն չստանալու դեպքում՝ տվյալ միջոցառման անցկացումը կարող է արգելվել ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի կողմից: Նախապես չնախատեսված առաջարկությունների դեպքում նախաձեռնող ակումբը խաղից նվազագույնը 2 ժամ առաջ պետք է դիմի տվյալ խաղի պատվիրակին՝ բանավոր համաձայնություն ստանալու նպատակով: Այդ դեպքում պատվիրակը պարտավոր է նախապես քննարկել ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի հետ և համաձայնության առկայության դեպքում միջոցառման անցկացման վերաբերյալ տալ բանավոր թույլտվություն: Եթե նախաձեռնող ակումբը խաղից նվազագույնը 2 ժամ առաջ չի դիմել խաղի պատվիրակին, ապա դրանից հետո դիմելու դեպքում նախաձեռնող ակումբը չի կարող ստանալ միջոցառման անցկացման համաձայնություն:

**24.03** Ցանկացած պարագայում միջոցառումների թույլտվության և դրա անցկացման իրավունքը պատկանում է ՀՖՖ ֆուտբոլի դեպարտամենտին:

**24.04** Բոլոր դեպքերում կազմակերպվող միջոցառումները և արարողությունները չպետք է ազդեն խաղի մեկնարկային ժամի վրա:

## Հոդված 25. Չկայացած և անավարտ խաղերը

**25.01** Չկայացած կամ անավարտ են համարվում այն խաղերը, որոնք համապատասխանաբար, չեն կայացել կամ ընդհատվել են և չեն շարունակվել հետևյալ պատճառներից որևէ մեկի հիմքով՝

ա) եղանակային անբարենպաստ պայմաններ,

բ) ֆորս-մաժորային իրավիճակ,

գ) լուսավորման համակարգի խափանում, որը տեղի է ունեցել անկախ դաշտի տեր ակումբի կամքից, և որը հնարավոր չի եղել վերականգնել 60 րոպեի ընթացքում,

դ) թիմի կողմից խաղադաշտի լքում,

ե) երրորդ անձանց միջամտություն, որն էականորեն խոչընդոտում կամ անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա,

զ) թիմի ֆուտբոլիստի, անձնակազմի անդամի, պաշտոնյայի և/կամ երկրպագուի անկարգապահ վարքագիծ, որն անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա,

է) հասարակական կարգի այնպիսի խախտում, որն անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա,

ը) թիմի կազմում խաղադաշտում 7-ից պակաս ֆուտբոլիստների առկայություն,

թ) անկանխատեսելի հանգամանք, որն անհնար է դարձնում խաղի մեկնարկը, ընթացքը և/կամ շարունակությունը կամ ազդում է խաղի արդյունքի վրա,

ժ) սույն կանոնակարգի 23.25 կետում նկարագրված՝ խաղի ժամանակահատվածում շտապօգնության մեքենայի բացակայության դեպքում:

**25.02** Խաղը չկայացած կամ անավարտ համարելու մասին որոշումը կայացնում է խաղի մրցավարը՝ պատվիրակի հետ խորհրդակցության արդյունքում, հիմնվելով գործող ԻՖԱԲ խաղի կանոնների վրա:

**25.03** Եթե խաղը չի կայացել կամ ընդհատվել ու չի շարունակվել սույն հոդվածի 25.01 մասի «ա», «բ» կամ «գ» կետերի հիմքով՝ անկախ ակումբների կամքից, ապա այն տեղի է ունենում կամ շարունակվում է հաջորդ օրը նույն մարզադաշտում՝ խաղի ընդհատման րոպեին հաջորդող րոպեից: Եթե հանդիպումը չի կարող նշանակվել հաջորդ օրը, ապա ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը նշանակում է հանդիպումը մեկ այլ օր կամ օրացուցային պահեստային օր:

**25.04** Տեղափոխված հանդիպման անցկացման վայրը մնում է անփոփոխ: Եթե որոշակի հանգամանքներով պայմանավորված՝ հնարավոր չէ խաղն անցկացնել նախանշված վայրում, ապա ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը պետք է հանդիպումը վերանշանակի մեկ այլ խաղադաշտում:

**25.05** Ֆորս-մաժորային իրավիճակներում և որոշ բացառություն կազմող դեպքերում, որոնց առկայության պարագայում վտանգվում է հանդիպման անցկացումը կամ հետագա ընթացքը, դաշտի տեր ակումբը պարտավոր է ապահովել մեկ այլ (պահեստային) մարզադաշտով, որը խաղաշրջանի մեկնարկից առաջ պետք է ընդունված լինի ՀՖՖ Արտոնագրման բաժնի կողմից: ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը կարող է կիրառել բացառություններ պահեստային մարզադաշտերի՝ ՀՖՖ Ենթակառուցվածքային կանոնակարգի պահանջներին համապատասխանելիության հարցում:

**25.06** Եթե մրցավարը որոշել է դադարեցնել խաղը, ապա մնացած խաղաժամանակը պետք է անցկացվի հետևյալ պայմաններում՝

**25.06.1.** խաղի արձանագրությունում պետք է լինեն միայն այն խաղացողները և թիմերի անձնակազմերը, որոնք հանդիպման դադարեցման պահին գտնվել են խաղադաշտում և/կամ պահեստայինների նստարանին: Բացառություն են կազմում այն խաղացողները և անձնակազմի անդամները, որոնք հանդիպման դադարեցման պահին փոխարինվել են կամ հեռացվել: Հանդիպման դադարեցման պահին խաղադաշտում գտնված խաղացողները չպետք է նշվեն արձանագրության մեջ որպես պահեստային խաղացող, երբ հանդիպումը վերսկսվի,

**25.06.2.** բոլոր կարգապական տույժերն ու պատժամիջոցները, որոնք եղել են մինչ հանդիպման դադարեցումը, մնում են անփոփոխ,

**25.06.3.** բոլոր զգուշացումները, որոնք տրվել են մինչ հանդիպման դադարեցումը, չեն հաշվարկվում դեղին քարտերի հաշվարկում, քանի դեռ հանդիպումն ամբողջությամբ չի ավարտվել,

**25.06.4.** մինչև խաղի դադարեցումը հեռացված ֆուտբոլիստ(ներ)ը չեն կարող փոխարինվել մնացած խաղաժամանակում, և մեկնարկային կազմի խաղացողների քանակը մնում է նույնը, ինչ մինչև խաղի դադարեցվելը,

**25.06.5.** հանդիպումը պետք է վերսկսվի նույն տեղում, որտեղ հանդիպումը դադարեցվել է (այսինքն՝ տուգանային հարված, եզրային նետում, դարպասից հարված, անկյունային հարված, 11-մետրանոց հարված և այլն)։ Եթե խաղն ընդհատվում է իր բնականոն ընթացքի պահին, ապա պետք է վերսկսվի վիճաբանական գնդակի նետումով,

**25.06.6.** անավարտ հանդիպման դադարի ժամը, դադարեցնելու պատճառը, կայացրած կարգապահական տույժերը և հանդիպման խաղացված հատվածի հաշիվը պետք է արտացոլվեն Ֆուտբոլի կառավարման համակարգում և արձանագրության թղթային տարբերակում, եթե այդպիսին օգտագործվում է, ինչպես նաև՝ պատվիրակի հաշվետվության մեջ: Հանդիպման խաղացված հատվածի հաշիվը և կարգապահական տույժերը հանդիպման վերսկսումից հետո պահպանվում են:

Հանդիպումն ավարտին հասցնելու համար կազմվում են առանձին արձանագրություն և պատվիրակի առանձին հաշվետվություն:

**25.07** Եթե անավարտ խաղին մասնակցած ֆուտբոլիստ(ներ)ն առողջական խնդիրների պատճառով չի/չեն կարող մասնակցել խաղի շարունակությանը, իսկ թիմի՝ փոխարինումներ կատարելու հնարավորությունները սպառվել են, ապա ֆուտբոլիստ(ներ)ը կարող է/են փոխարինվել տվյալ խաղի արձանագրությունում նշված այլ այնպիսի ֆուտբոլիստ(ներ)ով, որը(ոնք) ընդհատված խաղին չի/չեն մասնակցել: Եթե տվյալ խաղի արձանագրությունում պահեստային ֆուտբոլիստներ չկան, ապա տվյալ թիմը խաղին մասնակցում է առողջական խնդիրների պատճառով խաղի շարունակությանը մասնակցել չկարողացած ֆուտբոլիստների թվին հավասար պակաս թվով ֆուտբոլիստներով:

**25.08** Սույն հոդվածի 25.07 մասում նշված առողջական խնդիրների մասին ակումբը խաղի շարունակության մեկնարկից առնվազն մեկ ժամ առաջ հայտնում է խաղի պատվիրակին՝ նրան փոխանցելով թիմի գլխավոր մարզչի և ակումբի բժշկի կողմից ստորագրված տեղեկանք, ինչպես նաև ՀՖՖ Բժշկական դեպարտամենտի պահանջով ակումբը պարտավոր է ներկայացնել որևէ բժշկական հաստատության կողմից ներկայացված տեղեկանք տվյալ առողջական խնդրի մասին:

**25.09** Սույն հոդվածի 25.01 մասի «դ»-ից «ժ» կետերով ամրագրված հիմքերով՝ խաղն ընդհատվելու պարագայում այն չի շարունակվում և չկայանալու պարագայում չի վերախաղարկվում:

**25.10** Սույն հոդվածի 25.01 մասի «դ»-ից «ժ» կետերով ամրագրված հիմքերով՝ խաղն ընդհատվելու կամ չկայանալու դեպքում մեղավոր թիմի հաշվին գրանցվում է տեխնիկական պարտություն 0:3 հաշվով, իսկ մրցակցի հաշվին՝ տեխնիկական հաղթանակ 3:0 հաշվով: Եթե խաղն ընդհատվել կամ չի կայացել երկու թիմերի մեղավորության կամ դիտավորության պատճառով, ապա երկու թիմերին գրանցվում է տեխնիկական պարտություն 0:3 հաշվով: ՀՖՖ-ի Կարգապահական և էթիկայի կոմիտեն իրավասու է սահմանել այլ պատժամիջոցներ ՀՖՖ-ի Կարգապահական և էթիկային կանոնակարգի շրջանակներում:

**25.11** Սույն հոդվածի 25.01 մասի «գ» կետով սահմանված դեպքում խաղի ընդհատման կամ չկայանալու պարագայում դաշտի տեր ակումբը պարտավոր է հյուր թիմին փոխհատուցել խաղի մասնակցության համար կատարված բոլոր փաստացի ծախսերը, ինչպես նաև փոխհատուցել ՀՖՖ-ին պատճառած կոմերցիոն այն բոլոր վնասները (բացառությամբ բաց թողնված եկամտի), որոնք առաջացել են տվյալ խաղի հեռարձակման խափանման հետևանքով:

**25.12** Եթե խաղը չի կայացել կամ ընդհատվել է լուսավորման համակարգի խափանման պատճառով, և դաշտի տեր ակումբը չի ապացուցում ՀՖՖ-ին, որ այդ խափանումը տեղի չի ունեցել դաշտի տեր ակումբի մեղքով, ապա այդ ակումբի թիմի հաշվին գրանցվում է տեխնիկական պարտություն 0:3 հաշվով:

**25.13** Եթե թիմերի ֆուտբոլիստների կողմից դրսևորվել է այնպիսի անվայել վարքագիծ, որն անհնար է դարձրել խաղի մեկնարկը կամ շարունակությունը, ապա խաղը համարվում է կայացած, բայց թիմերի հաշվին միավոր չի գրանցվում:

**25.14** Եթե խաղի արդյունքը չեղյալ է համարվել, ապա խաղի ընթացքում գրանցված գոլերը ռմբարկուների հաշվարկում չեն ներառվում, իսկ կարգապահական բոլոր տույժերը, ինչպես նաև դեղին և կարմիր քարտերը մնում են ուժի մեջ:

**25.15** Չկայացած կամ անավարտ խաղերը, որտեղ որևէ թիմի հաշվին գրանցվել է տեխնիկական պարտություն, չեն կարող հաշվարկվել որպես որակազրկումը մարելու միջոց:

**25.16** Ֆուտբոլիստների և թիմի անձնակազմի որակազրկումները գործում են մինչև վերջիններիս կողմից բաց թողնվելիք խաղի, իսկ մեկից ավել խաղերի պարագայում՝ մինչև վերջին խաղի ավարտը ներառյալ: Որակազրկված ֆուտբոլիստը կամ անձնակազմի անդամն իրավունք ունի մասնակցելու տվյալ խաղին, եթե բաց թողնվելիք վերջին խաղը տվյալ խաղի մեկնարկից առնվազն 60 րոպե առաջ ամբողջությամբ ավարտվել է:

**25.17** Անավարտ կամ չկայացած խաղի ընդհատվելու կամ չկայանալու պատճառը, ժամանակը և հաշիվը գրանցվում են տվյալ խաղի արձանագրության մեջ և պատվիրակի հաշվետվության մեջ:

**25.18** Սույն հոդվածի 25.01 մասում նշված որևէ հիմքով ընդհատված, սակայն մինչև 60 րոպեի ընթացքում վերսկսած և բնականոն ընթացքով շարունակված խաղն անավարտ խաղ չի համարվում: Այդ խաղը վերսկսվում է ընդհատման րոպեին հաջորդող րոպեից, և խաղի շարունակության ժամանակ գործում են այն բոլոր կարգավորումները և կանոնները, որոնք կգործեին չընդհատված խաղի դեպքում: Այդ խաղի արձանագրությունում նշում է կատարվում խաղի ընդհատման պատճառի, ընդհատման և վերսկսման ժամերի, ինչպես նաև մրցավարի կողմից կարևոր համարվող այլ հանգամանքների մասին:

## Հոդված 26. Թիմերի չներկայանալը խաղին, առաջնություններին մասնակցությունից հրաժարվելը կամ առաջնություններից հեռացվելը

**26.01** Մասնակից թիմերը պարտավոր են ժամանել մարզադաշտ խաղի նշանակված ժամից նվազագույնը 75 րոպե առաջ, իսկ թիմի անձնակազմի անդամները, որոնք պետք է մասնակցեն նախախաղային խորհրդակցությանը, պետք է մարզադաշտ ժամանեն տվյալ խաղից նվազագույնը 120 րոպե առաջ:

**26.02** Եթե թիմն ուշանում է մարզադաշտ ժամանելու համար սահմանված ժամանակից, ապա պարտավոր է այդ մասին նախապես հայտնել տվյալ խաղի պատվիրակին:

**26.03** Եթե թիմը խաղասկզբից 60 րոպե առաջ մարզադաշտ չի ժամանել և ուշացման պատճառների մասին խաղի պատվիրակին չի տեղեկացրել, ապա համարվում է խաղին չներկայացած: Խաղի մրցավարը և պատվիրակը պարտավոր են արձանագրել տվյալ փաստը այդ խաղի արձանագրությունում ու պատվիրակի հաշվետվության մեջ և ներկայացնել ՀՖՖ:

**26.04** Եթե թիմը սահմանված ժամկետում տեղեկացնում է խաղից ուշանալու մասին, ապա պատվիրակը, խորհրդակցելով խաղի մրցավարի և ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի հետ, կարող է որոշում կայացնել թիմ(եր)ի ուշացման պատճառով խաղասկիզբը առավելագույնը 60 րոպեով հետաձգելու մասին:

**26.05** Սույն կանոնակարգի դրույթները խախտելու, ՀՖՖ-ի որոշումները չկատարելու և իր գործողություններով կամ անգործությամբ ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի հիմնարար սկզբունքները չպահպանելու, չկատարելու, չընդունելու դեպքում թիմը ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշմամբ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգով սահմանված կարգով կարող է հեռացվել տվյալ առաջնությունից:

**26.06** Եթե ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից տվյալ առաջնությունից (ՀՊԼ կամ ԱԽ) հեռացված թիմը մասնակցել է 50% կամ պակաս խաղերի, ապա այդ խաղերի արդյունքները չեղյալ են համարվում, և տվյալ թիմի ու մրցակից թիմերի կողմից այդ խաղերում վաստակած միավորները, խփած և բաց թողած գնդակները, ինչպես նաև դեղին և կարմիր քարտերը զրոյացվում են՝ բացառությամբ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշմամբ սահմանված որակազրկումների: Եթե թիմը մասնակցել է տվյալ առաջնության 50%-ից ավել խաղերի, ապա այդ խաղերում վաստակած միավորները, խփած և բաց թողած գնդակները, ինչպես նաև դեղին և կարմիր քարտերը մնում են ուժի մեջ, սակայն տվյալ թիմը հեռացվում է առաջնությունից և զրկվում է ՈՒԵՖԱ-ի կողմից կազմակերպվող մրցաշարերին մասնակցելու իրավունքից: Այն թիմերի օգտին, որոնք տվյալ առաջնության մնացած հատվածում հանդիպելու էին հեռացված թիմի հետ, մնացած բոլոր խաղերում գրանցվում է տեխնիկական հաղթանակ 3:0 հաշվով:

**26.07** Այն դեպքում, երբ առաջնությունից հեռացված թիմի դեմ խաղերում ստացած դեղին քարտ(եր)ը զրոյացվել են, սակայն այդ խաղերում ստացած դեղին քարտ(եր)ի պատճառով մինչև թիմի առաջնությունից հեռացումը ֆուտբոլիստն արդեն բաց էր թողել սահմանված քանակի խաղ, ապա այդ ֆուտբոլիստը չպետք է կրկին բաց թողնի խաղ հեռացված թիմի

քարտերը զրոյացնելուց հետո որակազրկման նույն քանակի դեղին քարտեր կուտակելուց հետո:

**26.08** Եթե Կարգապահական և Էթիկայի կոմիտեի կողմից ընդունված որոշմամբ թիմը հեռացվել է Գավաթի խաղարկությունից կամ զրկվել է տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող մրցումների խաղերին մասնակցելու իրավունքից, ապա Գավաթի խաղարկությունում տվյալ թիմի արդեն անցկացրած բոլոր խաղերի արդյունքները չեղյալ են համարվում, և այդ խաղերի ընթացքում ֆուտբոլիստների ստացած դեղին և կարմիր քարտերը զրոյացվում են՝ բացառությամբ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշմամբ սահմանված որակազրկումների: Սույն կետի դրույթները կիրառվում են նույնիսկ այն դեպքերում, եթե մինչև հեռացումը տվյալ թիմն արդեն դուրս էր մնացել Գավաթի խաղարկությունից:

**26.09** Այն թիմերը, որոնք հեռացվել են Հայաստանի Պրեմիեր լիգայից ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշմամբ կամ սեփական նախաձեռնությամբ հրաժարվել են Հայաստանի Պրեմիեր լիգայի մասնակցությունից, ապա հաջորդ մրցաշրջանում կարող են մասնակցել միայն Առաջին խմբի առաջնությանը:

**26.10** Այն թիմերը, որոնք հեռացվել են Առաջին խմբի առաջնությունից ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշմամբ կամ սեփական նախաձեռնությամբ հրաժարվել են Առաջին խմբի առաջնության մասնակցությունից, ապա հաջորդ մրցաշրջանում չեն կարող մասնակցել Առաջին խմբի առաջնությանը:

**26.11** Այն թիմերը, որոնք հեռացվել են Հայաստանի Գավաթի խաղարկությունից ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշմամբ կամ սեփական նախաձեռնությամբ հրաժարվել են Հայաստանի Գավաթի խաղարկության մասնակցությունից, ապա հաջորդ մրցաշրջանում զրկվում են Հայաստանի Գավաթի խաղարկությանը մասնակցելու իրավունքից:

**26.12** Առաջնությունից ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից հեռացված կամ սեփական նախաձեռնությամբ մասնակցությունից հրաժարված թիմի մուտքավճարը վերադարձման ենթակա չէ:

**26.13** Ակումբը, որը ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշմամբ հեռացվել է կամ սեփական նախաձեռնությամբ հրաժարվել է առաջնություններին մասնակցությունից, կորցնում է ՀՖՖ-ի և նրա պաշտոնական գործընկերների կողմից իրեն հասանելի բոլոր վճարումները ստանալու իրավունքներից:

**26.14** Սուպերգավաթի խաղարկությունն անցկացվում է նախորդ մրցաշրջանի Հայաստանի Պրեմիեր լիգայի և Հայաստանի Գավաթի խաղարկության հաղթող թիմերի միջև: Եթե Հայաստանի Պրեմիեր լիգայի և Հայաստանի Գավաթի խաղարկության հաղթողը միևնույն թիմն է, ապա Սուպերգավաթի խաղարկությունն անցկացվում է Հայաստանի Պրեմիեր լիգայի հաղթողի և Հայաստանի Գավաթի խաղարկության եզրափակչի մասնակցի միջև:

**26.15** Եթե Սուպերգավաթի մասնակից որևէ թիմ հեռացվել է ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից (առաջնությունից կամ գավաթի խաղարկությունից) կամ երկու թիմն էլ հրաժարվում է/են մասնակցությունից, ապա ՀՖՖ-ն իրավունք ունի Սուպերգավաթի անցկացման վերաբերյալ հատուկ որոշում կայացնել: Իսկ եթե թիմերից միայն մեկն է հրաժարվում և/կամ հեռացվել է ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից (առաջնությունից կամ գավաթի խաղարկությունից), ապա Սուպերգավաթը ՀՖՖ-ի կողմից հանձնվում է մրցակից թիմին:

## Հոդված 27. Նախախաղային խորհրդակցությունը

**27.01** Յուրաքանչյուր հանդիպումից 2 ժամ առաջ խաղի պատվիրակի ղեկավարությամբ անցկացվում է նախախաղային խորհրդակցություն, որին մասնակցում են՝

ա) տեսուչը
բ) մրցավարը կամ խաղը սպասարկող անձնակազմի ներկայացուցիչը,
գ) մրցող ակումբների ներկայացուցիչները,
դ) խաղի կազմակերպման պատասխանատուն,
ե) մարզադաշտի ներկայացուցիչը,
զ) ոստիկանության ներկայացուցիչը,
է) անվտանգության հարցերով պատասխանատուն,
ը) գնդակ վերադարձնող պատանի ֆուտբոլիստների մարզիչը,
թ) մամուլի քարտուղարը կամ ակումբի մեդիա բաժնի աշխատակիցը:

Վերոնշյալ թ) կետի կատարումը պարտադիր է միայն ՀՊԼ խաղերի ժամանակ:

**27.02** Սույն հոդվածի 27.01 մասի «դ», «ե», «զ», «է», «ը» և «թ» կետերում նշված անձանց մասնակցությունն ապահովում է դաշտի տեր ակումբը:

**27.03** Ակումբների կողմից նախախաղային խորհրդակցությանը մասնակցող անձինք մրցավարի ստուգմանն են ներկայացնում ֆուտբոլիստների և դարպասապահի խաղային

մարզահագուստն ամբողջությամբ՝ մարզաշապիկ, կիսավարտիք (կամ սպորտային տաբատ դարպասապահի դեպքում), կիսագուլպա, մարզումային ժիլետներ և գնդակը վերադարձնող պատանի ֆուտբոլիստների մարզահագուստ: Հիմնական հանդերձանքից բացի պետք է ներկայացվեն նաև պաշտպանիչ դիմակներ, պաշտպանիչ գլխարկներ, գունավոր էլաստիկ ժապավեններ, եթե դրանք օգտագործվելու են:

**27.04** Նախախաղային խորհրդակցության ժամանակ մրցավարը հայտարարում է նախապես որոշված նախավարժանք անցկացնելու վայրը:

**27.05** Խաղադաշտի ջրման ժամանակացույցը պետք է սահմանվի դաշտի տեր ակումբի կողմից նախախաղային խորհրդակցության ընթացքում, որը պետք է նշված լինի խաղի հետհաշվարկում: Խաղադաշտը պետք է ջրվի հավասարաչափ:

## Հոդված 28. Առանձնահատկություններ՝ կախված եղանակային պայմաններից

**28.01.** Պրոֆեսիոնալ մրցումների շրջանակներում ըստ Ցելսիուսի -15 աստիճանից ցածր և +40 աստիճանից բարձր եղանակային պայմանների առկայության դեպքում խաղի պատվիրակը, նախապես խորհրդակցելով ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի հետ, կայացնում է որոշում՝ խաղի անցկացման հնարավորության վերաբերյալ:

**28.02.** Բնական խոտածածկով խաղադաշտերում ըստ Ցելսիուսի +32 և բարձր ջերմաստիճանի դեպքում խաղի ժամանակ կիրառվում է երկու ջրային դադար մեկ րոպե տևողությամբ՝ խաղի 30-րդ և 75-րդ րոպեներին: Ջրային դադարի վերաբերյալ որոշումը կայացնում է խաղի պատվիրակը նախախաղային խորհրդակցության ժամանակ և տեղյակ պահում բոլոր շահագրգիռ կողմերին:

**28.03.** Արհեստական խոտածածկով խաղադաշտերում խաղերի ժամանակ շոգ եղանակին կիրառվում է երկու ջրային դադար մեկ րոպե տևողությամբ՝ խաղի 30-րդ և 75-րդ րոպեներին: Ջրային դադարի վերաբերյալ որոշումը կայացնում է խաղի պատվիրակը՝ քննարկելով հանդիպման մրցավարի հետ նախախաղային խորհրդակցության ժամանակ, և տեղյակ պահում բոլոր շահագրգիռ կողմերին:

## Հոդված 29. Մարզադաշտի հաշվի լուսատախտակը

**29.01** Մարզադաշտի հաշվի լուսատախտակների վրա կարող են ցուցադրվել տվյալ հանդիպման կրկնապատկերները: Այնուամենայնիվ, դաշտի տեր ակումբը պետք է իրականացնի կրկնապատկերների ցուցադրումը միայն այն դեպքում, երբ գնդակը խաղի մեջ չէ և/կամ խաղակեսերի ընդմիջման ժամանակ: Այս պայմանը վերաբերում է նաև խաղի լրացուցիչ ժամանակին: Արգելվում է այնպիսի կադրերի ցուցադրումը, որոնք

ա) կարող են ազդեցություն ունենալ խաղի ընթացքի վրա,

բ) կարող են պարունակել հանդիսատեսին ցանկացած ձևի անկարգությունների դրդող, խրախուսող կամ հրահրող երևույթ/տարր,

գ) կարող են պարունակել ցանկացած հասարակական անկարգություն, քաղաքացիական անհնազանդություն կամ որևէ առևտրային և/կամ վիրավորական նյութ,

դ) պարունակում են արդար խաղի սկզբունքներին հակասող ցանկացած գործողություն կամ վարք (ներառյալ ցանկացած պատկեր, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն միտված է ընդգծելու մրցավարի կողմից ընդունված փաստացի որոշումները),

ե) ուղեկցվում են ձայնով:

**29.02** ՀՖՖ-ի պահանջով ակումբները պետք է մարզադաշտի հաշվի լուսատախտակներին ցուցադրեն ՀՖՖ-ի մրցաշարերի ապրանքանիշների հատուկ տեսահոլովակներ/տեսաֆիլմեր, որոնք ներառում են տեղեկատվություն և պատկերներ մրցաշարի բոլոր հանդիպումներից:

## Հոդված 30. Մարզադաշտի անվտանգությունն ու ապահովումը

**30.01** Մրցումների անվտանգության ապահովումը կազմակերպվում է համաձայն ՀՖՖ Ապահովության և անվտանգության կանոնակարգի:

**30.02** Հյուրընկալող թիմը տրիբունայում առանձնացնում և տրամադրում է հյուր թիմի երկրպագուների համար առանձին հատված՝ մարզադաշտի ընդհանուր տարողության առնվազն 5%-ի չափով:

**30.03** Դաշտի տեր ակումբը պետք է ապահովի մարզադաշտում և դրա հարակից տարածքներում ոստիկանների, ինչպես նաև կարգադրիչների և անվտանգության աշխատակիցների պարտադիր ներկայությունը և վերջիններիս աշխատանքային պարտականությունների կատարումը:

**30.04** Պատվիրակը՝ խորհրդակցելով մրցավարի և ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի հետ, իրավունք ունի մինչև խաղի նշանակված մեկնարկային ժամը հետաձգել խաղասկիզբը, անցկացնել կամ չանցկացնել խաղը անվտանգության և ապահովության ոչ պատշաճ մակարդակի, ներառյալ՝ ոստիկանների, կարգադրիչների և/կամ մասնավոր անվտանգության ծառայության աշխատակիցների բացակայության և/կամ անբավարար քանակի պատճառով, եթե դա կարող է վտանգ ներկայացնել խաղի մասնակիցների, մրցավարների և/կամ հանդիսատեսների առողջությանն ու կյանքին:

**30.05** ՀՖՖ Ապահովության և անվտանգության կանոնակարգով արգելված առարկաներ մարզադաշտ բերելը բացառելու համար՝ դաշտի տեր ակումբը կարգադրիչների և անվտանգության աշխատակիցների միջոցով պետք է կազմակերպի հատուկ ստուգում՝ ՀՖՖ Ապահովության և անվտանգության կանոնակարգով սահմանված կարգով:

**30.06** Դաշտի տեր ակումբի կարգադրիչները և անվտանգության աշխատակիցները պետք է համագործակցեն ոստիկանության աշխատակիցների հետ, որպեսզի՝

ա) մարզադաշտ մուտք գործելու իրավունքից զրկված կամ մարզադաշտից հեռացված որևէ անձ չստանա մարզադաշտ մուտք գործելու թույլտվություն՝ ՀՖՖ Ապահովության և անվտանգության կանոնակարգով սահմանված կարգով,

բ) սույն կետի «ա» ենթակետում նշված անձը պետք է ամբողջ խաղի ընթացքում գտնվի մարզադաշտի տարածքից դուրս՝ առնվազն մինչև հանդիսատեսի հեռանալը:

**30.07** Դաշտի տեր ակումբը մարզադաշտում գտնվող հանդիսատեսին պետք է արգելի՝
ա) մարզադաշտում տեղի ունեցող մարզական միջոցառման կազմակերպիչների, մարզադաշտի սեփականատիրոջ և/կամ օրինական տիրապետողի կողմից արգելված վայրերում ծխելը,
բ) իրերի, բանջարեղենի, մրգերի, ցանկացած տեսակի տարայով կամ առանց տարայի հեղուկի նետումը հանդիպման մասնակիցների, հանդիսատեսի, այլ անձանց, ինչպես նաև խաղադաշտի ուղղությամբ,
գ) հանդիսատեսի օգտագործման համար չնախատեսված շինություններում ու կառույցներում գտնվելը (ֆասադներ, ցանկապատեր, պատեր, արգելապատնեշներ, լուսավորության սյուներ, հեռուստատեսային տեսախցիկների պլատֆորմներ, ծառեր, տանիքներ և այլն),
դ) այնպիսի բղավոցները, վանկարկումները, երգերի կատարումը, նշանների և/կամ այլ խորհրդանիշների հասարակական ցուցադրումը, տպագիր նյութերի տարածումը, ինչպես նաև այլ այնպիսի գործողությունների կատարումը, որոնք վիրավորում են միջոցառման

մասնակիցների և/կամ հանդիսատեսի արժանապատվությունը, վարկաբեկում են նրանց, կրում են ծայրահեղական բնույթ կամ պարունակում են ռասսայական, սոցիալական, ազգային կամ ցանկացած այլ խտրական վերաբերմունք,
ե) խաղին ներկայանալ կենդանիների հետ,
զ) մարզադաշտի տարածք մտցնել ցանկացած տեսակի զենք, զինամթերք, կտրող և/կամ ծակող առարկաներ, արցունքաբեր ու նյարդային ազդեցություն ունեցող գազային բալոններ, որպես զենք օգտագործվելու ենթակա կամ հանդիսատեսների առողջությանը հավանական վնաս պատճառող այլ առարկաներ, այդ թվում՝ հովանոցներ, ծանր առարկաներ,
է) մարզադաշտի տարածք մտցնել դյուրավառ ցանկացած նյութ՝ անկախ դրա տեսակից՝ ներառյալ այն նյութերը, որոնք կարող են օգտագործվել դյուրավառ նյութերի կամ ծխի պատրաստման համար (բացառությամբ ծխախոտի, գրպանի պլաստմասե կրակայրիչի), այդ թվում՝ ծխարձակիչներ, ճայթրուկներ, ազդանշանային հրթիռներ, պայթուցիկ, թունավոր և հոտավետ նյութեր, ռադիոակտիվ նյութեր, գազի բալոններ, վառելանյութեր (բացառությամբ լուցկիների, կրակայրիչների և ծխախոտի, այդ թվում՝ էլեկտրոնային):

**30.08** Դաշտի տեր ակումբը պարտավոր է ապահովել հանդիսատեսի (երկրպագուների) մուտքը մարզադաշտի տարածք՝ տոմսերի (ներառյալ՝ ակումբային քարտի, աբոնեմենտի, հրավերի) առկայության դեպքում, իսկ խաղի կազմակերպմանը ներգրավված աշխատակիցների և ԶԼՄ-ների ներկայացուցիչների մուտքը՝ հաստատված այնպիսի հավատարմագրերի առկայության դեպքում, որոնք տալիս են մարզադաշտ մուտք գործելու իրավունք, և որոնց ստուգումն իրականացվում է տվյալ ակումբի կարգադրիչների կողմից: Դաշտի տեր ակումբը հանդիպման մեկնարկից 45 րոպե անց իրավասու է սահմանափակել հանդիսատեսների մուտքը մարզադաշտ՝ անվտանգության աշխատակիցների միջոցով: Հանդիսատեսներին պետք է նախապես տեղեկացնել մարզադաշտ մուտք գործելու արգելքի մասին՝ մուտքի տոմսերի և մարզադաշտի յուրաքանչյուր մուտքի մոտ տեղակայված հատուկ ցուցանակների վրա տեղեկություն տեղադրելու միջոցով:

**30.09** Դաշտի տեր ակումբը պետք է երաշխավորի, որ բոլոր խմիչքները վաճառվեն ու շրջանառվեն վտանգ չներկայացնող թղթե կամ պլաստիկ բաց բաժակներով:

**30.10** Դաշտի տեր ակումբը ոստիկանության աշխատակցի կամ մարզադաշտի անվտանգության պատասխանատուի հետ միասին պետք է կանխի մարզադաշտի ներսում/մերձակայքում հանդիսատեսի (երկրպագուների) կողմից իրականացվող ցանկացած սադրիչ գործողություն (ֆուտբոլիստների, մրցավարների, հակառակորդ թիմի

երկրպագուների հանդեպ սադրիչ խոսքեր, ռասիստական վարքագիծ, պաստառներ կամ դրոշներ և այլն):

**30.11** Նման գործողություններ տեղի ունենալու դեպքում դաշտի տեր ակումբը, ոստիկանության աշխատակիցը կամ տվյալ ակումբի անվտանգության պատասխանատուն պետք է այդ մասին հայտարարենմարզադաշտի ռադիոհանգուցային համակարգի միջոցով և/կամ հեռացնեն ցանկացած վիրավորական նյութ մարզադաշտի տարածքից:

**30.12** Դաշտի տեր ակումբը խաղի ժամանակահատվածումպարտավոր է ապահովել հյուր թիմի և սպասարկող անձնակազմի անվտանգությունը:

# ԳԼՈՒԽ 6: ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ԵՎ ԹԻՄԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ

## Հոդված 31. Ֆուտբոլիստների և թիմի անձնակազմի մասնակցությունը

**31.01** Ֆուտբոլիստները մրցումներին մասնակցում են ֆուտբոլիստի ՀՖՖ նույնականացման քարտով, իսկ բացառիկ դեպքերում՝ քաղաքացիական անձնագրով: ՀՖՖ-ի կողմից սահմանված բացառիկ դեպքում ֆուտբոլիստները խաղին կարող են մասնակցել ՀՖՖ Մրցումների կազմակերպման և անցկացման բաժնի կողմից տրամադրված հատուկ փաստաթղթով:

**31.02** Թիմերի անձնակազմերը խաղին մասնակցում են ՀՖՖ նույնականացման քարտի առկայության դեպքում: ՀՖՖ-ի կողմից սահմանված բացառիկ դեպքում անձնակազմի անդամները խաղին կարող են մասնակցել ՀՖՖ Մրցումների կազմակերպման և անցկացման բաժնի կողմից տրամադրված հատուկ փաստաթղթով:

**31.03** Խաղին կարող են մասնակցել միայն տվյալ խաղի արձանագրությունում նշված ֆուտբոլիստները և թիմի անձնակազմը:

**31.04** Խաղի արձանագրության բովանդակությունը սահմանված է սույն կանոնակարգի հոդված 32-ում:

**31.05** Պրոֆեսիոնալ առաջնություններին օտարերկրյա ֆուտբոլիստների մասնակցությունը չի արգելվում:

**31.06** Սույն կանոնակարգի շրջանակներում Եվրասիական Տնտեսական Միության անդամ պետությունների քաղաքացիները չեն համարվում օտարերկրյա ֆուտբոլիստներ:

**31.07** Յուրաքանչյուր թիմի կողմից խաղի արձանագրությունում կարող է ներկայացվել առավելագույնը 23 ֆուտբոլիստ, որոնցից առավելագույնը 11-ը՝ հիմնական և 12-ը՝ փոխարինող (պահեստային): Թիմի կազմը պետք է վավերացված լինի ակումբի իրավասու պաշտոնյայի և թիմի բժշկի կողմից:

**31.08** Յուրաքանչյուր թիմի կողմից խաղի արձանագրությունում կարող է ներկայացվել առավելագույնը 8 անձնակազմի անդամ, որոնցից մեկը պետք է լինի թիմի բժիշկը: Ակումբներից որևէ մեկի մոտ բժշկի բացակայության դեպքում խաղը չի անցկացվում և համարվում է չկայացած՝ տվյալ ակումբի մեղքով՝ բացառությամբ ֆորս-մաժորային իրավիճակների: Եթե խաղի ընթացքում թիմի բժիշկը մրցավարի կողմից ստանում է

կարմիր քարտ, ապա նա կարող է մնալ տեխնիկական գոտում և շարունակել կատարել իր գործառույթները խաղի մնացած ժամանակահատվածում, եթե տվյալ խաղի արձանագրության մեջ չկա բժշկական անձնակազմի մեկ այլ աշխատակից, ով պետք է համապատասխանի սույն Կանոնակարգի 20.08 դ) կետի պահանջներին:

**31.09** Հայաստանի Պրեմիեր լիգայի խաղերին արձանագրությունում ընգրկված 23 ֆուտբոլիստներից 9-ը պետք է լինեն Հայաստանի Հանրապետությունում մարզված կամ Հայաստանի ազգային/տարբեր տարիքային հավաքականների անդամներ: Խաղադաշտում միաժամանակ պետք է լինեն Հայաստանի Հանրապետությունում մարզված կամ Հայաստանի ազգային/տարբեր տարիքային հավաքականների անդամ առնվազն 3 ֆուտբոլիստներ: Այս դրույթները խախտելու դեպքում թիմին գրանցվում է տեխնիկական պարտություն 0:3 հաշվով՝ բացառությամբ սույն հոդվածի 31.11 և 31.12 կետերում նշված դեպքերի:

**31.10** Առաջին խմբի առաջնության խաղերին արձանագրությունում ընդգրկված 23 ֆուտբոլիստներից 15-ը պետք է լինեն Հայաստանի Հանրապետությունում մարզված կամ Հայաստանի ազգային/տարբեր տարիքային հավաքականների անդամներ, իսկ խաղադաշտում միաժամանակ պետք է լինեն Հայաստանի Հանրապետությունում մարզված կամ Հայաստանի ազգային/տարբեր տարիքային հավաքականների անդամ 6 ֆուտբոլիստներ: Այս դրույթները խախտելու դեպքում թիմին գրանցվում է տեխնիկական պարտություն 0:3 հաշվով՝ բացառությամբ սույն հոդվածի 31.11 և 31.12 կետերում նշված դեպքերի:

**31.11** Խաղադաշտում գտնվող Հայաստանի Հանրապետությունում մարզված ֆուտբոլիստ(ներ)ի կարմիր քարտով հեռացվելու դեպքում խաղադաշտում գտնվող ՀՀ-ում մարզված ֆուտբոլիստների քանակը համալրման կարիք չունի: Տվյալ դեպքում թիմին տեխնիկական պարտություն չի գրանցվում:

**31.12** Այն դեպքերում, եթե ՀՀ-ում մարզված ֆուտբոլիստը խաղի ժամանակահատվածում վնասվածքի պատճառով անկարող է շարունակել խաղը, և թիմի փոխարինումների հնարավորությունները սպառվել են, ապա թիմը խաղը շարունակում է համապատասխանաբար պակաս քանակի ֆուտբոլիստներով: Տվյալ դեպքում թիմին տեխնիկական պարտություն չի գրանցվում:

**31.13** Այն դեպքում, երբ հակադոպինգային կանոնների խախտման համար թիմի հայտացուցակից հեռացվել է (են) ֆուտբոլիստ(ներ), և տվյալ ակումբը հնարավորություն չի ունեցել ապահովել 20.04, 20.05, 20.07, 20.11 և 20.15 կետերով սահմանված

պահանջները, ապա տվյալ ակումբը պարտավոր է պահպանել (ապահովել) 31.09 և 31.10 կետերով սահմանված դրույթները:

**31.14** Յուրաքանչյուր թիմի կողմից խաղի արձանագրությունում կարող են ներկայացվել նվազագույնը 7 ֆուտբոլիստ: Եթե Հայաստանի Պրեմիեր լիգայի խաղի արձանագրությունում ընդգրկված է 7 ֆուտբոլիստ, ապա ՀՀ-ում մարզված պետք է լինեն նրանցից առնվազն 3-ը, իսկ Առաջին խմբի առաջնության խաղի արձանագրությունում՝ առնվազն 5-ը: Արձանագրությունում նշված ֆուտբոլիստների ցանկացած այլ քանակի դեպքում՝ ՀՀ-ում մարզվածների քանակը հաշվարկվում է սույն հոդվածի 31.09 և 31.10 կետերում սահմանված կերպով:

**31.15** Խաղերին մասնակցելու իրավունք ունեն 16 տարին լրացած պրոֆեսիոնալ ֆուտբոլիստները՝ բացառությամբ 31.16 կետով սահմանված դրույթի:

**31.16** Խաղին կարող են մասնակցել 15 տարին լրացած պրոֆեսիոնալ կարգավիճակ ունեցող ֆուտբոլիստներ՝ բուժհաստատության տեղեկանքով, որի բնօրինակը խաղից առաջ պետք է ներկայացվի մրցավարական անձնակազմին:

**31.17** Խաղին կարող են մասնակցել տվյալ ակումբում գրանցված սիրողական ֆուտբոլիստի կարգավիճակ ունեցող 15-17 տարեկան ֆուտբոլիստներ բուժհաստատության տեղեկանքով, որի բնօրինակը խաղից առաջ պետք է ներկայացվի մրցավարական անձնակազմին:

**31.18** Թիմի անձնակազմի անդամները որպես ֆուտբոլիստ հանդես գալու իրավունք չունեն:

**31.19** Խաղի ընթացքում տեխնիկական գոտում գտնվելու և պահեստայինների նստարանին նստելու իրավունք ունեն միայն խաղի արձանագրությունում նշված անձինք:

**31.20** Արգելվում է ծխելը մարզադաշտի տեխնիկական գոտում, ինչի նկատմամբ հսկողությունը պետք է իրականացվի դաշտի տեր ակումբի անվտանգության աշխատակցի կողմից՝ ակումբի կարգադրիչների օգնությամբ:

**31.21** Հայաստանի Պրեմիեր լիգայի մասնակից թիմերի կազմում խաղին կարող են մասնակցել միևնույն ակումբի Առաջին խմբի առաջնության մասնակից թիմի ֆուտբոլիստները՝ առանց քանակային սահմանափակման:

**31.22** Առաջին խմբի առաջնության մասնակից թիմերի կազմում խաղին կարող են մասնակցել միևնույն ակումբի պատանեկան թիմերի առաջնության մասնակից թիմի

ֆուտբոլիստները՝ առանց քանակային սահմանափակման՝ բժշկական բուժհաստատության բժշկի կողմից ստորագրված և կնքված տեղեկանքի առկայության դեպքում:

**31.23** Առաջին խմբի առաջնության մասնակից թիմերի կազմում միաժամանակ խաղադաշտում կարող են գտնվել 23 տարեկանից բարձր առավելագույնը 5 ֆուտբոլիստներ՝ բացառությամբ Առաջին խմբի առաջնության մասնակից այն թիմերի, որոնց ակումբը ներկայացված չէ Հայաստանի Պրեմիեր լիգայում:

**31.24** Առաջին խմբի առաջնության մասնակից թիմերի կազմում կարող են մասնակցել միևնույն ակումբի ՀՊԼ-ն ներկայացնող թիմից առավելագույնը 5 ֆուտբոլիստ:

**31.25** Արգելվում է սույն կանոնակարգով սահմանված կարգով որպես ակումբի առաջին թիմի գլխավոր մարզիչ չգրանցված անձի, ներառյալ ակումբի մեկ այլ պաշտոնում գրանցված անձի կողմից, Առաջին թիմի գլխավոր մարզչի պարտականությունների փաստացի կատարումը մեկ մրցաշրջանի ընթացքում երկուսից ավելի անգամ, ինչպես նաև ակումբի կողմից տվյալ անձի պարբերաբար ներկայացումը որպես ակումբի առաջին թիմի գլխավոր մարզիչ (ներառյալ համացանցում, տպագիր մամուլում, փաստաթղթերում և այլ եղանակներով):

Սույն կետը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ սույն կանոնակարգով սահմանված կարգով որպես ակումբի առաջին թիմի գլխավոր մարզիչ գրանցված անձը խաղին բացակայում է որակազրկման կամ այլ օբյեկտիվ պատճառներով, և նրա փոխարեն սահմանված կարգով առաջին թիմի գլխավոր մարզչի համապատասխան գործառույթներն իրականացնում է առաջին թիմի գլխավոր մարզչի օգնականը:

**31.26** Ակումբի մանկապատանեկան թիմում հայտավորված մարզիչն իրավունք ունի հայտավորվել նաև պրոֆեսիոնալ մրցումներին մասնակցող թիմի անձնակազմում միայն այն դեպքում, երբ առկա է համատեղությամբ աշխատանք կատարելու համապատասխան հիմք:

## Հոդված 32. Խաղի արձանագրություն

**32.01** Յուրաքանչյուր խաղ պետք է ունենա արձանագրություն:

**32.02** Արձանագրության առաջին մասը կազմվում է խաղի մասնակից ակումբների կողմից: Ակումբների ներկայացուցիչները խաղասկզբից ոչ ուշ, քան 60 րոպե առաջ

Ֆուտբոլի կառավարման համակարգում պետք է մուտքագրեն խաղի արձանագրության իրենց հատվածը: Յուրաքանչյուր ակումբ մուտքագրում է խաղին մասնակցող հիմնական և փոխարինող (պահեստային) ֆուտբոլիստներին և նրանց մարզաշապիկի համարները, ինչպես նաև թիմի անձնակազմի անդամներին: Եթե տեխնիկական պատճառներով հնարավոր չէ լրացնել խաղի արձանագրությունը Ֆուտբոլի կառավարման համակարգում, ապա արձանագրության առձեռն տարբերակը (ՀՖՖ Մրցավարական և տեսչական բաժնի կողմից նախապես ակումբներին տրամադրված ձևաթղթի վրա) պետք է լրացվի ակումբի կողմից և տրամադրվի մրցավարական անձնակազմին:

**32.03** Արձանագրության մեջ կարող են նշվել միայն այն ֆուտբոլիստները և թիմի անձնակազմի այն անդամները, ովքեր հայտավորված են և որակազրկված չեն տվյալ խաղին մասնակցելու համար: Չհայտավորված և որակազրկված ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի անդամ/ների/ խաղին մասնակցության պատասխանատվությունը կրում է տվյալ ակումբը:

**32.04** Ակումբների և մրցավարի կողմից կազմված արձանագրությունները միացվում են և համարվում են խաղի մեկ միասնական արձանագրություն:

**32.05** Մրցավարը խաղավարտից հետո առավելագույնը մեկ ժամվա ընթացքում կազմում է խաղի արձանագրությունը՝ մուտքագրելով այն Ֆուտբոլի կառավարման համակարգում: Եթե տեխնիկական պատճառներով հնարավոր չէ լրացնել հաշվետվությունը Ֆուտբոլի կառավարման համակարգում, ապա մրցավարը պետք է արձանագրությունը լրացնի գրավոր, ներկայացնի այն ՀՖՖ մրցավարական և տեսչական բաժին, այնուհետև՝ 24 ժամվա ընթացքում, լրացնի իր հաշվետվությունն առցանց:

## Հոդված 33. Ֆուտբոլիստների փոխարինումները

**33.01** Պրոֆեսիոնալ մրցումների խաղերի շրջանակներում թույլատրվում է կատարել առավելագույնը 5 փոխարինում:

**33.02** Խաղի ընթացքի հաճախակի ընդհատումներից խուսափելու նպատակով՝ յուրաքանչյուր թիմ խաղի ընթացքում ունի միայն 3 հնարավորություն (դադար)՝ փոխարինում կատարելու համար: Ընդմիջման ժամանակ կատարված փոխարինումները չեն հանդիսանում վերոնշյալ իմաստով դադարների ժամանակ կատարված փոխարինումներ: Դադարների վերահսկումն իրականացվում է խաղը սպասարկող 4-րդ պաշտոնյայի կողմից:

**33.03** Եթե երկու թիմերն էլ փոխարինում կատարեն նույն պահին (ոչ ընդմիջմանը), սա կհաշվարկվի որպես յուրաքանչյուր թիմի 3 հնարավորություններից մեկականը:

**33.04** Չօգտագործված փոխարինումները և փոխարինման հնարավորությունները տեղափոխվում են լրացուցիչ ժամանակ, եթե խաղը տեղափոխվում է լրացուցիչ ժամանակ:

**33.05** Եթե Հայաստանի Գավաթի խաղարկության և Սուպերգավաթի խաղարկության խաղը տեղափոխվում է լրացուցիչ ժամանակ, ապա թիմերից յուրաքանչյուրը ստանում է փոխարինման և փոխարինումն իրականացնելու համար դադարի մեկ հավելյալ հնարավորություն: Փոխարինումներ կարող են կատարվել նաև մինչև լրացուցիչ ժամանակի մեկնարկը և լրացուցիչ ժամանակի ընդմիջմանը: Այս դեպքում կատարված փոխարինումները չեն հանդիսանում վերոնշյալ իմաստով դադարների ժամանակ կատարված փոխարինումներ:

**33.06** Սույն հոդվածով սահմանված փոխարինումների առավելագույն քանակը թիմի(երի) կողմից խախտելու դեպքում տվյալ թիմին(երին) ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կոմիտեի կողմից շնորհվում է տեխնիկական պարտություն 0:3 հաշվով:

**33.07** Խաղի ընթացքում միաժամանակ նախավարժանք կարող են անցկացնել մինչև 5 պահեստային ֆուտբոլիստներ, որի մասին վերջնական որոշումը նախախաղային խորհրդացության ընթացքում կայացնում են տվյալ խաղի մրցավարը և պատվիրակը՝ հաշվի առնելով մարզադաշտի փոխարինողների նախավարժանքի համար նախատեսված հնարավորությունները: Նշված գոտում նախավարժանքի ժամանակ կարող են գտնվել նաև արձանագրության մեջ նշված ֆիզիկական պատրաստվածության մարզիչները: Նախավարժանքին մասնակցող ֆիզիկական պատրաստվածության մարզիչները պետք է կրեն ֆուտբոլիստների հետ միանման գույնի ժիլետ, որի գույնը նախապես պետք է հաստատվի նախախաղային խորհրդակցության ընթացքում:

**33.08** Երկու թիմերի՝ խաղի հաստատված արձանագրությունները Ֆուտբոլի կառավարման համակարգ մուտքագրելուց հետո՝ մինչև խաղի սկզբնահարվածը, չի թույլատրվում կատարել փոփոխություններ՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝
ա) եթե հիմնական կազմում արձանագրության մեջ նշված 11 ֆուտբոլիստներից որևէ մեկն ի վիճակի չէ սկսել խաղը անսպասելի ֆիզիկական անկարողության պատճառով, ապա նա կարող է փոխարինվել միայն արձանագրությունում նշված 15 փոխարինողներից ցանկացած մեկով՝ պահպանելով սույն կանոնակարգի 31.09 և 31.10 կետերում սահմանված ՀՀ-ում մարզված ֆուտբոլիստների նվազագույն քանակը: Համապատասխան

փոխարինողը/ները կարող է/են փոխարինվել միայն հայտավորված ֆուտբոլիստներով, ով/ովքեր նշված չէ/չեն տվյալ խաղի արձանագրությունում: Այս պարագայում փոխարինողների քանակը չի նվազեցվում: Հիմնական կազմում արձանագրության մեջ նախապես նշված 11 ֆուտբոլիստներից այն ֆուտբոլիստը, ով անսպասելի ֆիզիկական անկարողության պատճառով փոխարինվել է մինչև խաղի սկզբնահարվածը, այլևս չի կարող նշված լինել տվյալ խաղի արձանագրության մեջ և, հետևաբար, խաղի ընթացքում չի կարող գտնվել տեխնիկական գոտում:

բ) Եթե խաղի արձանագրությունում նշված 12 փոխարինողներից որևէ մեկն անսպասելի ֆիզիկական անկարողության/վնասվածքի պատճառով ի վիճակի չէ մասնակցել խաղին, ապա նա/նրանք կարող է/են փոխարինվել միայն հայտավորված ֆուտբոլիստով/ներով, ով/ովքեր նշված չէ/չեն տվյալ խաղի արձանագրությունում:

գ) Եթե դարպասապահներից որևէ մեկն անսպասելի ֆիզիկական անկարողության /վնասվածքի պատճառով ի վիճակի չէ մասնակցել խաղին, ապա նա/նրանք կարող է/են փոխարինվել միայն հայտավորված դարպասապահներով/խաղացողներով, ով/ովքեր նշված չէ/չեն տվյալ խաղի արձանագրությունում: Տվյալ խաղի մեկնարկային կազմի դարպասապահին կարող է փոխարինել միայն պահեստային դարպասապահը կամ խաղացողը, իսկ հայտացուցակում կարող է/են ավելանալ միայն հայտավորված դարպասապահ/ներ կամ խաղացող/ներ, ով/ովքեր նշված չէ/չեն տվյալ խաղի արձանագրությունում:

**33.09** Վերը նշված դեպքերում մինչև տվյալ խաղի ավարտը, ակումբը պարտավոր է խաղի պատվիրակին ներկայացնել համապատասխան տեղեկանք՝ ստորագրված ակումբի բժշկի կողմից, որտեղ մանրամասն նկարագրված կլինի վնասվածքի բնույթը:

**33.10** Գլխուղեղի ցնցման կասկածի դեպքում մրցավարը դադարեցնում է խաղը, որպեսզի թույլ տա թիմի բժշկին զննել և գնահատել տուժած խաղացողի վիճակը՝ ըստ գործող ԻՖԱԲ խաղի կանոնների: Սկզբունքորեն դա պետք է տևի ոչ ավել, քան երեք րոպե, եթե լուրջ միջադեպը չի պահանջում խաղացողի բուժումն իրականացնել խաղադաշտում կամ անշարժեցնել խաղադաշտում՝ անմիջապես հիվանդանոց տեղափոխելու համար (օրինակ՝ ողնաշարի վնասվածք): Գլխի վնասվածք ստացած ցանկացած խաղացողի, ով պոտենցիալ գլխուղեղի ցնցման կասկածի զննման կարիք ունի, կթույլատրվի խաղը շարունակել միայն գնահատումից հետո, եթե մրցավարին դա հաստատի թիմի բժիշկը:

# ԳԼՈՒԽ 7: ՄԱՐԶԱՀԱԳՈՒՍՏԸ

## Հոդված 34. Մարզահագուստի գույները

**34.01** Առաջնությունների մասնակից ակումբները խաղաշրջանի մեկնարկից նվազագույնը 5 օր առաջ Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով ներկայացնում են իրենց տնային, արտագնա և, առկայության դեպքում, պահեստային մարզահագուստները (ներառյալ դարպասապահների մարզահագուստները), որը վերջնական հաստատում է ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը։Ակումբները խաղերին իրավունք ունեն մասնակցելու միայն ՀՖՖ-ի կողմից վերջնական հաստատված մարզահագուստով։

**34.02** Խաղերի ընթացքում հայտավորված բոլոր ֆուտբոլիստների մարզահագուստները պետք է լինեն միանման՝ սույն կանոնակարգի Գլուխ 7-ի պահանջների համապատասխան։

**34.03** Հոդված 34-36-ում նշված պահանջները պարտադիր են կատարման նաև ֆուտբոլիստի վերահայտավորման օրը։

## Հոդված 35. Խաղահամարները

**35.01** Թիմերի մարզահագուստի մեջքի հատվածի կենտրոնական մասում պարտադիր պետք է փակցված լինեն ֆուտբոլիստների խաղահամարները։ Խաղահամարները թույլատրվում է նաև փակցնել մարզահագուստի դիմացի մասում։

**35.02** Ֆուտբոլիստների խաղահամարները պետք է լինեն 1-ից մինչև 99-ի միջակայքում։ Կարող են օգտագործվել միայն ամբողջական թվեր։ 1-ին համարի ներքո պետք է գրանցված լինի թիմի դարպասապահը։

**35.03** Ֆուտբոլիսների խաղաշապիկների վրա գրված ազգանունները (կեղծանունները) առկայության դեպքում պետք է գրված լինեն այն գույնով, որով նշված են վերջիններիս խաղաշապիկների խաղահամարները, հստակ ընթեռնելի լինեն մրցավարական անձնակազմի, մեկնաբանների, հանդիսականների և հեռուստադիտողների համար ցերեկային լույսի և մարզադաշտի լուսավորության պայմաններում։

**35.04** Մեկ ֆուտբոլիստին կցված խաղահամարը պետք է մնա անփոփոխ առնվազն մինչև առաջնության ձմեռային դադարը։ Ակումբը կարող է փոփոխել ֆուտբոլիստների

խաղահամարները մինչև խաղաշրջանի գարնանային հատվածի առաջին պաշտոնական խաղին նախորդող օրը՝ գրավոր դիմելով ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտ:

## Հոդված 36. Մարզահագուստի ազգանունները

**36.01** Հայաստանի Պրեմիեր լիգայի մասնակից թիմերի մարզահագուստի մեջքի հատվածում՝ ֆուտբոլիստի խաղահամարների վերևում, պետք է փակցված լինեն ֆուտբոլիստների ազգանունները, իսկ առանձին դեպքերում՝ կեղծանունները:

**36.02** Ազգանունները պետք է գրված լինեն հայատառ կամ լատինատառ, միագույն, ընթեռնելի, ընդ որում՝ մարզահագուստի նկատմամբ սույն հոդվածով սահմանված լեզվի պահանջը ենթակա է կատարման ակումբի կողմից ամբողջ թիմում հայտավորված ֆուտբոլիստների նկատմամբ՝ որպես մեկ միասնություն:

**36.03** Ֆուտբոլիստի մարզաշապիկի վրա գրված ազգանունը և խաղահամարը պետք է համապատասխանեն տվյալ խաղի արձանագրությունում նշված տվյալ ֆուտբոլիստի ազգանվանը և խաղահամարին:

## Հոդված 37. Մարզահագուստի վրա տեղադրված գովազդը

**37.01** Մարզահագուստի վրա թույլատրվում է տեղադրել հետևյալ չափսերի գովազդ՝

ա) մարզաշապիկի դիմացի հատվածում հովանավորի տարբերանշանը կարող է լինել առավելագույնը 200 սմ$^2$, որը պետք է տեղադրված լինի կրծքավանդակի կենտրոնում,
բ) մարզաշապիկի մեջքի հատվածում՝ համարի ներքևի մասում, հովանավորի տարբերանշանը կարող է լինել առավելագույնը 100 սմ$^2$,
գ) մարզաշապիկի թևքի վրա հովանավորի տարբերանշանը կարող է լինել առավելագույնը 25 սմ$^2$,
դ) վարտիքի վրա վրա հովանավորի տարբերանշանը կարող է լինել առավելագույնը 25 սմ$^2$:

**37.02** Մարզահագուստի վրա արգելվում է տեղադրել գովազդ, որը պարունակում է քաղաքական, ռասսայական կամ կրոնական տարրեր:

**37.03** Մարզահագուստի վրա կարող է տեղադրվել գովազդ՝ համապատասխան ՀՀ Գովազդի մասին օրենքի:

**37.04** Հովանավորի գովազդը կարող է լինել ֆուտբոլիստների մարզահագուստի, նախախաղային մարզում կատարելու մարզաշապիկի և վարտիքի վրա թիմերի շարվելու կարգի ժամանակ:

**37.05** Եթե գնդակ վերադարձնող պատանի ֆուտբոլիստների, ֆուտբոլիստների նախախաղային մարզահագուստի, սպորտային հանդերձանքի վրա ակումբը ցանկանում է օգտագործել որևէ այլ տարբերանշան, որը մրցաշրջանից առաջ հաստատված չի եղել ՀՖՖ-ի կողմից, այլ կրում է մեկանգամյա բնույթ և օգտագործվելու է միայն տվյալ խաղի համար, ապա նախաձեռնող ակումբը խաղից նվազագույնը 2 օր առաջ պետք է գրավոր կերպով դիմի ՀՖՖ-ի Ֆուտբոլի դեպարտամենտին՝ անհրաժեշտ գրավոր համաձայնություն ստանալու նպատակով: Նախապես չնախատեսված առաջարկությունների դեպքում նախաձեռնող ակումբը խաղից առաջ պետք է դիմի տվյալ խաղի պատվիրակին՝ բանավոր համաձայնություն ստանալու նպատակով: Պատվիրակը պարտավոր է նախապես քննարկել ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի հետ և համաձայնության առկայության դեպքում միջոցառման անցկացման վերաբերյալ տալ բանավոր թույլտվություն:

**37.06** Եթե մրցաշրջանի ընթացքում մասնակից ակումբի հովանավորների կամ գործընկերների ցանկում տեղի են ունենում փոփոխություններ, ապա այդ ակումբը պետք է նոր հովանավորի կամ գործընկերոջ մասին ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտին ներկայացնի հաջորդ տնային հանդիպումից ոչ պակաս քան 7 օր առաջ:

**37.07** Ֆուտբոլիստներին արգելվում է խաղի ժամանակահատվածում ցուցադրել որևէ հաղորդագրություն, կարգախոս կամ պատկեր ներքնաշապիկի վրա:

## Հոդված 38. Խաղի մարզահագուստների հաստատումը

**38.01** Տնային կամ արտագնա մարզագահուստի փոփոխության վերաբերյալ անհրաժեշտ է խաղից ոչ ուշ, քան 2 օր առաջ տեղեկացնել ՀՖՖ-ին և մրցակից ակումբին: Ակումբների անհամաձայնության դեպքում վերջնական որոշումը պատկանում է ՀՖՖ-ին:

**38.02** Խաղից մեկ օր առաջ տվյալ խաղի պատվիրակը պետք է նախնական հաստատի տվյալ խաղի մարզահագուստների գույները՝ տեղեկացնելով երկու թիմերին և մրցավարական անձնակազմին: Մարզահագուստի գույների վերջնական հաստատումը պատվիրակի կողմից կատարվում է նախախաղային խորհրդակցության ժամանակ:

**38.03** Մրցող թիմերը պարտավոր են նախախաղային խորհրդակցությանը պատվիրակի պահանջի դեպքում ներկայացնել ակումբի կողմից նախապես ՀՖՖ-ին ներկայացված և ՀՖՖ-ի կողմից հաստատված տնային և արտագնա մարզահագուստները:

**38.04** Մրցող թիմերը պետք է ապահովեն տնային և արտագնա մարզահագուստների առկայությունը:

**38.05** Առաջնության բոլոր խաղերի ժամանակ մարզահագուստի գույների համընկման պարագայում մարզահագուստը փոխում է հյուր թիմը: Հյուր թիմի մարզահագուստի փոփոխությունից հետո գույների համընկման պարագայում մարզահագուստը փոխում է դաշտի տեր թիմը: Յուրաքանչյուր պարագայում թիմերի մարզահագուստների գույները չպետք է համընկնեն իրար: Եթե մարզահագուստների գույները համընկնում են և թիմերը չեն կարողանում ընդհանուր հայտարարի գալ գույների ընտրության հարցում, ապա վերջնական որոշումը կայացնում են խաղի պատվիրակը և մրցավարը:

**38.06** Տեխնիկական գոտում գտնվող թիմի անձնակազմի անդամները պետք է կրեն մրցող թիմերի մարզահագուստի գույների հետ չհամընկնող հագուստ:

**38.07** Մրցող թիմերի բժիշկները և մերսողները/կինեզիստները/ֆիզեոթերապիստները պետք է լինեն մարզահագուստով:

**38.08** Ֆուտբոլիստին արգելվում է խաղի ժամանակ կրել ցանկացած տիպի զարդ: Այն բացառիկ դեպքերում, երբ ֆուտբոլիստը կրում է որևէ զարդ, որն անհնար է հանել՝ առանց ֆիզիկական ցավ պատճառելու, խաղի մրցավարի թույլտվությամբ տվյալ ֆուտբոլիստը կարող է կրել այդ զարդը՝ բացառապես այն ծածկելու պարագայում:

# ԳԼՈՒԽ 8: ՄԵԴԻԱ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳ

## Հոդված 39. Բրենդավորում և հովանավորներ

**39.01** Հայաստանի Պրեմիեր Լիգայի մասնակից ակումբները պետք է մրցաշրջանի մեկնարկից առնվազն 15 օր առաջ ՀՖՖ Մարքեթինգի, առաջխաղացման և խթանման բաժին ներկայացնեն այն հովանավորների և գործընկերների ցուցակը, որոնք ներկայացված են լինելու տնային հանդիպումների ընթացքում տեղադրված գովազդային կողավահանակների, ինչպես նաև մամուլի ասուլիսների սրահներում և ֆլեշ ասուլիսների ընթացքում տեղադրվող backdrop-երի վրա: Ակումբը նույն ժամկետներում պետք է ներկայացնի գովազդի նախապես մշակված ձևաչափը՝ 6 մետր երկարությամբ և 1 մետր բարձրությամբ վահանակի շրջանակներում, ինչպես նաև բուն վահանակը՝ առաջին տնային հանդիպումից 7 օր առաջ: Հայաստանի Պրեմիեր Լիգայի հանդիպումների ընթացքում ակումբներին է պատկանում գովազդային կողավահանակների ընդհանուր մակերեսի 40%-ը: Մնացած 60%-ը տնօրինում է ՀՖՖ-ն: Եթե ակումբը չի նախատեսում որևէ հովանավորի կամ գործընկերոջ ներկայացվածություն իրեն հասանելիք գովազդային կողավահանակներում, ՀՖՖ-ն իրավունք է վերապահում տնօրինել դրանք իր հայեցողությամբ:

**39.02** Եթե մրցաշրջանի ընթացքում Հայաստանի Պրեմիեր Լիգային մասնակցող ակումբի հովանավորների կամ գործընկերների ցանկում տեղի են ունենում փոփոխություններ, ապա այդ ակումբը պետք է նոր հովանավորի կամ գործընկերոջ գովազդային կողավահանակի ձևաչափի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնի ՀՖՖ Մարքեթինգի, առաջխաղացման և խթանման բաժին հաջորդ տնային հանդիպումից ոչ պակաս, քան 7 օր առաջ: Նոր կողավահանակների, մամուլի ասուլիսների սրահների և ֆլեշ-հարցազրույցների backdrop-երի տպագրման ծախսերը հոգում է տվյալ ակումբը: Կողավահանակը պետք է տվյալ ակումբի տրամադրության տակ լինի տնային հաջորդ հանդիպման մեկնարկից առնվազն 24 ժամ առաջ:

**39.03** Հայաստանի Պրեմիեր Լիգայի մասնակից բոլոր ակումբները պետք է ապահովեն ՀՖՖ կողմից նախապես տրամադրված backdrop-ի և ֆլեշ-գոտու վահանակի առկայությունը մամուլի ասուլիսների սրահում և խառը գոտում: Հայաստանի Պրեմիեր Լիգայի հանդիպումների ընթացքում ակումբներին է պատկանում մամուլի ասուլիսների պաստառի (backdrop) և խառը գոտու պաստառի վրա առկա գովազդային տարածքի 40%-ը: Մնացած 60%-ը տնօրինում է ՀՖՖ-ն: Եթե ակումբը որևէ հովանավորի կամ գործընկերոջ

ներկայացվածություն չունի մամուլի ասուլիսների կամ խառը գոտու պաստառների վրա, ՀՖՖ-ն իրավունք է վերապահում տնօրինել դրանք իր հայեցողությամբ:

**39.04** Հայաստանի Պրեմիեր Լիգայի մասնակից ակումբները պարտավոր են ճիշտ օգտագործել մրցաշարի անվանումն ու տարբերանշանը թվային հարթակներում (այդ թվում՝ սոցցանցերում), ֆիզիկական կրիչների վրա (տպագրություն, մերչենդայզինգ և այլն): Ճիշտ կիրառումը պարտադիր է նաև ակումբի պաշտոնական նամակագրության, և հնարավոր այլ դեպքերում (մարզադաշտում աշխատող հաղորդավար և այլն):

**39.05** Դաշտի տեր ակումբը Հայաստանի Պրեմիեր Լիգայի խաղերի ընթացքում պարտավոր է ապահովել խաղադաշտի գովազդային կողավահանակների պատշաճ տեղադրումն ու անթերի տեսանելիությունը հեռուստատեսային և ինտերնետային հեռարձակման ժամանակ (ոչ պատշաճ կիրառում է համարվում կողավահանակների ոչ պատշաճ փակցնելը, հնամաշությունը, կամ տարբեր իրերի առկայությունը դրանց առջև): Դաշտի տեր ակումբը պարտավոր է ապահովել նաև մամուլի ասուլիսների ու ֆլեշ-հարցազրույցների backdrop-երի պատշաճ կիրառումը և պահպանությունը Հայաստանի Պրեմիեր Լիգայի խաղերի ընթացքում: Դրանց վնասված լինելու դեպքում դաշտի տեր ակումբը պարտավոր է կարճ ժամանակահատվածում տեղեկացնել այդ մասին ՀՖՖ Մարքեթինգի, առաջխաղացման և խթանման բաժին:

**39.06** Հայաստանի Պրեմիեր լիգայի հանդիպումների մեկնարկից առնվազն 2 ժամ առաջ դաշտի տեր թիմը պետք է ապահովի գովազդային կողավահանակների՝ ՀՖՖ մարքեթինգի, առաջխաղացման և խթանման բաժնի կողմից նախապես ներկայացված շարվածքը:

**39.07** Հայաստանի Պրեմիեր Լիգայի խաղերի մեկնարկից ոչ ուշ, քան 15 րոպե առաջ (երկու թիմերի նախավարժանքից անմիջապես հետո) դաշտի տեր ակումբը պետք է ապահովի մրցաշարի բրենդավորմամբ կամարի առկայությունը խաղադաշտում՝ վիճականահանության նետման համար: Գնդակ վերադարձնող պատանի ֆուտբոլիստներից երկուսը պետք է լինեն կամարի կողքին՝ ապահովելով, որպեսզի այն քամու կամ այլ պատճառներով չընկնի: Կամարի պատշաճ պահպանումը դաշտի տեր թիմի պարտականությունն է:

**39.08** Հայաստանի Պրեմիեր Լիգայի հանդիպումների մեկնարկից առաջ մրցաշարի բրենդավորված գնդակի տակդիրը պետք է տեղադրված լինի վազքուղու վրա՝ թունելի դիմաց: Հանդիպման գլխավոր մրցավարը, տակդիրի վրայից վերցնելով գնդակը, պետք է թիմերին հրավիրի խաղադաշտ: Գնդակի տակդիրի պատշաճ պահպանումը դաշտի տեր ակումբի պարտականությունն է:

**39.09** Մրցաշրջանի մեկնարկից առաջ Հայաստանի Պրեմիեր Լիգայի գլխավոր հովանավորի կողմից պահանջ ներկայացնելու դեպքում 32-րդ առաջնության մասնակից ակումբները պետք է խաղային մարզաշապիկների աջ թևքի վրա կրեն մրցաշարի տարբերանշանը:

**39.10** Մրցաշրջանի մեկնարկից առաջ Հայաստանի Պրեմիեր Լիգայի գլխավոր հովանավորի կողմից պահանջ ներկայացնելու դեպքում 32-րդ առաջնության մասնակից ակումբների պահեստային ֆուտբոլիստները պետք է խաղերին ներկայանան իրենց տրամադրված հատուկ բրենդավորված մարզումային ժիլետներով:

**39.11** Մրցաշարերին մասնակցող բոլոր ակումբները ՀՖՖ-ին են փոխանցում թիմի տարբերանշանի, ավանդական գույների, մարզաշապիկի ձևաչափի ամբողջության կամ դրանց հատվածների (ներառյալ հղումները մարզաշապիկի հովանավորներին և հանդերձանք արտադրողներին) անհատույց, ողջ ծավալով և ամբողջ աշխարհում ցանկացած իրավունքների ամբողջ տևողությամբ՝ ոչ առևտրային, գովազդային և/կամ խմբագրական և/կամ ՀՖՖ-ի կողմից ողջամտորեն որոշված նպատակներով օգտագործման և օգտագործման թույլտվության իրավունքները: ՀՖՖ-ն անմիջական կապ չի հաստատի առանձին խաղացողների կամ ակումբների և որևէ գործընկերոջ հետ: Հարցման դեպքում ակումբները պետք է անվճար ՀՖՖ-ին տրամադրեն բոլոր համապատասխան նյութերը, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերը և/կամ այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են ՀՖՖ-ին նման իրավունքները օգտագործելու համար՝ համաձայն սույն պարբերության:

## Հոդված 40. Խաղերի հեռարձակումը

**40.01** Հայաստանի Պրեմիեր Լիգայի, Առաջին խմբի առաջնության և Հայաստանի Գավաթի խաղարկության հանդիպումների հեռուստատեսային և առցանց հեռարձակման իրավունքը (ներառյալ ՀՀ կիրառելի և վերաբերելի նորմատիվ իրավական ակտ(եր)ի իմաստով) պատկանում է ՀՖՖ-ին կամ պաշտոնական հեռարձակողին (եթե այդպիսին առկա է):

**40.02** Արգելվում է Պրեմիեր Լիգայի մասնակից ակումբների կողմից հանդիպումների ընթացքում դրանց ամբողջական կամ հատվածային ուղիղ հեռարձակումը իրենց կամ մեկ այլ կազմակերպության պատկանող որևէ սոցիալական հարթակով:

**40.03** Ակումբները տնային մարզադաշտերում պարտավոր են ապահովել նկարահանման համար բավարար քանակի՝ ՀՖՖ Ենթակառուցվածքային կանոնակարգի պահանջներին համապատասխանող տեսախցիկների հարթակներ:

## Հոդված 41. Ֆլեշ հարցազրույցների և մամուլի ասուլիսների կազմակերպումը

**41.01** Դաշտի տեր ակումբը պարտավոր է պատշաճ կերպով նախապատրաստել և տրամադրել մարզադաշտի՝ մամուլի ասուլիսների անցկացման համար նախատեսված սրահը՝ ապահովելով նստատեղեր մեդիայի ներկայացուցիչների համար, սեղան և աթոռներ մամուլի ասուլիսների մասնակիցների համար, բարձր հարթակ տեսախցիկների համար, պատշաճ լուսավորություն տեսահեռարձակման և լուսանկարահանման համար, ձայնամեկուսացում:

**41.02** Հայաստանի Պրեմիեր Լիգայի խաղերի ընթացքում դաշտի տեր ակումբը պարտավոր է ապահովել ֆլեշ հարցազրույցների պատշաճ կազմակերպումն ու անցկացումը, մասնավորապես, բրենդավորված պաստառի տեղադրումը խաղի ավարտից անմիջապես հետո: Մրցակից ակումբների գլխավոր մարզիչները և ֆլեշ հարցազրույցի համար ընտրված ֆուտբոլիստը/ֆուտբոլիստները պարտավոր են խաղի ավարտից հետո՝ առավելագույնը 10 րոպեի ընթացքում, ներկայանալ ֆլեշ հարցազրույցին:

**41.03** Եթե որևէ ակումբի գլխավոր մարզիչը/ֆուտբոլիստը օտարերկրացի է, ապա ակումբները պետք է ինչպես մամուլի ասուլիսների, այնպես էլ ֆլեշ հարցազրույցների ընթացքում ապահովեն համապատասխան լեզվից հայերեն և հակառակը թարգմանելու անհրաժեշտ գիտելիքներով օժտված թարգմանչի մասնակցությունը: Այն դեպքերում, երբ գլխավոր մարզիչը խաղի ընթացքում հեռացվում է խաղադաշտից, վերջինս կարող է մասնակցել տվյալ խաղի հետխաղային մամուլի ասուլիսին: Այն դեպքերում, երբ գլխավոր մարզիչը որակազրված է, առողջական, անձնական կամ ընտանեկան պատճառներով ներկա չէ խաղին (վերոնշյալ հանգամանքների կրկնության դեպքում ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի պահանջով ակումբը պարտավոր է ներկայացնել համապատասխան փաստաթղթերը), ակումբները պետք է ապահովեն գլխավոր մարզչի պաշտոնակատարի պատշաճ մասնակցությունը: Եթե տվյալ ակումբի գլխավոր մարզչի պաշտոնակատարը օտարերկրացի է, ապա պետք է ապահովել վերոնշյալ պահանջներին համապատասխանող թարգմանչի մասնակցությունը:

**41.04** Հայաստանի Պրեմիեր Լիգայի և Հայաստանի Գավաթի խաղարկության մասնակից ակումբների առաջին թիմերի գլխավոր մարզիչները պարտավոր են խաղի ավարտից հետո ներկայանալ մամուլի ասուլիսներին: Եթե հանդիպումից հետո ներկա չէ մեդիայի որևէ ներկայացուցիչ/չկա ասուլիս անցկացնելու որևէ պահանջ, ակումբների ներկայացուցիչները, նախապես համաձայնեցնելով հանդիպման ՀՖՖ պատվիրակի հետ, կարող են չանցկացնել հետխաղային մամուլի ասուլիս կամ կարող են կազմակերպել մամուլի ասուլիսներ միայն իրենց հետևորդների համար՝ անձամբ ուղղելով իրենց հարցերը գլխավոր մարզչին:

**41.05** Մեդիայի ներկայացուցիչներն իրավունք չունեն մասնակցել flash-հարցազրույցներին: Դրանց անցկացման բացառիկ իրավունքը պատկանում է Հայաստանի Պրեմիեր Լիգայի հանդիպումների պաշտոնական հեռարձակողին:

**41.06** Դաշտի տեր ակումբը պարտավոր է ապահովել անվտանգության նորմերը՝ չթույլատրելով լրագրողական անցագրերով որևէ մեկի հասանելիությունը այն հատվածին (ենթադրաբար մարզադաշտի վազքուղի), որտեղ անցկացվում են ֆլեշ-հարցազրույցները:

## Հոդված 42. ԶԼՄ-ների հավատարմագրումը և տեղակայումը մարզադաշտում

**42.01** Հայաստանի Պրեմիեր լիգայի և Հայաստանի Գավաթի խաղարկության մասնակից ակումբները նշված մրցումների բոլոր հանդիպումների համար պետք է կիրառեն ԶԼՄ-ների հավատարմագրման համակարգ և թույլատրեն վերջիններիս մուտքը մարզադաշտ միայն հավատարմագրերի առկայության պարագայում:

**42.02** Հանդիպումների ժամանակ ԶԼՄ ներկայացուցիչները պետք է լինեն մարզադաշտում իրենց համար հատուկ առանձնացված տեղերում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ում սահմանված գծագրի:

**42.03** Մրցումներին մասնակից ակումբները պարտավոր են ֆոտոլրագրողների համար ապահովել տարբերիչ գույներով ժիլետներ և խաղի ժամանակ ապահովել նրանց ներկայությունը խաղադաշտում՝ համապատասխան Հավելված 1-ի գծագրի պահանջներին:

# ԳԼՈՒԽ 9: ԱԿՈՒՄԲԻ ԱՆՎԱՆՄԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ

## Հոդված 43. Ակումբի ինքնության և իրավական խմբի կառուցվածքի փոփոխությունը

**43.01** Պրոֆեսիոնալ մրցումների մասնակից ակումբի ինքնության (ակումբի անվանում, թիմի անվանում, կազմակերպաիրավական ձև, տարբերանշան, գույներ, իրավաբանական հասցե) փոփոխության գրանցումը թույլատրվում է միայն միջմրցաշրջանային հատվածում: Արգելվում է կատարել ակումբի ինքնության փոփոխություն խաղաշրջանի ընթացքում:

**43.02** Եթե ակումբի ինքնության և/կամ իրավական խմբի կառուցվածքի փոփոխության գործընթացում փոփոխվում է միայն ակումբի անվանումը և տարբերանշանը և/կամ գույները, իրավաբանական հասցեն, ապա անվանափոխության և իրավահաջորդության ճանաչման գործընթացը կատարվում է սույն Գլխում սահմանված քայլերի հաջորդականությամբ և ընթացակարգով:

**43.03** Եթե ակումբի ինքնության և/կամ իրավական խմբի կառուցվածքի փոփոխության գործընթացքում ակումբի ինքնության փոփոխության հետ մեկտեղ կամ առանց ինքնության փոփոխության տեղի է ունենում իրավական խմբի կառուցվածքի, վերահսկող կողմի և դրա անդամների, կազմակերպաիրավական ձևի փոփոխություններ կամ ակումբի վերակազմակերպում, ապա անվանափոխության և իրավահաջորդության ճանաչման գործընթացը կատարվում է սույն կանոնակարգի Հոդված 45-ի պահանջների և ընթացակարգի համաձայն:

**43.04** Ակումբները անվանման փոփոխության նպատակով կարող են դիմել ՀՖՖ-ին միայն հետևյալ պահանջներից որևէ մեկի բավարարման դեպքում՝

ա) ակումբի հիմնադրումից անցել է առնվազն 3 օրացուցային տարի, կամ

բ) ակումբի նախորդ անվանափոխությունից անցել է առնվազն 3 օրացուցային տարի:

## Հոդված 44. Ակումբի ինքնության (ակումբի անվանում, թիմի անվանում, տարբերանշան, գույներ, իրավաբանական հասցե) փոփոխությունը և դրա գրանցումը ՀՖՖ-ում

**44.01** Ակումբը պետք է գրավոր դիմի ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտին՝ հայտնելով ակումբի ինքնության (անվանում, տարբերանշան և/կամ գույներ, իրավաբանական

հասցե) փոփոխության մտադրության, դրա հիմնավոր պատճառների, ինչպես նաև նախընտրելի նոր անվանման մասին: Սույն գործընթացը պատշաճ կատարելու համար հարկավոր է ներակայացնել դիմում, որը պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունը.

ա) Առաջարկվող նոր անվանումը, որը պետք է համապատասխանի սույն հոդվածի 44.02 կետի պահանջներին,

բ) Անվանափոխության պատճառներն ու հիմքերը,

գ) Ակումբի իրավական խմբի կառուցվածքը անվանափոխությունից առաջ և ակնկալվող փոփոխությունից հետո,

դ) Ակումբի վերահսկող կողմի, նախագահի և սեփականատերերի տվյալները անվանափոխությունից առաջ և ակնկալվող փոփոխությունից հետո,

ե) Ակումբի իրավաբանական և գործունեության հասցեները անվանափոխությունից առաջ և ակնկալվող փոփոխությունից հետո,

զ) Ակումբի գույները անվանափոխությունից առաջ և հետո,

է) Ակումբի ղեկավարի կողմից հաստատված տեղեկանք՝ դիմումի ներկայացման օրվա դրությամբ ակումբի աշխատակիցների (այդ թվում քաղ. իրավական ծառայություններով ներգրավված անձանց և ֆուտբոլիստների), այլ ակումբների և ՀՀ հարկային և սոցիալական ապահովության պետական մարմինների նկատմամբ ֆինանսական պարտավորությունների մասին:

**44.02** Ակումբի առաջարկվող նոր անվանումը պետք է համապատասխանի առնվազն հետևյալ բոլոր պահանջներին՝

ա) չունենա որևէ համընկնում ՀՖՖ Ֆուտբոլի կառավարման կամակարգում նախկինում և/կամ ներկայում գրանցված որևէ ակումբի կամ թիմի անվանման հետ,

բ) չունենա որևէ համընկնում ՀՖՖ-ի կողմից կազմակերպած մրցաշարերին մասնակցած որևէ ակումբի կամ թիմի անվանման հետ,

գ) չպարունակի ՀՀ-ում գրանցված որևէ կոմերցիոն ընկերության անվանում,

դ) ասոցացվի Հայաստանի Հանրապետության որևէ տեղանվան կամ պատմամշակութային արժեքի անվանման հետ:

**44.03** Սույն հոդվածի 44.01 կետում նշված ակումբի դիմումի և այլ հիմնավորող փաստաթղթերի հիման վրա, ՀՖՖ Առաջնությունների կազմակերպչական կոմիտեն 10-օրյա ժամկետում անցկացնում է նիստ և քննարկում տվյալ ակումբի անվանափոխությունը թույլատրելու վերաբերյալ հարցը: ՀՖՖ Առաջնությունների կազմակերպչական կոմիտեն իրավունք ունի հաստատելու կամ մերժելու ակումբի կողմից առաջարկվող նոր անվանումը:

**44.04** ՀՖՖ առաջնությունների կազմակերպչական կոմիտեի թույլատվության դեպքում միայն ակումբը կատարում է ակումբի նոր անվան գրանցումը ՀՀ պետական մարմիններում:

**44.05** ՀՀ Պետական մարմիններում գրանցելուց հետո ակումբը դիմում է ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտին՝ ակումբի անվանափոխության, ինչպես նաև իրավահաջորդության հաստատման հարցը ՀՖՖ Գործադիր կոմիտեի քննարկմանը ներկայացնելու նպատակով: Ակումբը ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտին է ներկայացնում ակումբի ղեկավարի կողմից ստորագրված դիմում, պետական ռեգիստրի վկայականի քաղվածք և ՀՖՖ Առաջնությունների կազմակերպչական կոմիտեի որոշման պատճենը:

**44.06** Հայաստանի Պրեմիեր լիգայի հաջորդ մրցաշրջանում ակումբը նոր անվանմամբ իրավունք ունի մասնակցելու միայն վերոնշյալ գործընթացը անցնելուց և ՀՖՖ Գործադիր կոմիտեի կողմից հաստատման դեպքում:

**44.07** Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների մասնակից ակումբների թիմերի անվանումները պետք է համապատասխանեն հետևյալ բոլոր պահանջներին՝

ա) չունենա որևէ համընկնում ՀՖՖ Ֆուտբոլի կառավարման համակարգում նախկինում և/կամ ներկայում գրանցված որևէ ակումբի կամ թիմի անվանման հետ,

բ) չունենա որևէ համընկնում ՀՖՖ-ի կողմից կազմակերպած մրցաշարերին մասնակցած որևէ ակումբի կամ թիմի անվանման հետ,

գ) չպարունակի ՀՀ-ում գրանցված որևէ կոմերցիոն ընկերության անվանում,

դ) ասոցացվի Հայաստանի Հանրապետության որևէ տեղանվան կամ պատմամշակութային արժեքի անվանման հետ:

## Հոդված 45. Ակումբի վերակազմակերպումը կամ իրավական խմբի կառուցվածքի փոփոխությունները

**45.01** Ակումբը պետք է գրավոր դիմի ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտին՝ հայտնելով ակումբի ինքնության, իրավական խմբի կառուցվածքի, վերահսկող կողմի և դրա անդամների, կազմակերպաիրավական ձևի փոփոխության մտադրության մասին: Սույն գործընթացը պատշաճ կատարելու համար հարկավոր է ներակայացնել դիմում, որը պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունը.

ա) Ակումբի իրավական խմբի կառուցվածքի, վերահսկող կողմի և դրա անդամների, կազմակերպաիրավական ձևի փոփոխության

բ) Ինքնության փոփոխության դեպքում՝ առաջարկվող նոր անվանումը, որը պետք է համապատասխանի սույն Կանոնակարգի 44.02 կետի պահանջներին,

գ) Ինքնության փոփոխության դեպքում անվան փոփոխության պատճառներն ու հիմքերը,

դ) Ակումբի իրավական խմբի կառուցվածքը ակնկալվող փոփոխությունից առաջ և հետո,

ե) Ակումբի վերահսկող կողմի, նախագահի և սեփականատերերի տվյալները ակնկալվող փոփոխությունից առաջ և հետո,

զ) Ակումբի իրավաբանական և գործունեության հասցեները ակնկալվող փոփոխությունից առաջ և հետո,

է) Ակումբի ղեկավարի կողմից հաստատված տեղեկանք՝ դիմումի ներկայացման օրվա դրությամբ ակումբի աշխատակիցների (այդ թվում քաղ. իրավական ծառայություններով ներգրավված անձանց և ֆուտբոլիստների), այլ ակումբների և ՀՀ հարկային և սոցիալական ապահովության պետական մարմինների նկատմամբ ֆինանսական պարտավորությունների մասին:

**45.02** Սույն հոդվածի 44.01 կետում նշված ակումբի դիմումի և այլ հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ ՀՖՖ Առաջնությունների կազմակերպչական կոմիտեն 10-օրյա ժամկետում անցկացնում է նիստ և քննարկում տվյալ ակումբի անվանափոխությունը թույլատրելու վերաբերյալ հարցը: ՀՖՖ Առաջնությունների կազմակերպչական կոմիտեն իրավունք ունի հաստատելու կամ մերժելու ակումբի կողմից առաջարկվող նոր անվանումը:

**45.03** ՀՖՖ առաջնությունների կազմակերպչական կոմիտեի թույլտվության դեպքում միայն ակումբը կատարում է ակումբի նոր անվան գրանցումը ՀՀ պետական մարմիններում:

**45.04** ՀՀ Պետական մարմիններում գրանցելուց հետո ակումբը դիմում է ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտին՝ ակումբի անվանափոխության, վերակազմակերպման, իրավական խմբի կառուցվածքի փոփոխության, ինչպես նաև իրավահաջորդության հաստատման հարցը ՀՖՖ Գործադիր կոմիտեի քննարկմանը ներկայացնելու նպատակով: Ակումբը ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտին է ներկայացնում՝

ա) ակումբի ղեկավարի կողմից ստորագրված դիմում,

բ) պետական ռեգիստրի վկայականի քաղվածք,

գ) ՀՖՖ Առաջնությունների կազմակերպչական կոմիտեի որոշման պատճեն,

դ) դիմումի ներկայացման նախորդող ամսվա վերջին օրվա դրությամբ հաստատված անկախ աուդիտորական եզրակացություն՝ ակումբի ֆինանսական հաշվետվությունների ՖՀՄՍ-ների համապատասխանելիության վերաբերյալ,

ե) դիմումի ներկայացման օրացուցային ընթացիկ տարվա հունվարի 1-ից մինչև դիմումի ներկայացման նախորդող ամսվա վերջին օրվա ժամանակահատվածը ներառող հավաստումներ առ այն, որ ակումբը չունի որևէ ֆինանսական պարտավորություններ աշխատակիցների (այդ թվում քաղ. իրավական ծառայություններով ներգրավված անձանց և ֆուտբոլիստների) և այլ ֆուտբոլային ակումբների նկատմամբ,

զ) հարկ վճարողի միասնական հաշվի քաղվածք, որը կհավաստի ակումբի ֆինանսական պարտավորությունների բացակայությունը ՀՀ հարկային և սոցիալական ապահովության պետական մարմինների նկատմամբ՝ դիմումի ներկայացման նախորդող ամսվա վերջին օրվա դրությամբ:

**45.05** Հայաստանի Պրեմիեր լիգայի հաջորդ մրցաշրջանում ակումբը նոր անվանմամբ և նոր իրավական խմբի կառուվածքով իրավունք ունի մասնակցելու միայն վերոնշյալ գործընթացը անցնելուց և ՀՖՖ Գործադիր կոմիտեի կողմից հաստատման դեպքում:

## Հոդված 46. Իրավահաջորդությունը

**46.01** Ակումբների վերակազմակերպման դեպքում իրավահաջորդությունը կատարվում է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

**46.02** Եթե ակումբի վերակազմակերպումից կամ ինքնության փոփոխությունից առաջ ակումբը հանդիսանում է «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության անդամ, ապա անդամության փոխանցումը իրականացվում է ՀՖՖ Կանոնադրությամբ սահմանված ընթացակարգով:

# ԳԼՈՒԽ 10: ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## Հոդված 47. Պայմանագրի գրանցումը

**47.01.** Ֆուտբոլային սուբյեկտների միջև պայմանագրերը, պայմանագրերի փոփոխությունը, լրացումը և լուծումը, ֆուտբոլիստների կարգավիճակը և տեղափոխությունները կարգավորվում են ՀՖՖ Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխման կանոնակարգով:

## Հոդված 48. Վեճերի լուծումը

**48.01** Ֆուտբոլային սուբյեկտների միջև ծագած վեճերը, համաձայն ՀՖՖ կանոնադրության, քննարկվում և վերջնական լուծում են ստանում ՀՖՖ-ում:

**48.02** Պայմանագրային հարաբերությունների հետ կապված վեճերը քննվում են միայն ՀՖՖ-ում գրանցում ստացած պայմանագրերի առկայության դեպքում:

**48.03** Մրցումների անցկացման հետ կապված այն իրավահարաբերությունները, որոնք չեն կարգավորվում սույն Կանոնակարգով, ենթակա են կարգավորման ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի, ՖԻՖԱ-ի այլ նորմատիվ փաստաթղթերով:

## Հոդված 49. Թիմերի մասնակցությունը ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին

**49.01** Հայաստանի Պրեմիեր լիգայի 2023/2024 թթ. մրցաշրջանի չեմպիոն թիմն իրավունք է ստանում մասնակցելու 2024/2025 թթ. մրցաշրջանի ՈՒԵՖԱ-ի Չեմպիոնների լիգայի (այսուհետ նաև՝ ՉԼ) խաղարկությանը՝ համապատասխան ՈՒԵՖԱ-ի արտոնագրի առկայության դեպքում:

**49.02** Հայաստանի Գավաթի խաղարկության 2023/2024 թթ. մրցաշրջանի հաղթողն իրավունք է ստանում մասնակցելու 2024/2025 թթ. մրցաշրջանի ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին՝ համապատասխան ՈՒԵՖԱ-ի արտոնագրի առկայության դեպքում:

**49.03** Հայաստանի Պրեմիեր լիգայի 2023/2024 թթ. մրցաշրջանի արդյունքներով երկրորդ և երրորդ տեղերը զբաղեցրած թիմերը իրավունք են ստանում մասնակցելու 2024/2025 թթ. մրցաշրջանի ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին՝ համապատասխան ՈՒԵՖԱ-ի արտոնագրի առկայության դեպքում:

**49.04** Եթե Հայաստանի Գավաթը նվաճել է Հայաստանի Պրեմիեր լիգայի 2023/2024 թթ. մրցաշրջանի արդյունքով 1-ին, 2-րդ կամ 3-րդ տեղը զբաղեցրած թիմերից մեկը, ապա 2024/2025թթ. մրցաշրջանի ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցության իրավունքը փոխանցվում է Հայաստանի Պրեմիեր լիգայում 4-րդ տեղը զբաղեցրած թիմին:

**49.05** 2024/2025թթ. մրցաշրջանի ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցող ՀՖՖ-ի չորս թիմերից որևէ մեկի մասնակցությունից հրաժարվելու կամ համապատասխան ՈՒԵՖԱ-ի արտոնագիր չստանալու դեպքում ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերի մասնակցության իրավունքը փոխանցվում է Հայաստանի Պրեմիեր լիգայում հաջորդ տեղը զբաղեցրած թիմին՝ համապատասխան ՈՒԵՖԱ-ի արտոնագրի առկայության դեպքում:

## Հոդված 50. Այլ դրույթներ

**50.01** Սույն Կանոնակարգի որևէ դրույթի խախտումը կարող է առաջացնել ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգով սահմանված պատասխանատվություն:

**50.02** Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում ՀՖՖ Գործադիր կոմիտեի կողմից հաստատման պահից:

# ՀԱՎԵԼՎԱԾ 1: ԽԱՂԱԴԱՇՏԻ ԳԾԱԳԻՐԸ




1. Թիմերի ֆուտբոլիստների դիրքը խաղի մեկնարկից առաջ
2. Ֆոտոլրագրողների դիրքը խաղի մեկնարկից առաջ
3. Ֆոտոլրագրողների դիրքը խաղի մեկնարկից հետո
4. Ձեռքի տեսախցիկ (խաղից առաջ, խաղից հետո)
5. Դարպասների ետնամասի տեսախցիկ (գովազդային վահանակների հետևում կարող է տեղադրվել միայն հեռավար կառավարվող տեսախցիկներ)
6. Կիսադաշտի եզրագծի տեսախցիկ (կարող են նաև տեղադրվել լրացուցիչ տեսախցիկներ եզրագծի աջ և ձախ կողմերում՝ պահեստայինների նստարանից 8 մետր հեռավորության վրա)
7. 16 մետրանոց տեսախցիկ (տրիբունայում՝ հատուկ հարմարեցված հարթակի վրա)
8. Պահեստայինների նստարաններ

Գովազդային վահանակներ

# ՀԱՎԵԼՎԱԾ 2: 2023-2024 ՄՐՑԱՇՐՋԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՎԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. 2023-2024 մրցաշրջանի Հայաստանի Գավաթի խաղարկությունն անցկացվում է օլիմպիական մրցակարգով՝ սկսելով 1/16 եզրափակիչ փուլից:
2. Հայաստանի Գավաթի խաղարկությանը մասնակցում են ՀՊԼ մասնակից բոլոր թիմերը, Առաջին խմբի առաջնության այն թիմերը, որոնց մայր ակումբները ներկայացված չեն ՀՊԼ-ում, ինչպես նաև ՀՖՖ Սիրողական ֆուտբոլի Ա լիգայի առաջնության 2022-2023 մրցաշրջանի արդյունքներով առաջին երեք տեղերը զբաղեցրած թիմերը:
3. ՀԳԽ 1/16 եզրափակչին մասնակցում են ՀՊԼ նախորդ մրցաշրաջանում մրցաշարային աղյուսակում 9-րդ և 10-րդ տեղերը գրված թիմերը, նախորդ մրցաշրաջանի Առաջին խմբի հաղթող թիմը, տվյալ մրցաշրջանի Առաջին խմբի մասնակից թիմերը, ինչպես նաև Սիրողական ֆուտբոլի Ա լիգայի նախորդ մրցաշրաջանի առաջին երեք տեղերը զբաղեցրած թիմերը: 1/16 եզրափակիչ փուլի հաղթողները անցնում են 1/8 եզրափակիչ: ՀՊԼ 2022-2023 մրցաշրջանի 1-ից 8-րդ տեղերը զբաղեցրած թիմերը սկսում են պայքարը 1/8 եզրափակչից (բացառությամբ Հավելված 2-ի 4-րդ կետում նշված թիմերի):
4. Նախորդ մրցաշրջանի Հայաստանի գավաթակիրը և ՀՊԼ չեմպիոնը իրենց մասնակցությունը սկսում են 1/4 եզրափակչից: Եթե նախորդ մրցաշրջանի Հայաստանի գավաթակիրը և ՀՊԼ չեմպիոնը նույն թիմն է, ապա 1/4 եզրափակչից մասնակցում է նախորդ մրցաշրջանի գավաթի խաղարկության եզրափակչի մասնակից թիմը:
5. Հայաստանի Գավաթի խաղարկության բոլոր փուլերի (բացառությամբ՝ եզրափակչի) մասնակից զույգերը որոշվում են վիճակահանությամբ: Յուրաքանչյուր փուլի ավարտից հետո անցկացվում է հաջորդ փուլի վիճակահանությունը: Զույգերում առաջինը նշված թիմը հանդիպումն անցկացնում է սեփական հարկի տակ: Եզրափակչում դաշտի տիրոջ կարգավիճակը ևս որոշվում է վիճակահանությամբ: Եզրափակիչ հանդիպման կազմակերպման պատասխանատուն համարվում է ՀՖՖ-ն, սակայն եզրափակչում դաշտի տեր համարվող ակումբն ունենում է այն իրավունքները, որոնք վերապահված են դաշտի տեր թիմին՝ սույն կանոնակարգի դրույթներին համապատասխան:
6. Վիճակահանությանը ներկա է լինում յուրաքանչյուր ակումբից մեկական ներկայացուցիչ: Որևէ ակումբի ներկայացուցչի բացակայության պարագայում վիճակահանությունն անցկացվում է առանց այդ ներկայացուցչի:
7. Հայաստանի Գավաթի խաղարկության բոլոր հանդիպումներն անցկացվում են 1 խաղով: Եթե խաղի խաղի հիմնական ժամանակն ավարտվում է ոչ ոքի, ապա խաղի հիմնական ժամանակի ավարտից հետո (մինչև 5 րոպե ընդմիջմամբ) նշանակվում է 30 րոպե լրացուցիչ խաղաժամանակ՝ երկու խաղակես (15+15 րոպե տևողությամբ՝ առանց ընդմիջման): Եթե լրացուցիչ խաղաժամանակում խաղն ավարտվում է ոչ ոքի, ապա գործող ԻՖԱԲ խաղի կանոնների

համաձայն՝ նշանակվում է հետխաղյա 11 մետրանոց հարվածաշար: Լրացուցիչ խաղաժամանակի ընթացքում խաղի մասնակից թիմերը հնարավորություն ունեն կատարելու ևս մեկ փոխարինում:

8. Հայաստանի Գավաթի խաղարկության հանդիպումներին մասնակցած ֆուտբոլիստներին, այլ ակումբ տեղափոխվելու դեպքում, թույլատրվում է նոր թիմի կազմում մասնակցել 2023-2024 մրցաշրջանի Հայաստանի Գավաթի խաղարկության հաջորդող հանդիպումներին:

# ՀԱՎԵԼՎԱԾ 3: ԽԱՂԱԴԱՇՏԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՆԱԽԱՎԱՐԺԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ




Հասանելի չէ նախավարժանքի համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ խաղի պատվիրակն ու մրցավարը կայացնում են այլ որոշում՝ ելնելով ենթակառուցվածքի առանձնահատկություններից:

# ՀԱՎԵԼՎԱԾ 4: ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ VAR ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

## 1. Սահմանումներ

**Մրցավարի Վիդեո Օգնական համակարգ (VAR համակարգ)՝** Տեխնոլոգիական պարագաներ և միջոցներ, որոնք թույլ են տալիս ձայնագրել ուղիղ եթերի հեռարձակողի բոլոր տեսախցիկները՝ հետագայում հավաստագրված օպերատորի կողմից կրկնապատկերը ստանալու և մրցավարների որոշմանը օգնելու նպատակով: VAR-ը համակարգ է, որն օգնում է մրցավարին միայն «բացահայտ և ակնհայտ սխալի» կամ «լուրջ բացթողնված միջադեպի» դեպքում:

**Վիդեո Օպերացիոն Սենյակ (VOR)՝** Վայր, որտեղից աշխատում են VAR պաշտոնյաները, կրկնապատկերի օպերատորները և համակարգի գործողությունն ապահովող տեխնիկական այլ մասնագետները:

**Մրցավարի Վերանայման Գոտի (RRA)՝** Կողագծից դուրս գտնվող գոտի, որտեղ մրցավարը անհրաժեշտության դեպքում դիտում է կրկնապատկերները:

**Դաշտային Վերանայում (OFR)՝** Վիճահարույց դրվագի վերանայում «բացահայտ և ակնհայտ սխալի» դեպքում: Միայն մրցավարն է որոշում իրականացնել դաշտային վերանայում, թե ոչ:

**VAR պաշտոնյա (VMO)՝** Խաղի պաշտոնյաների տեսակ խաղի մրցավարների հետ մեկտեղ: Բաղկացած է Մրցավարի Վիդեո Օգնական (VAR)-ից և VAR Օգնականից:

**Մրցավարի Վիդեո Օգնական (VAR)՝** Խաղի՝ ՀՖՖ-ի կողմից նշանակված Մրցավարի Վիդեո Օգնական:

**Մրցավարի Վիդեո Օգնականի Օգնական (VAR օգնական)՝** Խաղի՝ ՀՖՖ-ի կողմից նշանակված VAR-ի օգնական:

**Կրկնապատկերի օպերատոր (RO)՝** ՀՖՖ-ի կողմից նշանակված համակարգի մասնագետ, ով լավագույն անկյունները գտնելով օգնում է վիդեո պաշտոնյաներին որոշում կայացնել: Տվյալ անձը չի հանդիսանում մրցավարական անձնակազմի անդամ:

**Բացահայտ և ակնհայտ սխալ (clear and obvious mistake)՝** Պահանջվում է դաշտում կայացրած որոշումը չեղարկելու համար:

**Վիդեո ստուգում (VAR check)՝** Գործընթաց, որով VAR-ն ավտոմատ կերպով ստուգում է բոլոր վերանայման որոշումները: Կարող է հանգեցնել դաշտում կայացրած որոշման հաստատմանը, որոշման փոփոխությանը փաստացի դրվագների վերաբերյալ կամ դաշտային վերանայման:

## 2. Շահագործման սկզբունքները

2.1 VAR համակարգն օգտագործվում է գործող ԻՖԱԲ խաղի կանոնների և ԻՖԱԲ-ի համապատասխան արձանագրության համաձայն՝ մրցավարին օգնելու համար:

2.2 Օգտվել VAR-ի խորհրդից թե ոչ, որոշում է միայն խաղի գլխավոր մրցավարը: Այդ որոշումը վերջնական է:

2.3 Միայն մրցավարը կարող է որոշել իրականացնել վարանայումը, թե՝ ոչ: VAR-ը և VAR-ի օգնականը կարող են միայն խորհուրդ տալ այն:

2.4 Ոչ մի այլ միջոց կամ համակարգ բացի պաշտոնական VAR համակարգից չի կարող օգտագործվել մրցավարի կողմից վարանայման համար: Խաղային դրվագներում կապված ընդունված կամ չեղարկված գոլերի հետ՝ հեռարձակողը պետք է օգտագործի նույն խաղից դուրս իրավիճակի գծերը, որոնք ձևավորվում են VAR համակարգի միջոցով:

2.5 VAR համակարգի ցանկացած անսարքություն, անհասանելիություն, համակարգի կիրառում կամ չկիրառում չպետք է կասկած առաջացնի մրցավարի որոշումների հանդեպ: Մրցավարի կայացրած որոշումները վերջնական են:

2.6 Մրցավարի սկզբնական որոշումը չի կարող փոխվել, եթե կրկնապատկերը ցույց չի տալիս, որ այն «բացահայտ և ակնհայտ սխալ էր»:

2.7 Վերջնական որոշումը միշտ կայացվում է գլխավոր մրցավարի կողից՝ հիմնվելով VAR-ից ստացած խորհուրդների/տվյալների վրա, կամ այն բանից հետո, երբ օգտագործվել է «Դաշտային Վերանայում»:

2.8. Կրկնապատկերի վերանայման համար ժամանակային սահմանափակում չկա:

## 3. VAR, VAR Օգնական

3.1 VAR-ը խաղի պաշտոնյա է, ով օգնում է Մրցավարին փոխել սկզբնական որոշումը, օգտագործելով վիդեո կրկնապատկերները: Նա օգնում է միայն «բացահայտ և ակնհայտ սխալի» դեպքում կամ «լուրջ բաց թողնված միջադեպի» դեպքում:

3.2 VAR-ը հետևում է խաղին Վիդեո Օպերացիոն Սենյակից VAR օգնականի հետ և կրկնապատկերի օպերատորի օգնությամբ/աջակցությամբ:

3.3 VAR-ն ունի անկախ մուտք հեռուստատեսային հեռարձակմանը և հասանելիություն հեռարձակողի բոլոր տեսախցիկներին: Այն նաև միացված է կապի համակարգին, որը օգտագործում են մրցավարը, մրցավարի մգնականները և խաղի չորրորդ պաշտոնյան:

3.4 VAR-ն ավտոմատ կերպով ստուգում է ցանկացած գոլի, 11 մետրանոցի, ուղիղ կարմիր քարտի որոշում, խաղացողների նույնականացումը, ովքեր ստացել են կարգապահանակ տույժ՝ օգտագործելով բոլոր հասանելի տեսախցիկները:

3.5 Եթե ստուգումը ցույց է տալիս «բացահայտ և ակնհայտ սխալ» կամ «լուրջ բաց թողնված միջադեպ», VAR-ը հայտնում է այդ մասին մրցավարին, ով որոշում է կայացնել «Վերանայում», թե ոչ:

3.6 VAR օգնականը խաղի պաշտոնյա է, ով օգնում է VAR-ին: Նրա հիմնական պարտականություններն են՝

- Դիտել հեռուստահեռարձակումը, երբ VAR-ը զբաղված է ստուգումով կամ վերանայումով
- Արձանագրում է բոլոր իրադարձությունները կապված VAR-ի դրվագների հետ և առաջացած ցանկացած խոչընդոտների մասին:
- Օգնում է VAR-ին Մրցավարի հետ կապ հաստատել, հատկապես երբ դա վերաբերում է այն պահին, երբ VAR-ը վերանայում է դրվագը և պետք է ասել մրցավարին, որպեսզի խաղը կանգնեցնի կամ հետաձգի վերսկսումը:
- Հաշվում է՝ որքան ժամանակ է գնացել/ծախսվել ստուգումների և վերանայման ժամանակ:

## 4. VAR համակարգի աշխատանքի ապահովում

4.1. Խաղի ժամանակ Վիդեո Օպերացիոն Սենյակում կարող են գտնվել միայն VAR-ը, VAR օգնականը, կրկնապատկերի օպերատորը և համակարգը սպասարկող աշխատակիցները:

Խաղացողները՝ այդ թվում պահեստայինները և փոխարինվածները և ակումբի պաշտոնյաները, Վիդեո Օպերացիոն Սենյակ մտնելու/մտնելու փորձ կատարելու համար հեռացվում են:

4.2 Միայն խաղի մրցավարը իրավունք ունի նայել կրկնապատկերը Մրցավարի Վերանայման Գոտում:

4.3 Վերանայման ընթացքում խաղացողները պետք է լինեն/մնան մարզադաշտում. պահեստայինները և ակումբի պաշտոնյաները պետք է գտնվեն մարզադաշտից դուրս՝ իրենց տեղերում:

4.4 Մրցավարի Վերանայման Գոտի մտնող/մտնելու փորձ կատարող խաղացողները՝ այդ թվում պահեստայինները և փոխարինվածները, ինչպես նաև մարզիչները և ակումբի պաշտոնյաները

ստանում են զգուշացում: Սույնը վերաբերում է նաև անընդհատ և ակնհայտորեն «դիտում» (հեռուստացույցի էկրան) ազդանշանը ցույց տալուն:

4.5 Վերանայումից հետո մրցավարի որոշումը ապացուցող համապատասխան կադրերը կամ դրվագները կարող են ցուցադրվել հեռուստատեսությունով: ՀՖՖ-ն իրավունք ունի ցանկացած ժամանակ որոշում կայացնել չցուցադրել կրկնապատկերը:

4.6 Ակումբները պետք է ապահովեն համակարգի, ինչպես նաև դրա հետ կապված սարքավորումների անվտանգությունը և անձեռնմխելիությունը: Յուրաքանչյուր ակումբ պետք է աջակցի ՀՖՖ-ին իր մարզադաշտում տեղադրելու և օգտագործելու ՀՖՖ-ի կողմից հաստատված համակարգը:

## 5. VAR -ի իրավասությունը

VAR համակարգը կարող է օգտագործվել միայն «բացահայտ և ակնհայտ սխալի» և «լուրջ բացթողնված միջադեպի» դեպքերում հետևյալ դրվագներում՝

**ա. Գոլ / գոլ չկա**

- գրոհը կազմակերպելիս կամ գոլը խփելիս հարձակվող թիմի կողմից կատարված խախտում (ձեռքով խաղ, խախտում, խաղից դուրս և այլն),
- գոլից առաջ գնդակը գտնվել է խաղադաշտից դուրս,
- գոլ / գոլ չկար որոշումներ,
- խախտում 11մ հարվածն իրականացնելիս դարպասապահի և/կամ հարվածն իրականացնողի կողմից կամ ներխուժում տուգանային հրապարակ հարձակվողի կամ պաշտպանի կողմից, ով անմիջականորեն ներգրավվում է խաղի մեջ, եթե 11 մ հարվածը հետ է մղվում դարպասաձողից, հեծանից կամ դարպասապահից:

**բ. 11մ հարված / 11մ հարված չկա**

- 11 մետրանոցից առաջ խախտում հարձակվող թիմի կողմից (ձեռքով խաղ, խախտում, խաղից դուրս և այլն),
- միջադեպից առաջ առաջ գնդակը գտնվել է խաղադաշտից դուրս,
- խախտման վայրը (տուգանային հրապարակի ներսում կամ դրսում),
- սխալ նշանակված 11մ հարված,
- սխալ չնշանակված 11մ հարված:

**գ. Ուղիղ կարմիր քարտ (ոչ երկրորդ դեղին քարտ/զգուշացում)**

- ԱԳՀՋ (հատկապես խախտման դիրքն ու այլ խաղացողների դիրքերը),
- շատ կոպիտ խախտում (կամ անգիտակցորեն կատարված խախտում),
- բռնարարք, կծել կամ թքել մեկ այլ անձի վրա,

- օգտագործում է վիրավորական, նվաստացուցիչ, անվայել խոսքեր կամ ժեստեր

**դ. Սխալ նույնականացում**

Եթե մրցավարը խախտում է արձանագրում, այնուհետև խախտում կատարած թիմի սխալ խաղացողի է դեղին կամ կարմիր քարտ ցույց տալիս, ապա խախտում կատարողի ինքնությունը կարող է վերանայվել. բուն խախտումը չի կարող վերանայվել, եթե այն կապված չէ գոլի, 11 մետրանոցի միջադեպի կամ ուղիղ կարմիր քարտի հետ:

## 6. Հատուկ պայմաններ

6.1 Եթե VAR-ը, VAR օգնականը և կրկնապատկերի օպերատորը չեն կարող սկսել կամ շարունակել խաղը, նրանց կարող են փոխարինել միայն մարդկանցով, ովքեր որակավորված են տվյալ աշխատանքը կատարելու համար: Համապատասխան անձանց բացակայության դեպքում խաղը սկսվում/շարունակվում է առանց VAR համակարգի:

6.2 VAR օգնականի համապատասխան փոխարինում չգտնելու դեպքում, խաղը սկսվում/շարունակվում է առանց VAR համակարգի: Բացառիկ դեպքերում, երկու ակումբների գրավոր համաձայնության դեպքում, խաղը կարող է սկսվել/շարունակվել միայն VAR-ի և կրկնապատկերի օպերատորի հետ:

6.3 Խաղում VAR համակարգը որևէ պատճառով օգտագործելու անհնարինությունը, այդ թվում սարքավորումների անսարքությունը, VAR-ի և VAR օգնականի իրենց պարտականությունները կատարելու անհնարինությունը, և այլն, հիմք չեն խաղը հետաձգելու համար:

6.4 Խաղի արդյունքը չի կարող չեղարկվել հետևյալ պատճառներով՝

- VAR համակարգի ձախողում,
- VAR-ի հետ կապված կայացրած սխալ որոշումներ,
- Դրվագը չդիտելու որոշում,
- Որոշումներ այն դրվագների վերանայման համար, որոնք VAR-ի իրավասության մեջ չեն մտնում ըստ ԻՖԱԲ-ի խաղի կանոնների:

| | |
|---|---|
| ***ՀՖՖ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (2023-2024 ՄՐՑԱՇՐՋԱՆ)*** | |
| *Հաստատված է՝ ՀՖՖ Գործադիր Կոմիտեի կողմից 06.07.2023թ.-ին* | *Ուժի մեջ է մտնում 06.07.2023թ.-ին* |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ
ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԲԱԺԻՆ
ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑ 27
ԵՐԵՎԱՆ, 0010, ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԵՌ. +374 11 88 88 08
ԷԼ. ՓՈՍՏ. COMPETITON@FFA.AM
WWW.FFA.AM